ԳԼՈԲՈՒՍ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

5(9)

ԵՐԵՎԱՆ

2009

ԳԼՈԲՈՒՍ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Թիվ 5 (9), 2009

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ
Գագիկ Հարությունյան

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐ
Աննա Ժամակոչյան
Ռուբեն Մելքոնյան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Էդուարդ Դանիելյան
Լուսինե Բաղրամյան
(պատասխանատու քարտուղար)
Խոնարհիկ Քարաուղլանյան
(պատասխանատու խմբագիր)
Սնակ Սարուխանյան
Տիգրան Հարությունյան

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՇԱՐՎԱԾՔ
Դիանա Գալստյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Հարությունյան
ՀՀ – Թուրքիա հարաբերությունների համատեքստը 3

Կարեն Վերանյան
Համաշխարհային տնտեսական ֆորում. «Համաշխարհային առևտրի խթանում 2008-2009թթ.» զեկույցները 11

Սերգեյ Մինասյան
Եվրամիության դերը հարավկովկասյան հակամարտությունների կարգավորման գործում 16

Աննա Ժամակոչյան
Ադրբեջանի հակահայկական ինֆոքաղաքականությունը 25

Սամվել Մարտիրոսյան
Հայկական բանակը հոգեբանական ճնշման ենթարկելու փորձեր 38

Արթուր Աթանեսյան
Հեյդար Ալիևի հիմնադրամի գործունեությունը տեղեկատվական ոլորտում 45

Դիանա Գալստյան, Արաքս Փաշայան
Ադրբեջանի որոշ հետազոտական կենտրոնների գործունեությունը 49

Վահրամ Միրաքյան
Ադրբեջանական հայալեզու հեռուստաալիք 59

Ռուբեն Մելքոնյան
Հայերի նկատմամբ թուրքական պետական քաղաքականության դրսևորումների շուրջ 63

Օհան Սասունյան
Հայացք Դիարբեքիրից՝ ուղղված կրոնափոխ հայ ընտանիքին 68

Խաղաղությունը պատերազմ է՝ պատերազմների
միջև ընկած ժամանակահատվածում:
Գեներալ Էրիխ Լյուդենդորֆ

ՀՀ – ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

Գագիկ Տեր-Հարությունյան

ՀՀ - Թուրքիա հարաբերությունների շուրջ ընթացող բանավեճերը, չնայած դրանցում առկա են նաև քաղաքական բնույթի շահարկումներ, ընդունել են համահայկական բնույթ: Արդյունքում՝ այդ խնդրում, հատկապես «արձանագրությունների» վերլուծության առումով, դժվար է գտնել կողմ կամ դեմ նոր փաստարկներ և հիմնավորումներ: Միևնույն ժամանակ, տպավորությունն այնպիսին է, որ դիվանագիտական հարաբերությունների հաստատման գործընթացը (կամ այդ գործընթացի առաջին փուլերից մեկը) հաճախ կամ բացարձակ «մռայլ», կամ էլ «վարդագույն» է ընկալվում: Նման մոտեցումները բնավ չեն նպաստում իրողության օբյեկտիվ գնահատման և, առավել ևս, մեր հետագա գործողությունների մշակման գործին: Խնդրի շուրջ ստեղծված տեղեկատվական իրադրությունը հուշում է, որ թերևս կարիք կա մեկ անգամ ևս փորձել մեկնաբանել ՀՀ - Թուրքիա հարաբերությունների համատեքստը և կողմերի դրդապատճառները:

«Լիցքաթափման» փուլ. Ցանկացած լուրջ քաղաքական խնդրի շուրջ քննարկումները ենթադրում են ելակետային աշխարհաքաղաքական իրավիճակի վերաբերյալ պատկերացումների հստակեցում: Համառոտակի այդ իրավիճակը կարելի է գնահատել որպես ժամանակավոր «լիցքաթափման» փուլ ընթացող «բազմաբևեռ սառը պատերազմում»[1]: Նախաձեռնությունն այս խնդրում, ելնելով բոլոր նախանշաններից, ամերիկյան է: Միացյալ Նահանգների իսթեբլիշմենթը, իրատեսորեն գնահատելով սեփական ընդհանրական ռեսուրսների նվազումը, «լիցքաթափումը» ծրագրել էր նախապես: Նման նախագծի իրականացման համար նախագահ ընտրվեց «խաղաղասեր» Բարաք Օբաման, որն, ի տարբերություն իր նախորդի, սկսեց իրագործել ոչ թե

[1] Նման միտումը բնորոշ էր նաև ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև ընթացող սառը պատերազմին. նախորդ դարի 70-ականներին սկսվեց այսպես կոչված «լիցքաթափման» *(«разрядка»-ի)* փուլը, որի ընթացքում այդ տերությունները ժամանակավոր պայմանավորվածություններ ձեռք բերեցին խաղի նոր կանոնների և շահերի ոլորտների բաժանման շուրջ: Այդ գործընթացը զուգորդվեց կողմերի միջև ռազմավարական նշանակության սպառազինության վերաբերյալ մի քանի պայմանագրերի կնքմամբ և Հելսինկյան պայմանագրի ընդունմամբ, որում ամրագրվեցին, մասնավորապես, Երկրորդ աշխարհամարտի արդյունքում Եվրոպայում ձևավորված սահմանները:

«կոշտ», այլ «փափուկ ուժի» ռազմավարությունը: Այսօր «լիցքաթափման» միտումներն արտահայտվում են բազմաթիվ գործընթացներում, որոնցից առանձնացնենք մի քանիսը.

- ԱՄՆ և նրա դաշնակիցների զինված ուժերը, մասամբ իրականացնելով «ղեկավարվող քաոսի ձևավորման» իրենց առաքելությունը Մերձավոր և Միջին Արևելքում, այսօր լքում են Իրաքը:
- Չնայած տարբեր ամբիոններից երբեմն հնչող ռազմատենչ հայտարարություններին, էապես բարելավվել են հարաբերությունները Միացյալ Նահանգների և Իրանի միջև. այսօր կարելի է ամրագրել, որ այդ երկրների միջև զինված ընդհարման հավանականությունը ոչ միայն էապես նվազել է, այլև ստեղծվել են երկուստեք համագործակցելու նախադրյալներ:
- ԱՄՆ-ում և ՆԱՏՕ անդամ երկրներում ակտիվացել են քննարկումները Աֆղանստանից զինված ուժերի դուրսբերման մասին[2]: Վերջնական քաղաքական որոշումներ այդ խնդրի շուրջ դեռևս չեն ընդունվել, սակայն ներկայիս զարգացումները հիշեցնում են Իրաքից զորքերի դուրսբերմանը նախորդող գործընթացները:
- Ինչ-որ չափով կարգավորվում են Միացյալ Նահանգներ – Ռուսաստան հարաբերությունները: Մասնավորապես՝ ԱՄՆ նախագահի որոշումը, որով նա հրաժարվեց հակահրթիռային համակարգեր տեղադրել Լեհաստանում և Չեխիայում, հանգեցրեց Ռուսաստանի որոշմանը Կալինինգրադի մարզում «Իսկենդերներ» չտեղակայելու վերաբերյալ:
- Փաստորեն ՆԱՏՕ-ն ընդունեց 2008թ. վրաց-ռուսական պատերազմի ռազմական արդյունքները և այդպիսով հրաժարվեց Վրաստանն այդ կազմակերպություն ընդունելու ծրագրերից:
- ԱՄՆ-ի և ՉԺՀ-ի միջև ընթանում են բանակցություններ (երբեմն՝ փակ ձևաչափում) ռազմավարական խնդիրների (օրինակ՝ գլոբալ տաքացման և տնտեսական բնույթի) շուրջ համագործակցություն հաստատելու նպատակով:
- Նկատելի է ԵՄ ձգտումը ԱՄՆ-ի և ՌԴ-ի հետ ավելի հաշվեկշռված հարաբերություններ ձևավորելու ուղղությամբ, տեղեկատվական դաշտում կարելի է հանդիպել ՆԱՏՕ–ՀԱՊԿ–ՇՀԿ-ի միջև համաձայնություններ ձեռք բերելու անհրաժեշտության մասին նյութերի:

[2] Այսօր Աֆղանստանում տեղի է ունենում իրադրության այսպես կոչված «իրաքիզացիա», քանի որ նախկին դաշտային զինված ընդհարումներին զուգահեռ (ինչը բնորոշ էր նաև խորհրդային օկուպացիայի տարիների մարտավարությանը), մեծ տեղ է սկսել գրավել մահապարտների «շահիդական» ահաբեկչության մարտավարությունը: Նկատենք, որ նման «ասիմետրիկ» մարտավարության դեմ պայքարելու համար առայժմ արդյունավետ մեթոդներ գոյություն չունեն, և արդյունքում՝ իրավիճակն այդ երկրում դուրս է գալիս վերահսկողությունից:

Խիստ համառոտ ներկայացված վերոնշյալ գործոնների թիվը կարելի է ավելացնել, սակայն այդքանն էլ բավարար է՝ վկայելու, որ ներկայումս բազմաբևեռ աշխարհի բոլոր հիմնական դերակատարները որոշակիորեն փորձում են այս կամ այն չափով հաշվի առնել միմյանց հավակնությունները և ավելի զիջողական մոտեցումներ ցուցաբերել: Նման տրամաբանության համատեքստում հայ–թուրքական և հայ-ադրբեջանական փաստացի հակամարտությունը (որն այլոց կողմից արդարացիորեն ընկալվում է որպես միասնական «փաթեթ») որոշակի խոչընդոտ է հանդիսանում ապագա աշխարհակարգի վերաբերյալ իրենց պատկերացումներն իրագործել փորձող մեծ տերությունների համար: Այդ հանգամանքն է, որ այսօր ակտուալացրել է ՀՀ-Թուրքիա հարաբերությունների կարգավորման խնդիրը, որն արտահայտվում է գլոբալ դերակատարների կողմից այդ գործընթացը «խրախուսելու» (երբեմն դա մեկնաբանվում է նաև որպես արտաքին ճնշում) տեսքով:

Այս ամենի առիթով նկատենք, որ, անշուշտ, կան իրադրություններ, երբ անգամ ոչ շատ մեծ ռեսուրսների տիրապետող երկիրը, ելնելով իր գերագույն ազգային շահերից, պարտավոր է դեմ գնալ ցանկացած միջազգային միտման: Սակայն կարծում ենք, որ հարաբերությունների վերահաստատման (և ոչ թե հաստատման, քանի որ Երրորդ հանրապետության առաջին տարիներին ՀՀ-Թուրքիա սահմանը բաց էր) գործընթացը չի կարելի դասել նման իրադրությունների շարքին: Ակնհայտ մարտահրավերների և ազգային-բարոյական գործոնների շարքում առկա են այլ հանգամանքներ, որոնք միտված են ՀՀ և ԼՂՀ ազգային անվտանգության մակարդակի բարձրացմանը: Դրանց թվին պետք է դասել նաև (ինչու ոչ) ռազմավարական դաշնակից Ռուսաստանի և արևմտյան գործընկերների հետ մեր ունեցած կառուցողական հարաբերությունների պահպանման կարևորությունը և գլոբալ միտումներին ադեկվատ լինելու անհրաժեշտությունը:

Հավելենք նաև, որ վերոհիշյալ «լիցքաթափման» տրամաբանությունը գործում է նաև Թուրքիայի պարագայում:

Թուրքիայի հնարավոր դրդապատճառները. Այս երկիրը հայերի, ինչպես նաև հույների և ասորիների նկատմամբ ցեղասպանություն կատարելու և իր հանցանքները չընդունելու պատճառով միջազգային հանրությունում մասամբ «որոնման մեջ գտնվող հանցագործի» կարգավիճակ է ձեռք բերել: Այդ իրողությունը մշտապես օգտագործվել է Թուրքիայի դեմ և, չնայած այն հանգամանքին, որ վերոնշյալ արձանագրություններում Ցեղասպանության վերաբերյալ խոսք չկա, ակնհայտ է, որ հարաբերությունների հաստատումը ՀՀ-ի հետ նպաստելու է Թուրքիայի «իմիջի» բարելավմանը: Դա մասամբ կնպաստի նաև թուրքերի՝ ԵՄ-ին անդամագրվելու գործընթացին, չնայած այդ խնդրի լու-

ծումը, հաշվի առնելով եվրոպական առաջատար երկրների ներկայիս տրամադրությունները, այսօր միտում ունի փոխադրվելու զուտ տեսական հարթություն:

Նկատենք նաև, որ Թուրքիան, ինչպես և նախկինում, շարունակում է մնալ «հիվանդ օրգանիզմ»: Չունենալով բավարար քաղաքակրթական ռեսուրսներ՝ այդ երկիրը չի կարողանում ինտեգրել իր տարածքում բնակվող տարբեր էթնոսների (քրդերին, հայերին, հույներին, վրացիներին, արաբներին և այլոց)[3] և այսօր, բնակչության ինքնության խնդրի հետ կապված, կանգնած է լուրջ հիմնախնդիրների առջև[4]: Հարաբերություններ հաստատելով հայերի հետ՝ թուրքական ընտրանին կարծես թե երկխոսություն վարելու պատրաստակամություն է ցուցադրում և այդպիսով փորձում մասնակիորեն մեղմել խնդիրը: Միևնույն ժամանակ, ՀՀ-ի հետ հարաբերություններ հաստատելու Թուրքիայի ձգտումը պայմանավորված չէ սոսկ ներքին հիմնախնդիրներով:

Այսօր Թուրքիայի քաղաքական-վերլուծաբանական ընտրանու շրջանակներում տարածում է գտնում «նեոօսմանիզմի» դոկտրինը (այն երբեմն անվանում են «Գյուլի դեկլարացիա», քանի որ հեղինակը ներկայիս նախագահն է[5]): Դոկտրինի հենքում ընկած է այն խիստ կասկածելի թեզը, թե Օսմանյան կայսրության օրոք տարածաշրջանում իրավիճակն ավելի բարվոք էր, քան ներկայումս, և որ անհրաժեշտ է այդ իրավիճակը վերականգնել, սակայն ոչ նախկին բռնատիրության տեսքով: Ըստ Միջազգային հարաբերությունների և ռազմավարական վերլուծությունների կենտրոնի տնօրեն Սինան Օհանի, Թուրքիան այն միակ երկիրն է, որը կարող է հավակնել Մերձավոր և Միջին Արևելքն արդիականացնողի դերին և ունակ է այդ տարածաշրջանը «հաշտեցնել» Արևմուտքի հետ[6]: Ելնելով նման դրույթներից՝ թուրքական նեոիմպերիա-

[3] Ըստ տարբեր աղբյուրների, ինքնության խնդիրը առկա է Թուրքիայի բնակչության մինչև 30%-ի մոտ:

[4] Այս հանգամանքը միակը չէ, որ խնդիրներ է ստեղծում Թուրքիայում: Ինչպես հայտնի է, այսօր ծայր աստիճան սրվել են հակասությունները հասարակության աշխարհիկ և կրոնական կողմնորոշում ունեցող հատվածների միջև: Տեղին է նշել, որ աղմուկ հանած «Էրգենեքոն»-ը, համաձայն *Global Research* կենտրոնի վերլուծաբանների, ամերիկյան նախագիծ է և ստեղծվել է դեռևս Առաջին սառը պատերազմի տարիներին, Թուրքիայի վրա ԽՍՀՄ հնարավոր հարձակման պարագայում գրավյալ տարածքներում պարտիզանական բնույթի դիմադրություն կազմակերպելու նպատակով: Կան բազմաթիվ վկայություններ նաև այն մասին, որ չափավոր իսլամիստների «Արդարություն և առաջադիմություն» կուսակցությունը նույնպես ամերիկյան մշակում է, և դրա հեղինակը հանրահայտ նեոկոն Փոլ Վուլֆովիցն է: Համաձայն որոշ դիտորդների, չի կարելի բացառել այն վարկածը, որ ներկայիս հակասությունները «աշխարհիկների» և «իսլամիստների» միջև Թուրքիայում հրահրվում են ամերիկյան այն ուժի կենտրոնների կողմից, որոնք գտնում են, որ այդ երկրի հզորացումը հակասում է ԱՄՆ շահերին:

[5] *С.В. Кизюков,* Внешнеполитические концепции республиканской Турции (Экспансионизм или самооизоляция), Бишкек, 2006.

[6] *Илья Герман*, Турция идет на восток, Эксперт, #26, с. 66, 2009.

լիստները ցանկանում են իրագործել այսպես կոչված «Երեք միջանցքների» աշխարհաքաղաքական և, ըստ ամենայնի՝ աշխարհագաղափարախոսական նախագիծը: Ծրագրում ներկայացված երկրները՝ Սիրիան, Լիբանանը, Հորդանանը, Եգիպտոսը (առաջին միջանցք), Իրաքը և Պարսից ծոցի երկրները (երկրորդ միջանցք), Իրանը և Պակիստանը (երրորդ միջանցք) Թուրքիայի գլխավորությամբ պետք է կազմեն մի ընդհանուր մեգաենթակառուցվածք, որը կներառի տրանսպորտային ճանապարհները, նավթամուղները և գազամուղները, էլեկտրացանցերը, կապը և ինտերնետը, բանկային համակարգը և այլն[7]:

Ակնհայտ է, որ նման նախագծերի առկայությունը, հատկապես ռազմավարական հեռանկարում հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման պարագայում, թուրքական կողմի համար խիստ ակտուալացնում է հայ-թուրքական սահմանի բացումը: Կարծում ենք, որ այս հանգամանքը պետք է հաշվի առնվի Թուրքիայի հետ դեռևս նոր սկսվող մեր հարաբերություններում:

Հնարավոր դրական գործոնները ՀՀ-ի համար. Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը կարող է ունենալ հետևյալ դրական հետևանքները.

Թուրքիա–Ադրբեջան հարաբերություններում այսօր հստակ նկատվում է վատթարացման միտում, և ՀՀ ու ԼՂՀ խնդրում նախկինում միասնական թուրք-ադրբեջանական ճակատում որոշակի ճեղքեր են գոյացել: Դրա մասին են վկայում ոչ միայն Բաքվի պաշտոնապես հնչող դժգոհությունները ՀՀ-Թուրքիա դիվանագիտական գործընթացների առիթով. գործնական հարթությունում Ադրբեջանում թուրքական տնտեսական ընկերությունները ցուցադրաբար և խիստ ստուգումների են ենթարկվում, խստացել է Թուրքիայի քաղաքացիների նկատմամբ անձնագրային ռեժիմը և այլն: Եթե անգամ ենթադրենք, թե նման գործողությունները հմուտ իմիտացիա են, իսկ իրականում գործում է սքողված պանթուրքական համերաշխությունը, ապա միևնույն է, ադրբեջանական ու թուրքական հանրությունների գիտակցությունում վերոնշյալ գործընթացները որոշակի բացասական հետք են թողնում: Այս ամենը խիստ կարևոր է ԼՂՀ խնդրի քաղաքական կարգավորման տեսակետից. հայտնի է, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նկատմամբ ագրեսիվ պլանների իրագործման փորձը հնարավոր է բացառապես Ադրբեջան-Թուրքիա սերտ համագործակցման պարագայում:

[7] Թուրքիայի գերհզորացման սցենարներին կարելի է հանդիպել նաև «Սթրաթֆոր» վերլուծական կազմակերպության հիմնադիր Ջորջ Ֆրիդմանի աղմուկ բարձրացրած գրքում (*տես՝* XXI век: до и после Третьей мировой войны (Сценарий американского футуролога), Политический класс, #5(53), с. 26, 2009): Սակայն, այդ սցենարները, ըստ մեզ, մշակվել են ավելի շուտ որպես նախազգուշացում արևմտյան հանրությանը:

Տրանսպորտային նոր ուղու բացման հնարավորությունները բավական շատ են քննարկվել մեր տեղեկատվական դաշտում, սակայն խնդրի հրատապությունը ՀՀ-ի համար չի նվազում. ճանապարհային այլընտրանքը թույլ կտա զգալիորեն թուլացնել մեր ապրանքաշրջանառության կախվածությունը վրացական գործոնից:

Ինչպես արդեն նշել ենք, դիվանագիտական հարաբերություններ հաստատելով Թուրքիայի հետ՝ ՀՀ-ն համահունչ կգործի գլոբալ լիցքաթափման գործընթացներին և միջազգային հանրությունում չի կորցնի վստահելի գործընկերոջ վարկը:

Միևնույն ժամանակ, շեշտենք, որ վերոնշյալ դրական հանգամանքները հնարավոր են միայն այն պարագայում, եթե ՀՀ-ն անհրաժեշտ որակներ ցուցաբերի դիվանագիտական, տնտեսական, տեղեկատվական և մշակութային մրցակցության պայմաններում: Կարծում ենք նաև, որ որպես ամենավատ հետևանք կարելի է դիտարկել ՀՀ - Թուրքիա խնդրի պատճառով Սփյուռքում անհանդուրժողականության սերմանումը և իրարամերժ ճամբարների գոյացումը:

Հայության համատեքստը. ՀՀ - Թուրքիա հարաբերությունների հնարավոր վերահաստատման գործընթացը, բնականաբար, լայն և երբեմն մերժողական արձագանք է ստացել Հայության տարբեր հատվածներում և որոշ քաղաքական ուժերի (հատկապես՝ ՀՅԴ) շրջանակներում: Նկատենք, որ մերժողական մոտեցումները Թուրքիայի նկատմամբ միանգամայն բնական երևույթ են Ցեղասպանություն ապրած ժողովրդի համար և առնվազն այդ պատճառով պետք է հարգանքով ու ըմբռնումով մոտենալ ցանկացած հայի նման դիրքորոշմանը: Կարելի է ավելացնել նաև, որ խնդրի նկատմամբ բացասական դիրքորոշումները պետք է որ էլ ավելի ամրացնեն ՀՀ պաշտոնական դիրքերը թուրքերի հետ բանակցություններում:

Բոլոր պարագաներում ակնհայտ է, որ ՀՀ - Թուրքիա հարաբերությունների հաստատման գործընթացը Հայությանն ուղղված մարտահրավեր է: Այն պահանջում է ադեկվատ ըմբռնում և, գլխավորը, ադեկվատ գործողություններ: Ստեղծված իրավիճակում Սփյուռքը պետք է ըմբռնումով մոտենա հայկական պետությունների անվտանգության հարցերին և, լինելով ավելի անկաշկանդ, ակտիվացնի իր պահանջատիրական ջանքերը[8]: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է դիվերսիֆիկացնել Հայության գործունեությունը՝ շեշտը չդնելով միայն Ցեղասպանության և պահանջատիրության խնդիրների վրա: Արդի աշխարհում մրցակցության գրավականն առաջին հերթին մտավոր-ինտելեկտուալ ռեսուրս-

[8] Տե՛ս, օրինակ, *Գագիկ Հարությունյան*, Հայության կազմակերպման տեղեկատվական խնդիրները, Գիտագործնական միջազգային գիտաժողով, Կիպրոս - Նիկոսիա, 18-19 ապրիլի 2008, Գիտական զեկուցումների ժողովածու, էջ 168:

ներն են, սակայն այդ ոլորտում այսօր մենք լուրջ հիմնախնդիրներ ունենք: Դա պետք է լինի մեր ազգային ընտրանու և ազգային կապիտալի առաջնահերթ նպատակը[9]:

«Արձանագրությունները». ՀՀ - Թուրքիա հարաբերությունների վերահաստատման ընդդիմախոսների հիմնավորումները գլխավորապես ուղղված են Ժնևյան արձանագրությունների ձևին ու բովանդակությանը: Պետք է ընդունել, որ որոշ կետեր, իրոք, մտահոգիչ են իրենց բովանդակությամբ, իսկ որոշների շարադրանքի ձևը, թերևս, չի համապատասխանում արդի դիվանագիտության և միջազգային իրավունքի պահանջներին: Վերջինի առիթով նկատենք, որ ՀՀ ԱԳՆ-ն հաճախ անփույթ է գործում, և, ըստ էության, այդ գերատեսչության «ապարատում», գլխավորապես նախկին նախարարների աշխատանքային ոճի շնորհիվ, չեն ձևավորվել նոր պայմաններին համապատասխան անհրաժեշտ ունակություններ:

Միևնույն ժամանակ, պետք է ընդունել, որ քաղաքականությունում ընդունվող փաստաթղթերը, անշուշտ, կարևոր են, բայց ամենևին՝ ոչ որոշիչ: Ոչ վաղ անցյալում՝ 1939 թվականին, կնքվեց Մոլոտով-Ռիբենտրոպի պակտը, ինչը, սակայն, չխանգարեց Երրորդ ռեյխին երկու տարի հետո տոտալ պատերազմ հայտարարել Խորհրդային Միությանը: Եվրոպայում անվտանգության և համագործակցության Հելսինկյան խորհրդակցության եզրափակիչ ակտը (1975թ. կնքված) նույնպես բավական արագ կորցրեց հրատապությունը, և այդ ժամանակահատվածի ամենանշանավոր քաղաքական միջոցառումներից մեկից հիշատակ մնացին միայն մարդու իրավունքները պաշտպանող Հելսինկյան խմբերը: Ակնհայտ է, որ միջազգային համաձայնագրերն արհամարհելու տասնյակ, հարյուրավոր օրինակներ կարելի է բերել: Այդ առիթով նկատենք, որ եթե համաշխարհային պատմությունն ընթանար համաձայն կնքված պայմանագրերի, ապա վաղուց ի վեր մեր երկրագնդում հաստատված կլինեին հավերժ խաղաղությունն ու բարօրությունը:

Որոշ հետևություններ. Ակնհայտ է, որ ՀՀ - Թուրքիա դիվանագիտական հարաբերությունների հնարավոր հաստատմանը չեն հետևելու ոչ ակնթարթային տնտեսական աճը, ոչ էլ ՀՀ և ԼՂՀ կապիտուլյացիան: Այս ամենը քաղաքական դինամիկ գործընթաց է, որից յուրաքանչյուր կողմը ցանկանում է քաղել առավել օգուտներ, իսկ օգուտների կամ վնասների երկկողմանի հաշվեկշիռն

[9] Նկատենք, որ համաձայն որոշ գնահատականների՝ Հայության ՀՆԱ-ն (այսինքն՝ հայկական կապիտալի շնորհիվ գոյացած համախառն արտադրանքը) միանգամայն համադրելի է Թուրքիայի Հանրապետության ՀՆԱ-ի հետ (մոտ $450 մլրդ): Այսինքն՝ մարտահրավերներին արձագանքելու տեսակետից կարծես թե մեր նյութական ռեսուրսները, անհրաժեշտ կազմակերպվածության պարագայում, պետք է որ բավարար լինեն այդ խնդիրները լուծելու համար:

էապես կախված կլինի նրանից, թե ով ինչ արդյունավետությամբ կգործի: Բոլոր պարագաներում տարածաշրջանային քաղաքականությունում ՀՀ արտաքին գերատեսչությունը պետք է շարունակի ամրապնդել ռազմավարական հարաբերություններն Իրանի հետ (որն, ի դեպ, Թուրքիայի սկզբունքային մրցակիցն է գրեթե բոլոր ոլորտներում), նոր որակ հաղորդել Հունաստանի հետ հարաբերություններին՝ այդպիսով սահմանափակելով Թուրքիայի ավելորդ հավակնությունները: Այդ ամենին զուգահեռ պետք է փնտրել նաև ոչ ավանդական գործընկերներ, ինչպիսին է, օրինակ, Իսրայելը, որը վերջին տարիներին լուրջ տարաձայնություններ ունի Թուրքիայի հետ: Համենայնդեպս, պետք է փաստել, որ հարաբերությունների հաստատումը Թուրքիայի հետ լուրջ մարտահրավեր է հայկական պետությունների և Հայության համար, ինչն էլ պետք է թելադրի առավելագույն չափով մոբիլիզացնել մեր ռեսուրսները:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՖՈՐՈՒՄ. «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԽԹԱՆՈՒՄ 2008-2009ԹԹ.» ԶԵԿՈՒՅՑՆԵՐԸ

Կարեն Վերանյան

«Համաշխարհային տնտեսական ֆորում» կազմակերպության մասին

1971թ. հիմնադրված «Համաշխարհային տնտեսական ֆորում»-ը *(World Economic Forum-WEF)* անկախ միջազգային կազմակերպություն է, որը գրանցված է որպես շահույթ չհետապնդող շվեյցարական հիմնադրամ: Այն իր առջև խնդիր է դնում դառնալ առաջատարը՝ միջազգային հանրության բազմաբնույթ գործունեության ներդաշնակության ամրապնդման ու խթանման, տարածաշրջանային ու ազգային արդյունաբերական ռեսուրսների աջակցման գործում: Այդ նպատակներին հասնելու համար կազմակերպությունը հանդես է գալիս նաև խորհրդատվական նախաձեռնություններով: Կազմակերպությունը լուրջ գործունեություն է ծավալում նաև համաշխարհային կրթության ու առողջապահության, էներգետիկ ու տնտեսական զարգացման ոլորտներում, կաշառակերության դեմ պայքարում և այլ բնագավառներում: «Համաշխարհային տնտեսական ֆորում» (այսուհետ՝ ՀՏՖ) կազմակերպության անդամ են աշխարհի շուրջ 1000 առաջատար ընկերություններ և ավելի քան 200 փոքր ձեռնարկություններ:

Ընդհանուր ակնարկ

Ս.թ. հունիսին ՀՏՖ-ն հրապարակեց «Համաշխարհային առևտրի խթանում – 2008թ.» վարկանիշային զեկույցը, իսկ վերջերս լույս տեսավ նաև հաջորդ՝ 2009թ. հաշվետվությունը: Փորձենք առավել հանգամանորեն անդրադառնալ այդ երկու զեկույցներում Հայաստանի և հարակից երկրների վարկանիշային համեմատական վերլուծությանը՝ ներկայացնելով առանձնացված երկրների ցուցանիշների փոփոխության դինամիկան:

ՀՏՖ-ն սույն հաշվետվությունների նախաձեռնման գործում առաջնորդվել է գերազանցապես այն կարգախոսով, ըստ որի՝ յուրաքանչյուր պետության տնտեսության զարգացման կարևոր խթանիչ կամ ցուցիչ է միջազգային առևտուրը: Կազմակերպության ղեկավարությունն այս զեկույցներով նպատակ է հետապնդում միջազգային հանրությունում բարձրացնել միջազգային առևտրի ու դրա խթանման հիմնահարցի կարևորությունը ազգային, տարա-

ծաշրջանային և ընդհանրապես միջազգային տնտեսական համակարգի կայուն զարգացման համատեքստում: Վարկանիշային հաշվետվությունների բուն առաքելությունն այն է, թե ինչպես և որքանով են արժևորվում և իրագործվում աշխարհի տարբեր երկրներում ու հասարակություններում առևտուրը խթանող գործոնները, սպասարկող ծառայություններն ու այդ ուղղությամբ տարվող քաղաքականությունը՝ աջակցելու ու հեշտացնելու սահմանային առևտուրը:

«Համաշխարհային առևտրի խթանման 2008-2009թթ.» զեկույցները պատրաստվել են կազմակերպության «Արդյունաբերական համագործակցության ծրագրի» *(Industry Partnership Programme)* շրջանակներում՝ սերտորեն համագործակցելով այնպիսի հեղինակավոր կազմակերպությունների ու ծրագրերի հետ, ինչպիսիք են «Համաշխարհային էքսպրես ասոցիացիան», «Միջազգային օդային տրանսպորտի ասոցիացիան», «Միջազգային առևտրի կենտրոնը», ՄԱԿ Առևտրի և զարգացման գիտաժողովը, «Համաշխարհային բանկը», «Առևտրի համաշխարհային կազմակերպությունը»:

«Համաշխարհային առևտրի խթանում» վարկանիշային զեկույցները կազմվել են չորս հիմնական ենթացուցիչներից ստացված արդյունքների համադրության միջոցով: Այդ ենթացուցիչներն են՝

1. շուկայի մուտք
2. սահմանային վարչարարություն
3. տրանսպորտային և հաղորդակցությունների ենթակառուցվածք
4. գործարար միջավայր:

«Համաշխարհային առևտրի խթանում 2008-2009թթ.». Հայաստան և հարակից երկրներ

Կազմակերպության երկու՝ 2008-2009 թթ. զեկույցներում էլ համաշխարհային առևտրի խթանման ցուցանիշներով Հայաստանի վարկանիշն առաջատար դիրքեր է արձանագրել ԱՊՀ երկրների շարքում: Այսպես, 2008թ. վարկանիշային հաշվետվությունում ներառված ԱՊՀ երկրների շարքում Հայաստանի վարկանիշը լավագույնն է (զեկույցներում ներառված չեն ԱՊՀ անդամ հանդիսացող բոլոր երկրները): Հայաստանը, զեկույցում ընդգրկված 118 երկրների շարքում զբաղեցնելով 61-րդ հորիզոնականը, բավական բարձր՝ 3,90 միավոր ունի: Ինչպես տեսնում ենք ստորև պատկերված առաջին աղյուսակից, ըստ ենթացուցիչների հաշվարկի, Հայաստանի վարկանիշն առավել աչքի է ընկել հատկապես *շուկայի մուտքի* և *գործարար միջավայրի* ենթացուցիչների պարագաներում՝ համապատասխանաբար կազմելով 4,73 և 4,59 միավոր: Հայաստանի ցածրագույն ենթացուցիչը *սահմանային վարչարարությունն է.* 87-րդ դիրք՝ 3,28 միավորով: Հայաստանն իր վարկանիշով բավական մոտ է Արևելյան Եվրոպայի այնպիսի երկրների ցուցանիշներին, ինչպիսիք են Բուլղարիան, Ռումինիան, որոնք Հայաստանին աննշան են գերազանցում:

ԱՊՀ երկրների շարքում իրենց լավագույն արդյունքներով Հայաստանին աննշան տարբերությամբ հաջորդում են Մոլդովան և Ուկրաինան, որոնք զբաղեցրել են համապատասխանաբար 62 և 68-րդ դիրքերը: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա վերջինիս ցուցանիշը զեկույցում ներառված ԱՊՀ երկրների շարքում 76-րդ դիրքում է՝ 3,68 միավորով՝ առաջ անցնելով Ռուսաստանից և միջինասիական երեք հանրապետություններից *(մանրամասն տե՛ս Աղյուսակ 1)*: Հարավային Կովկասի հարևան՝ ԱՊՀ-ին չանդամակցող երկրներից բավական բարձր արդյունք ունի Թուրքիան, որն ընդգրկված 118 երկրների շարքում զբաղեցնում է 38-րդ դիրքը՝ 4,53 միավորով:

Ի տարբերություն 2008թ., «Համաշխարհային առևտրի խթանում 2009թ.» հաշվետվությունում թեև Հայաստանը կրկին ԱՊՀ երկրների շարքում առանձնացել է բարձր ցուցանիշով, սակայն չի պահպանել առաջատարի դիրքը: Զեկույցում ներառված ԱՊՀ անդամ 8 երկրների շարքում Հայաստանի ցուցանիշը զիջում է միայն Մոլդովային, որը նախորդ հաշվետվության համեմատ զգալիորեն բարելավել է իր վարկանիշը (52-րդ դիրք, 4,15 միավոր): Հաշվետվությունում ընդգրկված 121 երկրների ցանկում Հայաստանն զբաղեցրել է 64-րդ դիրքը (3,81 միավոր)՝ որոշակի հետընթաց արձանագրելով նախորդ տարվա համապատասխան արդյունքի համեմատ: Ըստ ենթացուցիչների միավորների հաշվառման, 2008թ. համադրությամբ Հայաստանը հետընթաց է ունեցել 3 ենթացուցիչներով: Առաջընթաց է արձանագրվել միայն երրորդ՝ *տրանսպորտի և հեռահաղորդակցությունների ենթակառուցվածքի* ենթացուցչի պարագայում, երբ այդ ցուցանիշը 3 միավորի փոխարեն կազմել է 3,42: Աղյուսակում առանձնացված Արևելյան Եվրոպայի երկրների շարքում Հայաստանը գերազանցում է Բուլղարիային, որը զբաղեցնում է 72-րդ հորիզոնականը:

2009թ. հաշվետվությունում ԱՊՀ երկրների շարքում նախորդ տարվա համեմատությամբ զգալի առաջընթաց է գրանցվել Ադրբեջանի պարագայում, որն իր վարկանիշով գերազանցելով Ուկրաինային ու Ղազախստանին՝ ԱՊՀ երկրների շարքում զբաղեցրել է երրորդ դիրքը՝ զիջելով միայն Մոլդովային ու Հայաստանին: 2008թ. համեմատ Ադրբեջանի վարկանիշի բարձրացումը տեղի է ունեցել ի հաշիվ 3 ենթացուցիչների՝ ըստ միավորների հաշվառման. բացառություն է կազմում առաջին՝ *շուկայի մուտքի* ենթացուցիչը, որտեղ թեև հարավկովկասյան այս հանրապետության ցուցանիշն ունեցել է դիրքային բարելավում նախորդ տարվա համեմատ, սակայն միավորի պարագայում, ընդհակառակը, հետընթաց է գրանցվել *(մանրամասն տե՛ս Աղյուսակ 2)*:

Աղյուսակ 1

«Համաշխարհային առևտրի խթանում 2008թ.», Հայաստանն այլ երկրների շարքում

Երկիր	Ամփոփ ցուցիչ		Շուկայի մուտք		Սահմ. վարչար.		Տրանս./ հաղորդ.		Գործ. միջավայր	
	Դիրք	Ցուցիչ	Դիրք	Ցուցիչ	Դիրք	Ցուցիչ	Դիրք	Ցուցիչ	Դիրք	Ցուցիչ
ԱՊՀ երկրներ										
Հայաստան	61	3,90	43	4,73	87	3,28	77	3,00	53	4,59
Մոլդովա	62	3,88	26	4,99	75	3,65	76	3,05	101	3,83
Ուկրաինա	68	3,77	39	4,77	94	3,17	59	3,42	106	3,73
Ղազախստան	72	3,73	37	4,83	110	2,70	63	3,31	88	4,06
Ադրբեջան	76	3,68	65	4,15	112	2,62	64	3,30	46	4,66
Ռուսաստան	103	3,25	99	3,11	92	3,20	60	3,35	114	3,35
Տաջիկստան	104	3,13	83	3,74	117	2,40	117	2,02	69	4,38
Ուզբեկստան	105	3,06	114	2,46	116	2,43	84	2,94	65	4,43
Ղրղզստան	109	3,03	102	2,95	104	2,84	88	2,88	113	3,44
Արևել./Կենտր. Եվրոպայի երկրներ										
Էստոնիա	25	4,89	47	4,66	13	5,63	29	4,51	39	4,76
Չեխիա	32	4,70	33	4,94	31	4,86	34	4,18	38	4,84
Հունգարիա	34	4,67	41	4,76	33	4,79	38	4,10	28	5,05
Լիտվա	35	4,63	32	4,95	28	5,04	37	4,14	67	4,40
Լատվիա	43	4,45	48	4,55	40	4,54	39	4,08	51	4,61
Լեհաստան	45	4,35	42	4,73	37	4,62	46	3,70	73	4,35
Ռումինիա	57	4,04	61	4,25	61	4,02	49	3,64	81	4,24
Բուլղարիա	60	3,90	56	4,31	57	4,07	54	3,52	107	3,71
Այլ երկրներ										
Թուրքիա	38	4,53	8	5,40	47	4,28	44	3,79	50	4,64

Աղյուսակ 2

«Համաշխարհային առևտրի խթանում 2009թ.», Հայաստանն այլ երկրների շարքում

Երկիր	Ամփոփ ցուցիչ		Շուկայի մուտք		Սահմ. վարչար.		Տրանս./ հաղորդ.		Գործ. միջավայր	
	Դիրք	Ցուցիչ	Դիրք	Ցուցիչ	Դիրք	Ցուցիչ	Դիրք	Ցուցիչ	Դիրք	Ցուցիչ
ԱՊՀ երկրներ										
Մոլդովա	52	4,15	6	5,38	72	3,59	58	3,46	73	4,16
Հայաստան	64	3,81	42	4,25	87	3,25	61	3,42	64	4,33
Ադրբեջան	70	3,77	52	4,07	103	2,91	62	3,40	46	4,68
Ուկրաինա	71	3,76	24	4,68	95	3,07	60	3,43	85	3,87
Ղազախստան	93	3,49	45	4,20	119	2,27	63	3,39	77	4,10
Ղրղզստան	101	3,43	18	4,77	116	2,46	86	2,98	108	3,53
Ռուսաստան	109	3,29	113	3,16	106	2,82	56	3,49	96	3,70
Տաջիկստան	114	3,14	104	3,57	118	2,40	116	2,37	70	4,22
Արևել./Կենտր. Եվրոպայի երկրներ										
Էստոնիա	22	4,84	71	3,91	16	5,58	27	4,64	24	5,25
Հունգարիա	38	4,39	81	3,82	31	4,69	34	4,34	45	4,70
Լիտվա	40	4,36	60	3,97	42	4,46	36	4,28	41	4,75
Լատվիա	44	4,33	73	3,90	39	4,60	39	4,09	43	4,72
Ռումինիա	54	4,05	72	3,90	44	4,39	51	3,62	65	4,28
Լեհաստան	57	3,98	77	3,85	45	4,37	46	3,71	80	3,99
Բուլղարիա	72	3,76	55	4,02	69	3,64	48	3,68	97	3,68
Այլ երկրներ										
Թուրքիա	48	4,19	14	4,93	56	4,05	49	3,65	75	4,15

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Սերգեյ Մինասյան

Հարավային Կովկասը եզակի տարածաշրջան է այն իմաստով, որ այստեղ եվրոպական նոր քաղաքականության արժեքային մոտեցումները և հումանիտար իդեալներն ամենաինքնատիպ ձևով միահյուսվում են ինչպես աշխարհաքաղաքականության և աշխարհատնտեսության պրագմատիկ նկատառումներին, այնպես էլ Ռուսաստանի և իսլամական աշխարհի հետ Եվրոպայի փոխհարաբերությունների կարծրատիպերին: Սա հատկապես դրսևորվում է նաև նրանում, որ հարավկովկասյան տարածաշրջանային էթնոքաղաքական հակամարտությունների կարգավորման գործում Եվրամիության դերն աճում է:

ԵՄ Պրահայի գագաթաժողովը և 2009թ. մայիսին «Արևելյան գործընկերության» նոր ծրագրի վերջնական ընդունումը եվրոպական քաղաքականության նոր փուլ նշանավորեցին հետխորհրդային տարածքում, այդ թվում և Հարավային Կովկասում: Բնականաբար, ենթադրվում է, որ Եվրամիության «արևելյան» քաղաքականության նոր ձևաչափը և նոր հնարավորությունները կանդրադառնան նաև տարածաշրջանային էթնոքաղաքական հակամարտությունների կարգավորման և վերահսկման վրա:

Սպասման վիճակից անցում ներգրավվածության

Հիշեցնենք, որ ԵՄ-ը՝ որպես հարավկովկասյան հակամարտությունների միջնորդ և տարածաշրջանային քաղաքականությունում ներգրավված դերակատար, հանդես է գալիս մի փոքր ավելի վաղ ժամանակներից, դեռ 1990-ականների կեսերից: Հնարավոր է՝ առաջին լուրջ օրինակը Ֆրանսիայի մասնակցությունն էր Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ: Հաշվի առնելով Փարիզի հատուկ դերը եվրոպական (և համաշխարհային) քաղաքականությունում՝ Ֆրանսիայի մասնակցությունը ԵԱՀԿ ՄԽ-ում հիմնականում ոչ միայն ընկալվում էր որպես «անձնապես» Ֆրանսիայի մասնակցություն, այլ նաև որպես մի երկրի, որը զգալի չափով ներկայացնում էր Եվրամիության դիրքորոշումը:

1990-ական թվականները, սակայն, առավել բնութագրական են նրանով, որ Բրյուսելի քաղաքականությունը Հարավային Կովկասում ավելի շատ սպա-

սողական էր. Բրյուսելն ավելի շուտ հետևում էր հետխորհրդային տարածքի հատվածայնացմանը և փորձում որոշել սեփական աշխարհաքաղաքական նպատակները տարածաշրջանում և լուրջ խաղաղարար նախաձեռնությունների չէր դիմում: ԵՄ ինստիտուցիոնալ ներգրավվածությունը հակամարտությունների կարգավորման և Հարավային Կովկասում տարածաշրջանային կայունության ապահովման խնդիրներում իրականություն դարձավ միայն մոտավորապես 2004թ. սկսած: Հենց այդ ժամանակ էլ ներկայացվեց «Եվրոպական հարևանության քաղաքականությունը» *(ENP):* ԵՄ գործունեությունը հարավկովկասյան հակամարտությունների կարգավորման գործում ավելի որոշակի և տեսանելի ձևեր ընդունեց 2006-ից սկսած, երբ ընդունվեցին հարավկովկասյան երեք երկրների հետ *ENP* շրջանակներում անցկացվելիք միջոցառումների Գործողությունների պլանները *(Actions Plans)*[1]*:*

Միևնույն ժամանակ, ակնհայտ է, որ ԵՄ-ը հակամարտությունների կարգավորման և տարածաշրջանային կայունության հարցերում միշտ տարբերակել է իր քաղաքականությունը Հարավային Կովկասի միջազգայնորեն ճանաչված բոլոր երեք երկրների հետ երկխոսությունում: Վրաստանի պարագայում և Աբխազիայում ու Հարավային Օսիայում միջնորդության փորձեր անելիս, մինչև 2008թ. օգոստոսյան վրաց-ռուսական պատերազմը, դա, օրինակ, դրսևորվում էր նրանով, որ ԵՄ-ը հակամարտային տարածաշրջաններում փորձում էր դիմակայել ռուսական ազդեցությանը: Հայաստանի առնչությամբ Եվրամիության խաղաղարար դերն ու օժանդակությունը չեն սահմանափակվում միայն Ղարաբաղյան հակամարտությամբ, այլ տարածվում են նաև հայ-թուրքական խնդիրների և Անկարայի ու Երևանի հարաբերությունների կարգավորման գործընթացի վրա: Եվ, վերջապես, Ադրբեջանի պարագայում Բրյուսելի ներգրավվածությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացներում զգալիորեն առնչվում է ԵՄ-ի համար կասպյան էներգետիկ պաշարների նշանակալիության հետ: Եվրոպացիները համառորեն ցանկանում են իրենց համար Ռուսաստանից անկախ այլընտրանքային էներգետիկ միջանցք ապահովել, և դա անդրադառնում է ոչ միայն Ղարաբաղյան կարգավորման հարցին նրանց մոտեցումների, այլ նաև Ադրբեջանում ժողովրդավարության և մարդու իրավունքների հետ կապված խնդիրներին առանձնահատուկ արձագանքելու վրա:

[1] Մանրամասն տե՛ս «Conflict Resolution in the South Caucasus: The EU's Role», Europe Report No173, International Crisis Group, 20 March 2006.

Բրյուսելը՝ Մոսկվայի և Թբիլիսիի միջև. 2003թ. «գունավոր հեղափոխության» հետևանքները

ԵՄ քաղաքականության ակտիվացման կարևոր փուլ հանդիսացավ 2003թ. Վրաստանի «գունավոր հեղափոխությունը»: Դա առանձնապես կարևոր էր Մոսկվային Բրյուսելի տարածաշրջանային դիմակայության տեսակետից: Ընդհանրապես, Բրյուսելի քաղաքականության մեջ Մոսկվայի հետ հակամարտությունը Հարավային Կովկասում խիստ էական գործոն է, որտեղ միահյուսվում են իռացիոնալ հակառուսական կարծրատիպերը և աշխարհաքաղաքական նշանակության ռացիոնալ նկատառումները (կապված ինչպես ազդեցության գոտիների, այնպես էլ Հարավային Կովկասով, Ռուսաստանը շրջանցելով, կասպյան ածխաջրածինների տեղափոխման ուղիների էներգետիկ դիվերսիֆիկացման որոնումների հետ): Իռացիոնալի և ռացիոնալի այս խառնուրդը ԵՄ հարավկովկասյան քաղաքականության մեջ, հատկապես 2003թ. «գունավոր հեղափոխությանը» հաջորդած առաջին տարիներին, հաճախ հակասության մեջ էր մտնում եվրոպական արժեհամակարգի և հակամարտությունների կարգավորման հումանիտար նկատառումների հետ:

Աբխազիայի և Հարավային Օսիայի հակամարտությունների վերաբերյալ ԵՄ դիրքորոշումը մոտավորապես 2004-ից սկսեց առավել հստակ հակառուսական ուղղվածություն ձեռք բերել: ԵՄ քաղաքականությունն արդեն որոշվում էր ոչ միայն և ոչ այնքան արժեքային (որտեղ, ըստ էության, Բրյուսելի համակրանքն ու մոտեցումները պետք է հավասարակշռվեին Վրաստանի տարածքային ամբողջականության պահպանման գերակայությունների միջև, բայց չհակասեին եվրոպական հումանիտար, տնտեսական և հասարակական դաշտում Աբխազիայի և Հարավային Օսիայի բնակչության ներգրավմանը), որքան աշխարհաքաղաքական ասպեկտներով: Ուստի, դա արտահայտվում էր հակառուսական Վրաստանին Բրյուսելի կողմից ցուցադրվող միակողմանի աջակցությամբ: Միևնույն ժամանակ, մերթ ընդ մերթ Արևմուտքում ևս, թեկուզև փորձագիտական մակարդակով, սկսեցին ի հայտ գալ (և շարունակում են ի հայտ գալ) քննադատական հայտարարություններ Հարավային Կովկասի չճանաչված հանրապետությունների (հատկապես Աբխազիայի և Հարավային Օսիայի) բնակչության նկատմամբ Բրյուսելի ոչ ռելևանտ մոտեցումների մասին[2]: Փորձագետները եվրոպական նախագծերում «չճանաչված» Աբխազիայի և Հարավային Օսիայի ավելի մեծ ներգրավվածության անհրաժեշտությունը փաստարկում էին նրանով, որ կանխվի դրանց ավելի մեծ ներգրավվածությունը Ռուսաստանի քաղաքական և տնտեսական տարածքում: Ընդգծենք, որ

[2] Տե՛ս, օրինակ, *Walter Kaufmann*, “A European Path for Abkhazia: Yesterday’s Pipe Dreams? ”, Caucasus Analytical Digest, No7, 25 June 2009 (available from www.res.ethz.ch/analysis/cad).

դա, Հարավային Օսիայի համեմատ, ավելի շատ դրսևորվում էր Աբխազիայի պարագայում, քանի որ այնտեղ ավելի զարգացած էին քաղաքացիական հասարակության ինստիտուտները, այն ավելի ինքնուրույն էր Մոսկվայից և աշխարհագրականորեն էլ նրա դիրքը ավելի շահեկան էր (թուրքական և սևծովյան գործոնների հաշվառմամբ)։ Ելնելով այն բանից, որ Ցխինվալի համար ռուսական վեկտորը գրեթե այլընտրանք չունի, եվրոպական հասարակական-քաղաքական դաշտ Հարավային Օսիայի ներգրավման հեռանկարները, անգամ մինչև 2008թ. օգոստոսյան պատերազմը, աննշան էին։

Ղարաբաղի պարագայում իրավիճակն արմատականորեն այլ է։ Արևմտյան քաղաքական էլիտայի ընկալումներում Լեռնային Ղարաբաղը երբեք կանգնած չի եղել Աբխազիայի, Հարավային Օսիայի կամ Մերձդնեստրի հետ մեկ շարքում, իսկ Ադրբեջանը երբեք չի դիտարկվել որպես այնպիսի անվերապահ արևմտամետ պետություն, ինչպիսին Վրաստանն է (և դրա համար էլ այն վայելում է Արևմուտքի ուղղակի աջակցությունը)։ Եվ բանն ամենևին միայն ԱՄՆ և եվրոպական երկրների հայ սփյուռքի դերը կամ հայկական արտաքին քաղաքականության կոմպլեմենտարիզմի հատուկ արդյունավետությունը չէ, որը փորձում է հավասարակշռված լինել Ռուսաստանի և Արևմուտքի փոխհարաբերություններում։ Ըստ ռուսաստանցի փորձագետ Սերգեյ Մարկեդոնովի՝ «Եթե Արևմուտքի համար Աբխազիան և Հարավային Օսիան Կրեմլի խամաճիկներն են, ապա ԼՂՀ-ի հետ կապված պատմությունն այլ է։ Ամենևին էլ ոչ բոլորի, բայց շատերի համար դա «ոչ մեծ, ազատատենչ հանրապետություն է, որը մարտահրավեր է նետել ԽՄԿԿ-ին և կոմունիստական բռնապետությանը»։ Ղարաբաղն ընկալվում է որպես հակակոմունիստական ընդվզման մաս։ Ի դեպ, Վրաստանի և Մերձբալթիկայի կողքին, թեև դա առաջին հայացքից տարօրինակ է թվում։ Իսկ Արևմուտքում (հատկապես ԱՄՆ-ում) սա լուրջ փաստարկ է»[3]։ Արևմուտքում դեռ շատերն են հիշում ԱՄՆ և Եվրոպայի պետությունների անվերապահ աջակցությունը Լեռնային Ղարաբաղի հայերին՝ 1988-1991թթ. ԽՍՀՄ և Խորհրդային Ադրբեջանի իշխանությունների դեմ մղվող պայքարում, և դա որոշակիորեն արտահայտվում է եվրոպական մոտեցումներում, ընդհուպ մինչև ներկա ժամանակը։

«Հնգօրյա պատերազմը». նոր իրողություններ և հնարավորություններ ԵՄ-ի համար

Հարավային Կովկասում ԵՄ քաղաքականության մեջ բավական կարևոր ճշգրտումներ մտցրեց 2008թ. օգոստոսյան «Հնգօրյա պատերազմը»։ Անցած տարվա օգոստոսյան ճգնաժամի ընթացքում և դրանից հետո Բրյուսելը փոր-

[3] *Сергей Маркедонов*, Азербайджан – Россия: новое отталкивание // www.politcom.ru/article.php?id=7515, 26.01.2009.

ձում էր գրավել իր տեղը տարածաշրջանային քաղաքականությունում և շարունակում է տարածաշրջանում իր ներկայությունը հաստատող նոր ձևաչափերի որոնումը: Պատահական չէ, որ հրադադարը ռուս-վրացական հակամարտությունում ձեռք բերվեց հենց Ֆրանսիայի նախագահ Ն.Սարկոզիի կողմից, երկիր, որն այդ պահին նախագահում էր ԵՄ-ում: Մեդվեդև-Սարկոզի Համաձայնագրի (օգոստոսի 12-ի և սեպտեմբերի 8-ի խմբագրմամբ) վեց կետերը դարձան այն փաստաթուղթը, որն ամրագրեց «Հնգօրյա պատերազմից» հետո տարածաշրջանում ձևավորված նոր աշխարհաքաղաքական իրականությունը, նոր ստատուս քվոն՝ միաժամանակ ցուցադրելով ԵՄ ավելի մեծ հնարավորությունները կայունացման և տարածաշրջանային հակամարտությունների վերահսկման գործում: Փաստորեն, Հարավային Օսիայի և Աբխազիայի սահմանների շուրջ արգելագոտիներում եվրոպական դիտորդների առկայությունը Եվրամիության առաջին լուրջ, ինքնուրույն նախաձեռնությունն էր իր սահմաններից դուրս խաղաղարար գործողությունների իրականացման գործում քաղաքական և մասամբ ռազմական պոտենցիալի ցուցադրման առումով, ընդ որում՝ առանց ՆԱՏՕ կառույցների կամ ԱՄՆ ուղղակի աջակցության: Թեև, իհարկե, Հարավային Կովկասի շուրջ Եվրամիության դիրքորոշումների համաձայնեցումը Հյուսիսատլանտյան դաշինքի և Միացյալ Նահանգների հետ իրականացվում էր շատ խիստ ռեժիմով:

«Հնգօրյա պատերազմի» արդյունքները, ի թիվս այլոց, Արևմուտքում (թեկուզև փորձագիտական մակարդակով) լրջորեն վարկաբեկեցին «բացառման և մեկուսացման», այլ ոչ թե եվրոպական քաղաքական-հումանիտար դաշտում դե ֆակտո հարավկովկասյան պետությունների ներգրավման քաղաքականությունը: Բայց, ինչպես հաճախ է պատահում, ստեղծված իրականության գիտակցումը և քաղաքական իրավիճակի գնահատականը շատ ավելի ուշ է տրվում, երբ ինչ-որ բան փոխելն այլևս խիստ դժվար է: Մինչև 2008թ. օգոստոսը աբխազները (և նույնիսկ Հարավային Օսիայի հանրության որոշ շրջանակներ) ոչ միայն պատրաստ էին, այլև տարբեր ճանապարհներով փորձում էին ինտեգրվել տարբեր եվրոպական կառույցներում՝ թեկուզև քաղաքացիական հասարակության կառույցների մակարդակով: Սակայն ԵՄ կառույցների կոշտ դիրքորոշումը (պաշտոնական Թբիլիսիի «թեթև ձեռքով») այն ժամանակ սահմանափակում էր այդ նախաձեռնությունները բացառապես հումանիտար նախագծերով: «Հնգօրյա պատերազմից» և Մոսկվայի կողմից Աբխազիայի ու Հարավային Օսիայի անկախության ճանաչումից հետո այժմ արդեն ԵՄ-ը ինքն էր ցանկանում ընդլայնել շփումները աբխազների ու օսերի հետ, սակայն քաղաքական հանգամանքներն արմատապես փոխվել էին: Այն պայմաններում, երբ Աբխազիայի և Հարավային Օսիայի սահմանի պարագծով արդեն կանգնած են ռուս սահմանապահները, իսկ ԵՄ դիտորդներն անգամ ֆիզիկական հնարավորություն չունեն հայտնվելու այդ հանրապետությունների տա-

բածքում, գրեթե անհնար կամ չափազանց դժվար է տեսանելի ապագայում այնտեղ որևէ լուրջ եվրոպական նախագիծ իրականացնել:

Բնականաբար, Ղարաբաղը հետխորհրդային տարածքի դե ֆակտո պետությունների արևմտյան՝ «մեկուսացման» քաղաքականությունում միշտ բացառություն է եղել: Հիշենք թեկուզ ԱՄՆ-ի կողմից ամեն տարի հատկացվող ուղղակի ֆինանսական օգնությունը Լեռնային Ղարաբաղին և այն, որ եվրոպացիները մշտապես ընդունում են արևմտյան և ռուսական ազդեցության դիվերսիֆիկացումը Ղարաբաղյան հակամարտության գոտում, հատկապես այնտեղ երրորդ երկրների խաղաղարարների բացակայության պայմաններում: Այնուամենայնիվ, Աբխազիայի և Հարավային Օսիայի «բացասական» օրինակը, Հարավային Կովկասի դե ֆակտո պետությունների մեկուսացման և այդ երկրներին եվրոպական քաղաքական-տնտեսական, հումանիտար դաշտում չներգրավելու իրականացվող քաղաքականության առումով, եվրոպական կառույցների համար լավ դաս կարող է հանդիսանալ:

Եվրամիությունը՝ որպես հակամարտային տարածաշրջաններում ստատուս քվոն պահպանելու նախաձեռնող

«Հնգօրյա պատերազմից» հետո Հարավային Կովկասում փոխված հանգամանքներն ու իրողությունները ամենաանմիջական ձևով անդրադարձան Բրյուսելի տարածաշրջանային քաղաքականության արդյունքների և ԵՄ իդեալիստական արժեքների ու քաղաքական մոտեցումների հարաբերակցության վրա: Եթե մինչ այդ Բրյուսելի աշխարհաքաղաքական հակումները և հակառուսական կողմնորոշումը հակամարտային տարածաշրջանների նկատմամբ ավելի շատ ձեռնտու էր նախկին «մետրոպոլիաներին» (այսինքն՝ Վրաստանին և մասամբ Ադրբեջանին), ապա այժմ իրավիճակը փոխվել է: Տարօրինակ ձևով այն կողմերը, որոնք մինչև այժմ ԵՄ-ի կողմից ենթարկվում էին «օստրակիզմի»՝ Հարավային Կովկասի չճանաչված (իսկ Աբխազիայի և Հարավային Օսիայի դեպքում՝ արդեն «միակողմանի ճանաչված») հանրապետությունները այժմ առավելագույնս շահում են եվրոպական քաղաքականության առանձնահատկություններից: Դա կապված է այն բանի հետ, որ Բրյուսելի քաղաքականությունը ներկայումս նպաստում է ստեղծված ստատուս քվոյի պահպանմանը և տարածաշրջանային հակամարտությունների շուրջ իրավիճակի սառեցմանը՝ անկախ դրանց դասավորությունից:

Նախ՝ ցանկացած բյուրոկրատական կառույցի և կազմակերպության (իսկ ԵՄ-ը, անկասկած, նման կառույց է) բնորոշ են իներցիոնությունը և իր քաղաքականության, առավել ևս՝ արտաքին քաղաքականության իրականացման ծանրաշարժությունը: Երկրորդ՝ ԵՄ ղեկավարությունը և եվրոպական երկրների հանրությունը ապրիորի հստակ «արժեքային» գերակայություններ

և սահմանափակումներ ունի Հարավային Կովկասի հակամարտությունների կարգավորման ձևաչափի վերաբերյալ, որոնք առաջին հերթին արտահայտվում են նրանով, որ թույլ չտրվեն ռազմական իրավիճակի սրացումը և մարտական գործողությունների վերականգնումը: Քանի որ նշված դեպքերից ոչ մեկում տեսանելի ապագայում անհնար է հասնել փոխզիջումային կարգավորման, միանշանակ նպաստավոր իրավիճակ է ստեղծվում Հարավային Կովկասում էթնոքաղաքական հակամարտությունների սառեցման համար, ինչը բխում է տարածաշրջանային քաղաքական այն դերակատարների շահերից, որոնց շահավետ է ստեղծված ստատուս քվոյի պահպանումը (այսինքն՝ դե ֆակտո պետություններին, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղին աջակցող Հայաստանին): Երրորդ՝ Հարավային Կովկասում ԵՄ քաղաքականության կարևոր գերակայություն են տարածաշրջանային համագործակցության աշխուժացումը, սահմանների բացումը և հաղորդակցությունների կարգավորումը, ինչը նույնպես կնպաստի ստատուս քվոյի պահպանմանը տարածաշրջանային հակամարտություններում: Լավ օրինակ կարող է ծառայել ԵՄ ընդգրկումը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում: Թեև դա ավելի շուտ մասնավոր դեպք է և չի կարող կիրառվել Հարավային Կովկասի մյուս երկու էթնոքաղաքական հակամարտությունների առնչությամբ, այնուամենայնիվ, օրինակը բավական հատկանշական է: Ակնհայտ է, որ հայ-թուրքական մերձեցման հնարավորությունը նվազեցնում է ռազմական ռիսկերը Ղարաբաղյան հակամարտության գոտում և միաժամանակ հետագայում, պահպանվող ստատուս քվոյի վիճակում, Լեռնային Ղարաբաղի շուրջ երկարատև խաղաղ բանակցային գործընթացի պայմաններ կստեղծի:

Բնականաբար, չպետք է մոռանալ նաև առավել գլոբալ մակարդակի գործոնները նույնպես, այն է՝ գործող և նախագծվող տարածաշրջանային էներգետիկ նախագծերը: Հարավային Կովկասով անցնող (և Ռուսաստանը շրջանցող) բոլոր նավթատարների և գազամուղների անվտանգ գործունեության համար մարտական գործողությունները չվերսկսելը և առնվազն ստատուս քվոյի պահպանումը (նկատի ունենալով այն, որ տեսանելի ապագայում խաղաղ կարգավորումն իրատեսական չէ) տարածաշրջանային հակամարտությունների գոտում ԵՄ-ի համար առաջնահերթ պայման են: Վերջին տարիներին դա լավ երևում է Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի գործառնության օրինակով՝ Ղարաբաղյան հակամարտության պարագայում:

Կան նաև տարածաշրջանի անվտանգության և կայունության մեջ ԵՄ ներգրավման անուղղակի արդյունքներ, որոնք ուղղակիորեն չեն առնչվում Բրյուսելի միջնորդական դերի հետ, բայց այս կամ այն չափով ազդում են հարավկովկասյան հակամարտությունների շուրջ ստեղծվող իրավիճակի վրա: Օրինակ, Եվրամիության հումանիտար և տնտեսական նախագծերը,

որոնք նպաստում են հարավկովկասյան պետություններում փախստականների վերականգնմանը, աղքատության մակարդակի և սոցիալական լարվածության նվազմանը, քաղաքացիական վերահսկողության ուժգնացմանը զինված ուժերի և ուժային կառույցների նկատմամբ, քաղաքական ինստիտուտների կերտմանը և հետագա ժողովրդավարացմանը: Այս ամենն անվիճելիորեն ազդում է լարվածության թուլացմանը հակամարտային գոտիներում, անդրադառնում ներքին ռեսուրսների և տարածաշրջանի այս կամ այն պետության կենսակայունության վրա:

Եվ վերջապես, ԵՄ-ի կողմից իրականացվող ընդգրկուն նախագծերը քաղաքացիական հասարակության ինստիտուտների մակարդակով մի ինչ-որ նոր «եվրոպականացված» էլիտա են ստեղծում Հարավային Կովկասի հանրապետությունների հասարակական-քաղաքական և լրագրողական շրջանակներում: Ֆինանսապես և ինստիտուցիոնալ առումով կախված լինելով եվրոպական նախագծերից և դրամաշնորհներից՝ այդ շրջանակների ներկայացուցիչները հարկադրված են գոնե քարոզչության մակարդակով էթնոքաղաքական հակամարտությունների կարգավորման հարցում հանդես գալ ավելի կառուցողական և խաղաղասիրական դիրքորոշումներից ելնելով: Դա մեղմում է ռազմատենչ հռետորությունը և բարձրացնում հանդուրժողականության մակարդակը, ինչը նույնպես ինչ-որ չափով նպաստում է ստատուս քվոյի պահպանմանը տարածաշրջանային հակամարտություններում:

Ամփոփման փոխարեն. «Արևելյան գործընկերության» չափավոր, բայց երկարատև լավատեսություն

Այսպիսով, կարելի է փաստել, որ թեև հակամարտությունների կարգավորման մեջ ԵՄ ներգրավվածության արդյունքները տեսանելի և արագ հաջողություններ չեն գրանցել, այնուամենայնիվ, Բրյուսելի քաղաքականությունն ընդհանուր գծերով նպաստում է տարածաշրջանային կայունության և անկայուն խաղաղության պահպանմանը Հարավային Կովկասում: Միևնույն ժամանակ, պետք է ասել, որ ի տարբերություն այլ արտաքին դերակատարների, հենց առավել գաղափարայնացվածության և արժեքային առանձնահատկությունների արդյունքում է, որ ԵՄ քաղաքականությունը մեր տարածաշրջանում ավելի պակաս չափով է տառապում աշխարհաքաղաքականության գերակայություններից և *Real Politic*-ի ծախսերից, ի տարբերություն ԱՄՆ-ի և Ռուսաստանի, ինչպես նաև տարածաշրջանային ավելի փոքր մասշտաբի դերակատարների՝ Թուրքիայի և Իրանի:

Մյուս կողմից՝ ԵՄ ռեսուրսներն ու հնարավորությունները Հարավային Կովկասում նույնպես անսահման չեն: Դա լավ երևում է 2004-2008թթ. *ENP*-ի չափավոր արդյունքներից և «Արևելյան գործընկերության» քաղաքականու-

թյան լիարժեք իրագործման անհստակ հեռանկարներից: Ակնհայտ է, որ Հարավային Կովկասում (ինչպես և ընդհանրապես հետխորհրդային տարածքում) ԵՄ հետագա ներգրավման ակտիվության վրա ներկայումս ազդում է սահմանափակումների մի ամբողջ համալիր: Դա և՛ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն է, և՛ Ռուսաստանի դիմակայությունը, և՛ ԵՄ (առաջին հերթին նրա արևելաեվրոպական անդամների)՝ կովկասյան քաղաքականության մեջ վրաց-ռուսական պատերազմից հետո ներգրավվելու ակտիվ ցանկության իներցիայի նվազումը, և՛ միջնաժամկետ հեռանկարում ՆԱՏՕ ընդլայնման գործընթացների սառեցումը, և՛ եվրոպական կառույցների ու ինստիտուտների արտաքին քաղաքականության համար պատասխանատուների ներքին թուլությունը, և այլն:

Այնուամենայնիվ, քաղաքական գործընթացներում ԵՄ ներգրավվածության ինստիտուցիոնալ իներցիոնությունն է, որ թեկուզ խիստ չափավոր, բայց երկարատև լավատեսության հույս է ներշնչում տարածաշրջանային էթնոքաղաքական հակամարտությունների կարգավորման և Հարավային Կովկասում կայունության ու անվտանգության պահպանման հարցերում: Ընդ որում՝ շատ բան կախված կլինի հակամարտությունների կարգավորման հարցում անկանխակալություն և օբյեկտիվություն պահպանելու Եվրամիության ընդունակությունից:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՖՈՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աննա Ժամակոչյան

Հայաստանի հասարակության տեղեկատվական անվտանգությունն ապահովելու գործում անհրաժեշտ գործընթացներ են հակահայկական տեղեկատվական գրոհների ձևերի ուսումնասիրությունը, հետազոտական մեթոդաբանության մշակումը և արդյունքներին հասարակությանն իրազեկելը: Հատկապես կարևոր է վերջին ժամանակներս բուռն թափ առած ադրբեջանական տեղեկատվական գրոհների մասին պատկերացումների ձևավորումը, ինչը կփորձենք իրականացնել այս հոդվածով:

Չանդրադառնալով հակահայկականության զարգացման դինամիկային՝ դիտարկենք, թե ինչ հիմնական մոտեցումներ են վերջին շրջանում կիրառում հարևան երկրի հակահայկականություն մշակողները:

Ադրբեջանական հակահայկականությունն ուսումնասիրելիս նպատակահարմար ենք համարում այն իրականացնել վերլուծության երկու հարթությունում՝

I. ընդհանուր ինֆոքաղաքականության համակարգի և

II. կոնկրետ տեղեկատվական գործողությունների:

I. Հակահայկականությունը ադրբեջանական ինֆոքաղաքականության հարթությունում

Առաջին հարթությունում նկատում ենք, որ Ադրբեջանի հակահայկական ինֆոքաղաքականությունը պետական քաղաքականության անբաժանելի մասն է և միտված է հայկական սուբյեկտների (ՀՀ, ԼՂՀ և Հայություն) բազմակողմանի վարկաբեկմանը՝ ուղղված տարբեր լսարանների վրա ազդեցությանը: Նման ինֆոքաղաքականությունը միաժամանակ ուղեկցվում է սեփական երկրի և ժողովրդի նպաստավոր կերպարի ձևավորմամբ և վիճելի հարցերի վերաբերյալ ադրբեջանական մեկնաբանությունների տարածմամբ: Քաղաքականության այդ երկու զուգահեռ գործընթացներն այն աստիճան են սերտաճել, որ Ադրբեջանի ժամանակակից ինքնաներկայացման բաղադրիչ է հանդիսանում Հայաստանին ու Հայությանը հակադրվելը, որը նաև դարձել է ադրբեջանական հասարակության նոր ինքնության մեջ ներդրվող նշանակալի գործոննե-

րից: Այսպիսով, հակահայկական ինֆոքաղաքականությունն այսօր Ադրբեջանի քաղաքական ռազմավարության կարևոր ուղեգծերից է, որի գլխավոր սկզբունքներն են.

- Հայաստանի և Հայության մասին տեղեկատվության լիարժեք հավաքագրումը, ներքին խնդիրների տիրապետումը, հայի սոցիալ-հոգեբանական, մշակութային կերպարի ուսումնասիրությունը:
- Հակահայկական տեղեկատվական քաղաքականության նպատակադրումը և մշակումը՝ հիմնված այլ երկրների, հատկապես Թուրքիայի փորձի վրա:
- Հակահայկական քաղաքականության ուղեկցումը սեփական երկրի նկատմամբ դրական կերպարի ձևավորմամբ և վիճելի հարցերի վերաբերյալ ադրբեջանական տեսակետի տարածմամբ:
- Հակահայկական քաղաքականության մեջ բազմավեկտոր նախահարձակ դիրքորոշումը, ինչպես նաև հայամետ տեղեկատվական հոսքերի հակազդումը օպերատիվ-մարտավարական և ռազմավարական հարթություններում:
- Հակահայկական տեղեկատվության տարածումը դիֆերենցված և թիրախային լսարաններին (ադրբեջանական հանրությանը, հայկական հանրությանը, իսլամական աշխարհին, ռուսաստանյան և ԱՊՀ հանրությանը, արևմտյան և միջազգային հանրությանը՝ որպես թիրախ ընտրելով հատկապես երիտասարդությանը և անգամ երեխաներին, ինչպես նաև աշխարհաքաղաքական իմաստով նշանակալի երկրներում ու միջազգային կառույցներում որոշումներ կայացնողներին):
- Յուրաքանչյուր լսարանի նկատմամբ ուրույն մոտեցումների և դիսկուրսի կիրառումը՝ տվյալ լսարանի առանձնահատկություններին համապատասխան:
- Հակահայկական ինֆոքաղաքականության ինտեգրումը պետական քաղաքականության բոլոր ոլորտներում և դրա ամբողջական համակարգային գործառումը:

Ընդ որում՝ որպես ինֆոքաղաքականության համակարգի բաղադրիչներ և ադրբեջանական տեղեկատվական գործողությունների իրականացման փոխկապակցված հարթակներ հանդես են գալիս հետևյալ բաղադրիչները.

- *Պատմամշակութային բաղադրիչը*, որով հանուն ադրբեջանցիների տեղաբնիկության և հայերի եկվորության ապացուցման՝ կեղծվում և վերաշարադրվում են պատմական իրադարձությունները, Ադրբեջանի տարածքում վերացվում են հայկական մշակութային հետքերը:

- *Իրավական բաղադրիչը*, որով ներքին և միջազգային իրավական դրույթների ամրագրմամբ նպատակահարմար հիմք է ձևավորվում Ղարաբաղյան հարցի ադրբեջանամետ հանգուցալուծմանը նպաստելու նպատակով:
- *Ժողովրդական դիվանագիտության բաղադրիչը*, որով մի կողմից՝ Ադրբեջանի հասարակական կազմակերպությունների ներուժն է օգտագործվում երրորդ երկրների հասարակություններում քարոզչության նպատակով, մյուս կողմից՝ ադրբեջանական «սփյուռքի» ձևավորման, կազմակերպման և օգտագործման աշխատանքներ են տարվում:
- *Լոբբինգային բաղադրիչը*, որով ոչ միայն դիվանագիտական, այլև արտասահմանում ձևավորված համայնքային կառույցների միջոցով ազդում են երրորդ երկրների քաղաքական դերակատարների որոշումների կայացման վրա:
- *Ներքաղաքական բաղադրիչը*, որով հայատյացության և ռևանշիզմի կառավարելի մթնոլորտ է ձևավորվում ադրբեջանական հասարակությունում,
- *Մեդիա բաղադրիչը*, որով իշխանության համար կառավարելի են դարձվում ոչ միայն Ադրբեջանի ներքին մեդիառեսուրսները, այլև երրորդ երկրների ԶԼՄ-ի վրա ազդեցության լծակներ են ձեռք բերվում:
- *Տեխնոլոգիական բաղադրիչը*, որով ինտերնետը, արբանյակային կապը և այլ տեխնոլոգիական հնարավորություններն ի սպաս են դրվում հակահայկականության և ադրբեջանամետության տարածման համար:

II. Հակահայկականությունը տեղեկատվական գործողությունների հարթությունում

Արդեն կոնկրետ տեղեկատվական գործողությունների հարթությունում ադրբեջանական գրոհները վերլուծելիս, հաշվի առնելով վերջիններիս հաղորդակցական բնույթը, առաջնորդվենք դրանց հետևյալ կառուցվածքային տարրերի դիտարկմամբ՝

1. սոցիալական համատեքստ
2. տեղեկատվական աղբյուր
3. հաղորդակցման միջոց
4. հաղորդագրություն
5. լսարան
6. հիմնանպատակ:

Մեթոդաբանական տեսանկյունից այս տարրերից յուրաքանչյուրի առանձին բնութագրիչները, ինչպես նաև դրանց համադրությունները, խիստ կարևոր են տեղեկատվական գործողության հաջողության և ազդեցության

առումներով: Հետևաբար, տեսնենք, թե ադրբեջանական նախաձեռնություններում ինչպես են կիրառվում հաղորդակցական համակարգի տարրերը, և հակահայկական տեղեկատվական գործողությունների ինչպիսի մեխանիզմներ ու մեթոդներ են նկատվել դրանցից յուրաքանչյուրում:

1. Սոցիալական համատեքստ. Սա լայն իմաստով այն տարածական և ժամանակագրական միջավայրն է, որտեղ կայանում է հաղորդակցումը կամ տեղեկատվական գործողությունը: Ադրբեջանական կողմը, հաշվի առնելով համատեքստի նշանակությունը հակահայկական տեղեկատվական գործողություններում, փորձում է հօգուտ իրեն օգտագործել բարենպաստ իրավիճակները, իսկ անբարենպաստ գործոնները ձգտում է հավասարակշռել կամ չեզոքացնել օպերատիվ և մարտավարական-ռազմավարական հարթություններում: Այսպես, օրինակ, սոցիալական համատեքստի *անբարենպաստ գործոնների հավասարակշռման կամ չեզոքացման մարտավարական-ռազմավարական* նպատակով էր պայմանավորված 2004թ. օգոստոսին Հունգարիայում Ադրբեջանի դեսպանատան բացումը: Դրա նպատակն էր համակարգել ադրբեջանցի սպա Ռամիլ Սաֆարովի դատավարության հետ կապված տեղեկատվական և այլ բնույթի գործողությունները[1]:

Հատկանշական է, որ Հունգարիայում Ադրբեջանի դիրքերի ամրապնդմանն ուղղված տեղեկատվական գործողությունները շարունակվում են մինչ օրս. 2008թ. նոյեմբերին Բուդապեշտում կայացավ արդեն ավանդական դարձած «Հունգարիա-Ադրբեջան. մշակութային երկխոսություն» 3-րդ միջազգային գիտաժողովը, որի քննարկումները նվիրված էին նաև ժամանակակից հունգարական պատմագրության մեջ Ադրբեջանի պատմության հարցերին[2]:

Անբարենպաստ գործոնները հավասարակշռվում են նաև *օպերատիվ* տեղեկատվական գործողությունների միջոցով: Այսպես, օրինակ, եթե Հայաստանում հարևան Վրաստանի նախագահ Մ.Սահակաշվիլին այցելել է Հայոց ցեղասպանության հուշահամալիր, ապա ադրբեջանական տեղեկատվական դաշտում անպայման հայտնվում են 1-2 վրացի պատմաբանների հետ հարցազրույցներ, ովքեր իրենց խոսքում ժխտում են Հայոց ցեղասպանությունը,

[1] Ադրբեջանի ԶՈՒ սպա Ռամիլ Սաֆարովը 2004թ. ձմռանը, երբ մասնակցում էր Բուդապեշտում ՆԱՏՕ-ի «Համագործակցություն հանուն խաղաղության» ծրագրին, քնած ժամանակ կացնահարել էր նույն ծրագրի մասնակից, ՀՀ ԶՈՒ սպա Գուրգեն Մարգարյանին: Դատաքննության ժամանակ Ռ.Սաֆարովն իր արարքը էթնիկ ատելության պատճառաբանություններով էր պայմանավորել, որից դատական լսումների ժամանակ հրաժարվել էր:
http://ru.wikipedia.org/wiki/%D0%A1%D0%B0%D1%84%D0%B0%D1%80%D0%BE%D0%B2,_%D0%A0%D0%B0%D0%BC%D0%B8%D0%BB%D1%8C_%D0%A1%D0%B0%D0%B3%D0%B8%D0%B1_%D0%BE%D0%B3%D0%BB%D1%8B

[2] «Венгерским ученым предложено организовать научные экспедиции в Азербайджан», 2008.11.21, http://www.media-v.hu/index.php?page=news&set=month&id=4142

արժեզրկում հայ-վրացական հարաբերությունները, պիտակավորում և մեղադրանքներ ներկայացնում Հայությանը[3]:

Ադրբեջանի կողմից սոցիալական համատեքստի *նպաստավոր գործոնների օգտագործման* առումով հատկանշական է 2008թ. մարտի 1-ից հետո ՀՀ-ում ստեղծված քաղաքական դրության օգտագործումը իրավական, արտաքին քաղաքական, ներքաղաքական և այլ հարթություններում: Այդ համատեքստում էր, որ 2008թ. մարտի 14-ին Ադրբեջանին հաջողվեց ՄԱԿ Գլխավոր վեհաժողովի 62-րդ նստաշրջանի օրակարգ ներառել իր կողմից պատրաստված «Իրադրությունը Ադրբեջանի գրավյալ տարածքներում» բանաձևը և հասնել դրա ընդունմանը ՄԱԿ անդամ 192 երկրներից ընդամենը 39-ի «կողմ» քվեարկությամբ:

Այսպիսով, և՛ միջազգային, և՛ հայաստանյան մասշտաբներով *սոցիալական համատեքստի մոնիթորինգը* և դրանում ցանկացած *նոր գործոնների հաշվարկումը* նպաստում են ադրբեջանական տեղեկատվական գործողությունների նպատակադրմանը և արդյունավետ կիրառմանը:

Ադրբեջանական կողմը, սակայն, չի բավարարվում սոցիալական համատեքստի օբյեկտիվորեն տրված իրավիճակներով և *նախահարձակ գործողություններով ներմուծելով արհեստական գործոններ* (օրինակ, հայերին ադրբեջանցիների կոտորածներում մեղադրող օրացուցային սգո օրերի հռչակումը)՝ փորձում է իրականացնել *սոցիալական համատեքստի սուբյեկտիվ ձևավորում*: Դա թույլ է տալիս փոխակերպել հաղորդակցության տրամաբանությունը և հայկական կողմին թողնել պաշտպանության դիրքերը: Նման մեթոդներով ստեղծված սոցիալական համատեքստը դառնում է նաև որոշակիորեն կայուն միջավայր, որտեղ ադրբեջանական քարոզչությունն իրականացվում է *նախապես պատրաստված շաբլոնների կիրառմամբ*: Վերջիններս օգտագործվում են նաև սպասվող օրացուցային իրադարձությունների (ինչպես, օրինակ, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրն է՝ ապրիլի 24-ը) և այլ կանխատեսելի իրավիճակների դեպքերում:

2. Տեղեկատվության աղբյուր. Գլխավոր բնութագրիչներն են դրա նկատմամբ վստահությունը, հեղինակությունը, աղբյուրների բազմազանությունը և աղբյուրի «լեգիտիմությունը»: Այդ իսկ պատճառով հակահայկական տեղեկատվություն տարածող աղբյուրի ընտրության հարցում ադրբեջանական կողմը նախապատրաստված մոտեցումներ է ցուցաբերում: Այն նախ փորձում է ադրբեջանական քարոզչական աղբյուրներին հեղինակավորություն հաղորդել և դրանց նկատմամբ բարձր վստահություն ձևավորել՝ դրանք բնութագրելով դրական իմիջավորման պիտակներով: Այսպես, օրինակ, ադրբեջանական

[3] Грузинский историк: «У армян так заведено: где бы они не жили, эту местность считают армянской территорией», 2009.06.27, http://1news.az/analytics/20090627044431735.html

«Ազերթաջ» պաշտոնական լրատվական գործակալության վերլուծաբան Վուգար Սեիդովը ներկայացվում է իբրև «հայտնի քաղաքագետ», որն իր նյութերը ստորագրում է մե՛կ Բուդապեշտից, մե՛կ Բեռլինից՝ թողնելով միջազգային փորձագետի տպավորություն: Համանման սկզբունքով բոլոր հակահայ քարոզչական գործիչները «հայտնի գիտնականներ» և «ճանաչված գործիչներ» են հռչակվում:

Աղբյուրի հարցում երկրորդ մեթոդաբանական մարտավարությունը *աղբյուրների դիվերսիֆիկացման պատրանք ձևավորելն է*՝ հակահայկական գործողություններում ոչ միայն տեղական, այլև օտարերկրյա հետազոտող գիտնականների ու լրագրողների ներգրավման միջոցով: Ընդ որում՝ կեղծ-չեզոք օտարերկրացիների (ինչպիսիք են օրինակ՝ Էրիխ Ֆայգլը և Յուրի Պոմպեևը) ընդգրկումն օգտագործվում է նաև իբրև հակահայկական տեղեկատվական գործողությունների *լեգիտիմացման* միջոց: Խիստ կարևորվում են նաև օտարերկրյա դիվանագետների և քաղաքական գործիչների ադրբեջանամետ հայտարարությունները՝ դրանք ներկայացվելով իբրև միջազգային հանրության օբյեկտիվ կարծիք:

Ադրբեջանական կողմը սեփական ապատեղեկատվության *լեգիտիմացման* համար մշտապես փորձում է *հրում կատարել հայկական կամ հայկական թվացող աղբյուրների վրա*: Այս նպատակով երբեմն քարոզչական տեքստերի տակ *հայկական ազգանուններով գոյություն չունեցող անձինք* են ստորագրում, հայտնի *հայ գործիչներին հորինված նախադասություններ են վերագրվում,* կամ էլ *նրանց մտքերը ներկայացվում են համատեքստից դուրս՝ իմաստափոխված ձևով*: Հայ գործիչներին հորինված մտքեր վերագրելու բնորոշ օրինակ է հետևյալը: «*Банк-информация*» կենտրոնի տնօրեն Ռովշան Նովրուզօղլին 2006թ. հունիսի 2-ին *«Зеркало»* թերթում «մեջբերումներ» է կատարում «հայերի կողմից ադրբեջանցիների նկատմամբ իրականացված գազանությունների» մասին Զորի Բալայանի «Հարություն» գրքից: Նշվում է անգամ, որ գիրքը լույս է տեսել 1996թ. Վանաձորում, մինչդեռ ո՛չ Զ.Բալայանի, ո՛չ էլ որևէ այլ հեղինակի կողմից երբևէ համանման գիրք չի հրատարակվել[4]: Հատկանշական է, որ Եվրախորհրդի 2009թ. ամառային նստաշրջանում Ադրբեջանի Միլի մեջլիսի պատգամավոր Գանիրա Փաշաևան (Մեհրիբան Ալիևայի քույրը) իր ելույթում կրկին «մեջբերումներ» է կատարել միֆական գրքից (այս անգամ այն կոչվել է «Մեր ոգու վերակենդանացումը»)՝ թարմացնելով հակահայկական ապատեղեկատվությունը միջազգային հանրության առջև[5]:

Համանման նախաձեռնություններից էր 2009թ. մարտի 11-ին ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի հետ իրականում տեղի չունեցած «էքսկլյուզիվ հարցազրույցը» *www.1news.az* կայքում, որում ադրբեջանական լսարանի առջև

[4] «Армянский тележурналист: В Азербайджане дезинформация превращается в индустрию», 2008.06.17, http://www.regnum.ru/news/1015850.html

[5] 2009.06.27, http://www.golos.am/index.php?option=com_content&task=view&id=47435

ՀՀ ՄԻՊ-ի միջոցով բարձրաձայնվում էր Հայաստանում մարդու իրավունքների ճգնաժամային իրավիճակը[6]:

Լեգիտիմացման նպատակին էին ծառայում նաև *«am»* դոմեյնային տարածության մեջ գրանցված *(xronika.am, versiya.am)* և իբրև հայկական ներկայացող ադրբեջանական քարոզչական կայքերը: Դրանցից *versiya.am–ը* համեմատաբար կարճատև կյանք ունեցավ և առաջին իսկ կեղծ-հայամետ տեղեկատվությունից բացահայտվեց՝ արժանանալով հայկական ինտերնետային հանրության մանրազնին դիտարկմանը[7], և արգելափակվեց ՀՀ նախագահի աշխատակազմի Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության կենտրոնի ջանքերով[8]: Առավել երկարակյաց *xronika.am-ը* փորձեց ներազդել հայ-վրացական հարաբերությունների վրա՝ 2008թ. օգոստոսին Հարավային Օսիայի շուրջ հակամարտության ընթացքում հակավրացական ապատեղեկատվություն տարածելով «Ջավախքի հայրենասերների» անունից[9]: Այս դոմեյնի գործունեության պայմանագիրը հետագայում հասկանալի պատճառներով չթարմացվեց:

Հատկանշական է, որ ադրբեջանական հակահայկական տեղեկատվական գործողությունները միտված են ոչ միայն սեփական աղբյուրների նկատմամբ վստահությունը բարձրացնելուն, դիվերսիֆիկացնելուն և լեգիտիմացնելուն, այլև նպատակաուղղված են *հայամետ* կամ *հայկական աղբյուրների վարկաբեկմանը* և *ապալեգիտիմացմանը*: Այս նպատակով հեղինակազրկվում են ոչ միայն հայկական աղբյուրները՝ *պիտակավորվելով* իբրև *քարոզչական, ապատեղեկատվական, հանցավոր,* երբեմն էլ *ահաբեկչական*, այլև բոլոր այն օտարերկրյա աղբյուրները, որոնց տեսակետները բախվում են հակահայկական քարոզչական նպատակներին: Այս հարցում ադրբեջանցիները կիրառում են թուրքական հայտնի մեթոդաբանությունը, որի ամենավառ օրինակն է Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» հայտնի պատմավեպի արժեզրկումը: Այդ նպատակով թուրքերը դեռևս 1989թ.՝ Հայոց ցեղասպանության 75-ամյակի նախաշեմին, ստեղծել են *ինֆոլոգեմ*, համաձայն որի՝ Վերֆելը կյանքի վերջին տարիներին «բացահայտել է, որ իր ստեղծագործությունը պատմական հիմքեր չունի»: Ընդ որում՝ թուրքական կողմը, հաշվի առնելով Վերֆելի հրեական ծագումը և, ուրեմն, նրա ստեղծագործության նշանակությունը հրեաների շրջանում, *աղբյուրի հավաստիության հավասարակշռման* նպատակով այս ինֆոլոգեմի տարածման աղբյուր է ընտրել կրկին հրեական ծագումով ամերիկացի

[6] «Армен Арутюнян: «Защита прав человека в Армении находится в кризисном состоянии», http://www.1news.az/interview/20090311021520995.html

[7] «Как стряпаются "дезы". Или - о бедном Вусале замолвите слово…», 2009.02.19, http://karabah88.ru/press2009/02/0219_striapnya.html

[8] www.nv.am/2008/5mart/tema.htm

[9] *Самвел Мартиросян,* «Выводы из последней атаки на армянские сайты со стороны азербайджанских хакеров», «Գլոբուս. տեղեկատվական անվտանգություն», # 3, սեպտեմբեր, 2008թ.:

բաբբի Ալբերթ Ամաթեուին (այս առասպելաբանական անձը ներկայացվում է նաև Աբրահամ Սաբար, Աբրահամ Սոն Սևեր անուններով): Ամաթեուն, որը երիտասարդ տարիքում Թուրքիայից ներգաղթել էր ԱՄՆ, այդ բացահայտումը կատարել է 101 տարեկանում՝ Ֆրանց Վերֆելի մահից շատ ավելի ուշ[10]: Այս աղբյուրի խոսքերին են հետագայում հղումներ կատարում դասական հակահայ Էրիխ Ֆայգլը և այլ հակահայ քարոզիչները:

3. Հաղորդակցության միջոցներ. Այս հարցում կարևոր բնութագրիչ են միջոցների բազմազանությունը և բազմաքանակությունը, որոնց շնորհիվ ապահովվում են տեղեկատվության սփռվածությունը և հավաստիության պատրանքի ձևավորումը: Ադրբեջանը հաղորդակցական միջոցների բազմազանությանը հասնում է բոլոր հնարավոր ֆորմալ (պետական մարմիններ, ԶԼՄ, դիվանագիտական միջոցներ, *GONGO*-ներ) և ոչ ֆորմալ (շրջիկ իրազեկիչներ (ինֆորմատորներ), ինտերնետային ռեսուրսներ, սոցիալական ցանցեր) ուղիների ու հաղորդակցական ցանցերի կիրառմամբ՝ թիրախային լսարաններին ուղղված տեղեկատվությունը հնարավորինս լայն սփռելու և այդպիսով առավել հասանելի դարձնելու նպատակով: Ադրբեջանական կողմը լայնորեն կիրառում է *փոխհղումների*[11] մեխանիզմը, երբ միևնույն տեղեկությունը, միմյանց վրա հղումներ կատարելով, տարածվում է բազմաթիվ աղբյուրների կողմից: Այս մեխանիզմը ոչ միայն բազմապատկում է հաղորդակցական միջոցները և այդպիսով տարբեր լսարանների համար առավելագույն հասանելիություն է ապահովում, այլև նպաստում է բազմաքանակության էֆեկտի ստեղծմանը: Երբ տարբեր հաղորդակցական միջոցներով (անձնական կապեր, ԶԼՄ, գրքեր, տեսաֆիլմեր) միևնույն տեղեկատվությունն է հաղորդվում, ընկալման մակարդակում հաղորդակցական միջոցների քանակական բազմապատկման տպավորություն է ստեղծվում, ինչն էլ հավաստիության պատրանք է ձևավորում:

Փոխհղումային եղանակով միևնույն հաղորդագրության արտատպումը նաև լրացուցիչ հնարք է ինտերնետային կայքերի համար՝ վարկանիշի բարձրացման և որոնման համակարգերում դրանք առաջնահերթ հասանելի դարձնելու առումով:

4. Հաղորդագրություն. Հաղորդակցման ամենաբազմաշերտ բաղադրիչն է, որի բնութագրիչներն են հաղորդագրության բովանդակությունը՝ թեման, օբյեկտը, դիսկուրսը, տեքստային ազդեցության հնարքները, փաստարկումը, հուզական ծանրաբեռնվածությունը, պատկերավորումը՝ սիմվոլիկան, հա-

[10] «Взгляд с вершины Муса-дага», 2009.02.26, http://www.golos.am/index.php?option=com_content&task=view&id=43129&Itemid=41

[11] *Սուրեն Մովսիսյան,* «Ադրբեջանական ԶԼՄ ազդեցության գործոնները տեղեկատվական պատերազմի համատեքստում», «Գլոբուս. տեղեկատվական անվտանգություն», # 2, հունիս, 2008թ.:

ղորդագրության կրկնման հաճախությունը, բազմաժանրությունը:

Հաղորդագրության հաճախակի կրկնությունը առաջին հերթին այն լսարանին հասանելի դարձնելու և դրան ուշադրությունը բևեռելու նպատակ է հետապնդում: Բացի այդ, այն առավել խորքային հետևանք է ունենում. ընկալման և հիշողության մեխանիզմների օրինաչափության շնորհիվ հաճախակի կրկնվող հաղորդագրությունն արդյունավետ ամրագրվում է հանրային գիտակցության մեջ: Եթե նույնիսկ հաղորդագրության բովանդակությունն ընդունելի չի դառնում, ապա առնվազն առօրեական բնույթ է ստանում և սոցիալական իրականության մաս դառնում: Այս մեխանիզմը ադրբեջանական քարոզչությունը նաև հիմնավորված դարձնելու ձև է. նույնիսկ չփաստարկված հաղորդագրությունը հիմնավորված է դառնում նախկին նույնական հաղորդագրություններով: Ադրբեջանական քարոզչությունը դիմում է նաև միևնույն հաղորդագրության բազմաժանր փաթեթավորմանը (ցանկալի տեղեկատվությունն արտահայտվում է ոչ միայն քաղաքական, այլև մշակութային, սպորտային և այլ բնույթի տեքստերի միջոցով), տեսողական արտահայտչականությանը կամ վիզուալացմանը (տարածում են գտել խիստ յուրովի մոնտաժված «վավերագրական» ֆիլմերը, կեղծված լուսանկարները, քարտեզները, անիմացիաները և այլն): Ուշադրություն է դարձվում տեքստային վերնագրերի գրավչությանը, ինչպես նաև սիմվոլիկ և էմոցիոնալ հագեցվածությանը:

Ադրբեջանական տեղեկատվական տեքստերում քննարկման, իսկ առավել հաճախ՝ *հարձակման օբյեկտ* է հանդիսանում Հայության համար *արժեքային և սիմվոլիկ ծանրաբեռնվածություն ունեցող ցանկացած սուբյեկտ*՝ սկսած սովորական հայ մարդուց, մինչև պատմական հերոսներ, պետական, հասարակական, կրոնական գործիչներ և հայոց քաղաքական պատմություն: Հակահայկական տեղեկատվական առավել հաճախակի հարձակումների շարքում առանձնանում են մի շարք *թեժ թեմաներ,* ինչպիսիք են՝

- Հայկական պետականության ու հայ ժողովրդի պատմությունը, հատկապես Արցախի քաղաքական պատմությունը, հայերի ծագման ու բնիկության հարցերը:
- Ադրբեջանական պետության կազմավորման, ժողովրդի ծագման և ձևավորման հարցերի նպատակահարմար մեկնությունը և նրանց բնիկության ամրապնդումը:
- 1915թ. Հայոց ցեղասպանության հերքումն ու հանցանքի պրոյեկտումը,
- 20-րդ դարի ընթացքում «ադրբեջանցիների ցեղասպանություն» իրականացնելու մեջ հայկական կողմին ուղղված մեղադրանքները.
    - ◊ 1918թ. Բաքվի կոմունայի և մահմեդականների միջև տեղի ունեցած բախումները՝ իբրև հայերի կողմից «ադրբեջանցիների ցեղասպանության» «հանցագործ պլանի» իրագործում,
    - ◊ 1990թ. Բաքվում խորհրդային բանակի գործողությունների արդյունքում զոհված ադրբեջանցիներին իբրև հայկական

սաղրանքների զոհեր ներկայացնելը,

◊ 1992թ. Խոջալուի դեպքերն իբրև հայկական զինվորականության կողմից միտումնավոր սպանություն, և ուրեմն «ցեղասպանություն» ներկայացնելը։

- Այլ ժողովուրդների դեմ «կատարած հանցանքներում» Հայությանն ուղղված մեղադրանքները, համատարած թուրքատյացության և հակասեմիթիզմի վերագրումը, «միջազգային հայկական սպառնալիքի» ինֆոլոգեմը,
- հայ ժողովրդի բարոյահոգեբանական նկարագրի և արժեքային համակարգի խեղաթյուրումը։
- ՀՀ-ում և ԼՂՀ-ում առկա ներքին սոցիալ-տնտեսական, քաղաքական խնդիրների շահարկումը և մտացածին խնդիրների վերագրումը։
- Հայկական բանակի խնդիրների շահարկումը, վարկաբեկող ինֆոլոգեմների տարածումը։

Դիտարկելով վերոնշյալ թեմատիկ հաղորդագրություններում առկա ընդհանրությունները՝ նկատում ենք, որ ադրբեջանական քարոզչամեքենան հակահայկական տեքստերում կիրառում է հիմնականում 4 մեխանիզմ.

- Հայ-թուրքական տեղեկատվական հարաբերություններում հայկական կողմի ձեռնարկած և հաջողված տեղեկատվական գործողությունների հայելային արտատպման մեխանիզմը։
- Թուրք-ադրբեջանական կողմին առնչվող խոցելի կետերի և բացասական տեղեկատվության **ուղղակի պրոյեկտման** մեխանիզմը։
- Հակասեմիթականության սխեմաների հակահայկական ուղղվածությամբ կիրառման մեխանիզմը։
- «Հակառասիստական ռասիզմի» սկզբունքի կիրառման մեխանիզմը։

Հայելային արտատպման ամենավառ օրինակ է ներկայումս լայն շրջանառության մեջ դրված *«Արևմտյան Ադրբեջան»* հասկացությունը (Արևմտյան Հայաստանի նմանությամբ), որի տակ ենթադրվում են ոչ միայն ԼՂՀ, այլև արդի ՀՀ և որոշ չափով Վրաստանի տարածքները։ *Ուղղակի պրոյեկտման* արդյունք է ոչ միայն ցեղասպանության վերագրումը հայկական կողմին, այլև Հայ Առաքելական եկեղեցուն իսլամական աշխարհում առկա ծայրահեղական ահաբեկչական հոսանքների նպատակների և գործունեության մեջ մեղադրանքը։ Հայելային արտատպման մեխանիզմով թուրք-ադրբեջանական համատեղ քարոզչությունը սիմետրիկ պատասխան է տալիս Հայոց ցեղասպանության թեմայով բոլոր հայկական տեղեկատվական հոսքերին՝ միաժամանակ ուղղակիորեն պրոյեկտելով թուրք-ադրբեջանական հայտնի խնդիրները և կնճռոտ իրադարձությունները հայկական կողմի վրա։

Հակասեմիթականության սխեմաները կիրառվում են կրկին հիմնականում Ցեղասպանությանն առնչվող թեմաներում, ինչպես նաև Հայության արժեհամակարգի, հայ մարդու բարոյական կերպարի վարկաբեկման հարցերում: Նույն սկզբունքով, ինչ հակասեմիթները մեղադրում են հրեա ժողովրդին սեփական նպատակներին հասնելու համար Հոլոքոստի «առասպելի» հորինման, դրա հրահրման կամ կազմակերպման մեջ, այնպես էլ ադրբեջանա-թուրքական քարոզիչները հայերին մեղադրում են Ցեղասպանության և այլ կոտորածների «առասպելների» ստեղծման, հրահրման կամ էլ կազմակերպման մեջ: Լայնորեն կիրառվում են նաև հակասեմիթական պիտակավորման ձևերը («նենգ», «դավաճան», «ագահ», «խաբեբա») հայերի նկատմամբ:

Ինչ վերաբերում է *«հակառասիստական ռասիզմի» սկզբունքի* կիրառմանը, ապա այն դրսևորվում է Հայությանը հակաթուրքականության և հակասեմիթիզմի մեջ մեղադրանքների հիման վրա հակահայկականության տարածման ձևով: Այնպես, ինչպես սպիտակամորթների նկատմամբ ռասիզմը հիմնավորվում է վերջիններիս ռասիզմով սևամորթների նկատմամբ, որն ըստ էության նույն ռասիզմն է, այդպես էլ ադրբեջանա-թուրքական հակահայկականությունը փորձում է հիմնավորել սեփական հայատյացությունը Հայությանը համատարած թուրքատյացություն և հակասեմիթիզմ վերագրելով:

Բոլոր վերոնշյալ թեմատիկ հաղորդագրություններում ծանրակշիռ մաս են կազմում *պատմական, իրավական, կրոնամշակութային* ու *առօրեականության դիսկուրսի ձևերը*: Դրանք բոլորը միավորվում են առանցքային՝ հակահայկականության տարածման նպատակի շուրջ: Ընդհանուր առմամբ, դրանցում առավել հաճախ հանդիպում են *տրամաբանական սխալների* և *սեմանտիկ մանիպուլյացիաների մեթոդների* վրա հիմնված տեքստային ազդեցության այնպիսի հնարքներ, ինչպիսիք են՝

- *Պարզ ապատեղեկատվության, կեղծիքի, ինֆոլոգեմի պնդումը:*
- *Ճշմարտանման ստերի կիրառումը:*
- *Չափազանցությունը կամ ծայրահեղացումը:*
- *Կես-ճշմարտությունների կամ ընտրովի ինֆորմացիայի մատուցումը:*
- *Հակագիտական ինդուկցիան՝ անհիմն կերպով մասնավորից ընդհանրացումը:*
- *Ասիմետրիկ համեմատությունների անցկացումը:*
- *Արքետիպային ու կարծրատիպային պիտակների ամրակցումը, ծաղրը, հեգնանքը, բացասական հատկանիշների վերագրումը:*
- *«Մութ էջերի բացահայտումը»:*

5. Լսարան. Տեղեկատվական գործողության արդյունավետությունը կախված է լսարանի քաղաքակրթական, կրոնական և մշակութային առանձնահատկություններից: Այս իմաստով ադրբեջանական տեղեկատվա-քարոզչական նախաձեռնությունները հստակ *տարանջատում են թիրախային լսա-*

բանները և դրանց ուղղված *հաղորդագրությունների դիսկուրսը*: Այսպիսով, իրագործվում է առանձին *լսարաններին համապատասխան դիֆերենցված մոտեցում.*

- Իսլամական հանրությունում Հայաստանը ներկայացվում է իբրև ահաբեկչական քրիստոնեական պետություն կամ համաշխարհային սիոնիզմի ու քրիստոնեական պետությունների կամակատար:
- Հրեաների շրջանում՝ իբրև հակասեմիթական երկիր:
- Արևմտյան երկրներում՝ իբրև հակաժողովրդավարական տարր և տարածաշրջանային զարգացման արգելակ:
- Միջազգային կառույցներում Ադրբեջանը սեփական պահանջները բխեցնում է իբր միջազգային իրավական նորմերին դրանց լիարժեք համապատասխանությունից:
- Իսկ սեփական հանրության ներսում՝ նաև պատմամշակութային կեղծ հիմնավորումներից և ձևավորվող «թշնամի հայի» կերպարի նկատմամբ ռևանշիստական նկրտումներից:

6. Հիմնանպատակ. Ադրբեջանական տեղեկատվական գործողությունների հիմնանպատակներն են.

1. Հայաստանին և Հայությանն առնչվող հոգևոր, մշակութային և նյութական արժեքների նսեմացումը, «ոչնչացումը»՝ ի հակադրություն ադրբեջանականի բարձրացմանը, արժևորմանը և համաշխարհայնացմանը:
2. Հայության բարոյալքումը, պարտվողականության զգացումի ձևավորումը, թուլացումը՝ ի հակադրություն ընդհանուր թշնամու (հայերի) նկատմամբ ադրբեջանցիների միասնականության և ռևանշիզմի ձգտման ձևավորման:

Առաջինն ավելի լայն ուղղորդում ունի և միտված է բոլոր թիրախային լսարանների, այդ թվում՝ Հայության շրջանում՝ *վարկաբեկման* ու *անմարդկային հանցանքների մեջ մեղադրանքի* մեխանիզմների կիրառմամբ համապատասխան դիրքորոշումների ձևավորմանը: Թեև հայկական լսարանի վրա դրա ազդեցության արդյունավետությունն ավելի քան վիճելի է, այն միտված է Հայության մեջ *թերարժեքություն ձևավորելուն,* ինչը նաև հիմք է երկրորդ հիմնանպատակի համար:

Երկրորդի ուղղվածությունը կոնկրետ հայկական և ադրբեջանական լսարաններն են: Այս դեպքում կիրառվում են ոչ միայն Հայության *նսեմացման* ու *մեղադրանքի,* այլև *պատերազմի վերսկսման և շրջափակման միջոցով ՀՀ-ն և ԼՂՀ-ն տնտեսապես «շնչահեղձ» անելու սպառնալիքի,* ինչպես նաև *Հայու-*

թյան մեջ ծագումնաբանական կամ այլ տարբերակումների ներմուծմամբ՝ ջլատման-պառակտման մեխանիզմները: Այն, ինչ հայկական լսարաններում աշխատում է իբրև պարտվողականության ձևավորման և բարոյալքման գործոն, ադրբեջանական հանրությունում առաջացնում է հպարտության զգացում և հավատ «Հայության դեմ» հաղթանակի նկատմամբ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՃՆՇՄԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՓՈՐՁԵՐ

Սամվել Մարտիրոսյան

Այս տարվա հունիս-սեպտեմբերին ադրբեջանական քարոզչական գործունեությունը որոշակի իմաստով փոխել է ուղղությունը: Բավական հստակ ուրվագծվում է կոնկրետ հայկական բանակի դեմ ուղղված գործունեություն: Նկատվում է, որ ադրբեջանական կողմը փորձում է Հայաստանի դեմ տեղեկատվական պատերազմի նոր մեթոդներ փորձարկել:

Մասնավորապես, ադրբեջանական կողմն սկսել է ավելի ակտիվորեն օգտագործել հայ գերիների գործոնը: Եթե մինչ այդ գերի ընկած հայ զինվորները միայն միջնորդավորված ձևով էին հակահայ քարոզչության թիրախ դառնում, ապա արդի ինտերնետ տեխնոլոգիաներն ադրբեջանական կողմին թույլ են տալիս ոչ միայն տպագիր և լրատվական նյութեր, այլ նաև տեսանյութեր տարածել: Հայ զինծառայողների գերեվարման վերջին դեպքերն, օրինակ, ադրբեջանական կողմն օգտագործել է առավելագույն չափով հոգեբանական ճնշում գործադրելու նպատակով: Մասնավորապես՝ զինծառայողները հրավիրվում էին ադրբեջանական հեռուստաալիքների եթեր և հարցազրույցի ժամանակ նախապես պատրաստված և «բեմականացված» քարոզչական տեղեկատվություն էին ներկայացնում, որը հետո տարածվում էր ինտերնետ-վիդեոյի՝ *YouTube*-ի կամ *RuTube*-ի միջոցով:

Տեսանյութերի տարածումը, հատկապես հենց ռազմագերիների հետ հարցազրույցները, ադրբեջանական կողմին հնարավորություն էին տալիս վարկաբեկելու հայկական բանակը, հոգեբանական ազդեցություն գործելու ինչպես Հայաստանի, Ղարաբաղի և Սփյուռքի բնակիչների, այնպես էլ առավել նեղ թիրախային խմբերի, մասնավորապես՝ հայկական բանակի ապագա զինակոչիկների վրա:

Հունիս-օգոստոսին տարածված՝ հայ ռազմագերիների հետ հարցազրույցների տեսահոլովակներում (դրանք թարգմանվում էին ռուսերեն և անգլերեն՝ լսարանն ընդլայնելու նպատակով) վարվում էր ադրբեջանական կողմի մշակած և ռազմագերիների կողմից հնչեցված քարոզչություն: Կարելի է նշել մի շարք հիմնական քարոզչահնարքներ, որոնք պետք է վարկաբեկեին և ընկճեին հայկական բանակը: Հիմնական հղումները, որոնք կոչված էին ստեղծելու թույլ և քայքայվող, անդիմադրունակ բանակի կերպարը, կարելի է բաժանել մի քանի խմբի.

1. Հայաստանի Հանրապետության զինվորների և Լեռնային Ղարաբաղի սպաների ու զինվորների միջև կայուն հակամարտության «կերպարի» ստեղծումը:
2. Բանակում ապագա նորակոչիկների հոգեբանությունն ընկճող՝ «դեդով-շչինայի» մասին մանրամասների ձևավորում:
3. Սպաների սարսափազդու կամայականության մասին մանրամասների ձևավորում:
4. Տարածվում է տեղեկատվություն այն մասին, թե հայ զինվորները քաղցած են, վատ հագնված և այլն:
5. Հայկական բանակի այնպիսի կերպարի ձևավորում, ուր զորակոչվում են լուրջ հիվանդները նրանց փոխարեն, ովքեր փողով ազատվել են ծառայությունից կամ որպես դասալիք փախել են այլ երկրներ:
6. Տարածվում է առասպել այն մասին, թե ոչ ոք չի ուզում ծառայել, հայրենասիրություն չկա, ինչի հետևանքով բանակն ընկալվում է որպես բանտ:

Նման գործողությունները ադրբեջանական կողմին թույլ էին տալիս սեփական բանակում տիրող իրական հիմնախնդիրներից ուշադրությունը շեղող տեղեկատվական աղմուկ ստեղծել: Գերիների վերաբերյալ մեծ քանակությամբ տեսահոլովակներ տարածվեցին համաշխարհային վիդեո-սերվիսի միջոցով, որոնք դիտել են տասնյակ հազարավոր մարդիկ: Այդ նյութերը շարունակում են հրատապ մնալ, քանի որ, օրինակ, *YouTube* կայքում առանցքային *«armenian soldiers»* բառերով որոնումը առաջին տասնյակում բերում է հենց ադրբեջանական քարոզչահոլովակների կեսը: Նույն կերպ էլ ռուսերենով *«армянские солдаты»* բառերով գտնված նյութերի մեծ մասը հարցազրույցներ են դասալիքների հետ: Այսպիսով, ակնհայտ է ադրբեջանական քարոզչության երկարաժամկետ հաջողությունը, քանի որ հայ զինվորների մասնակցությամբ տեսանյութերի զանգվածային արտանետման հետևանքներն առ այսօր արդիական են և վարկաբեկում են հայկական բանակը սույն հարցով հետաքրքրվող ինտերնետ-օգտվողների աչքերում:

Դատելով այս ամենից՝ այս գործողության համեմատական հաջողությունն Ադրբեջանում ազդակ է հանդիսացել տեղեկատվական պատերազմը շարունակելու և քարոզչական հաջողությունն ամրապնդելու համար: Ամենայն հավանականությամբ, կարգադրություն է տրվել միանգամից մի քանի կառույցի՝ շարունակել տեղեկատվական գործողությունները հայկական բանակի դեմ: Այս մասին կարելի է դատել ոչ միայն ուժգնացող տեղեկատվական ճնշումից ելնելով, այլ նաև գործողությունների՝ պարբերաբար դրսևորվող անհամաձայնեցվածությամբ, ինչը խոսում է այն մասին, որ սրանում չափից ավելի շատ կառույցներ են ներգրավված և կատարման դիրեկտիվ ցուցում է տրված:

Մասնավորապես՝ ստեղծվել է ոչկառավարական դրածո կառույց՝ «Նախկին հայ զինծառայողների պաշտպանության ադրբեջանական կոմիտե» անվամբ: Կազմակերպությունը դարձավ հերթական քարոզչական արտանետումների միջնորդը: Կոմբինացված գործողություն սարքելու փորձ արվեց. թռուցիկներ տարածվեցին, բայց ոչկառավարական կազմակերպության անունից: Ցանցի միջոցով հայ զինծառայողներին հասցեագրված հայտարարություն տարածվեց:

Այս գործողությունն, իհարկե, նվազագույն արդյունք ունեցավ, սակայն թռուցիկների բովանդակությունից երևում էր, թե առաջիկայում ինչ քարոզչական թեզիսներ է շեշտադրելու ադրբեջանական կողմը: Վերը թվարկվածներին ավելացավ նաև արդեն շրջանառության մեջ մտցված թեզիսն այն մասին, որ տնտեսական ճգնաժամը քայքայել է Հայաստանի տնտեսությունը, որ երկրի բանակը վատ է ֆինանսավորվում: Այդ նույն ժամանակ Ադրբեջանի տնտեսությունը, չնայած ճգնաժամին, շարունակում է զարգանալ, ռազմական բյուջեն ավելանում է, այստեղ չկան ժողովրդագրական խնդիրներ, ինչպես Հայաստանում: Հայ զինվորներին և նորակոչիկներին հասկանալ են տալիս, թե անգամ հարձակողական մարտերի և ադրբեջանական բանակի մեծ կորուստների պարագայում Ադրբեջանը շահելու է: Բացի այդ, առաջ է մղվում ադրբեջանական քարոզչության վերջին տարիների հիմնական կլիշեներից մեկը. «Ժամանակն աշխատում է Ադրբեջանի օգտին»:

Մեկ այլ նոր գործոն է դարձել գերի հանձնվելու առաջարկը, որը արևմտյան երկրներ անցնելու հնարավորություն է ստեղծում. «Սա հնարավորություն է ձեզ համար: Օգտվեք դրանից այսօր, քանի դեռ պատերազմը չի սկսվել: Ոչ ոք ձեզ չի պարտադրում: Պարզապես ազատ ժամանակ մտածեք ձեր սեփական ապագայի ու ձեր երեխաների ապագայի մասին: Ուզո՞ւմ եք, որ նրանք զոհվեն հրթիռների պայթյուններից, թե՞ ապրեն հանգստավետ Եվրոպայում: Որոշողը դուք եք»:

Հանգամանալի հրահանգներ էին ներկայացվում, թե ինչպես ճիշտ գերի հանձնվեն, որպեսզի խուսափեն դժբախտ պատահարներից: Դրանից հետո մամուլում հայտնվեցին հաղորդումներ տեղերում գործնական աշխատանքների մասին. «Նախկին հայ զինծառայողների պաշտպանության ադրբեջանական կոմիտեն» հրահանգավորում է անցկացնում Հայաստանի հետ սահմանամերձ գյուղերի և ճակատի գծի մերձակա բնակակետերի բնակիչների շրջանում:

Այս շաբաթ հանդիպումներ են կայացել Թովուզի շրջանի, ինչպես նաև Ֆիզուլու և Աղդամի գյուղերի բնակիչների հետ: Ֆերմերներին և նրանց ընտանիքների անդամներին բացատրել են, թե ինչպես պետք է վարվեն, եթե նրանց, նրանց տնտեսություններին և արոտավայրերին մոտենան ինքնակամ ճակատի գիծն անցած և Ադրբեջանին հանձնվել ցանկացող հայ զինծառայողները»:

Նման քարոզչահնարքները փոքր ազդեցություն ունեն, քանի որ հիմնա-

կանում տարածվում են ինտերնետի ադրբեջանական մասի միջոցով: Բացի այդ, թռուցիկներն իրենք էլ բավական հակասական բովանդակություն ունեն և անգրագետ են կազմված:

Մյուս խոշոր գործողությունը ապատեղեկատվության տարածումն էր այն մասին, որ սեպտեմբերի 10-ին Ղարաբաղի բանակը Աղդամի ուղղությամբ անցել է հարձակման և հինգ զոհ է ունեցել: Հատկանշական էր այն փաստը, որ տեղեկատվական գործակալություններից տարածվող հաղորդագրությունը չէր հաստատվում ոչ Ադրբեջանի պաշտպանության նախարարության, ոչ էլ հայկական կողմից: Սակայն ադրբեջանական մամուլին հաջողվում էր պահել հորինված մարտի շուրջ ծավալած աղմուկը: Անգամ արևմտյան մի շարք գործակալություններ, որոնք, ըստ էության, հետևում են տեղեկատվության աղբյուրներին, սկսեցին տարածել այս ապատեղեկատվությունը: Մասնավորապես՝ *BBC*-ն, *Reuters*-ը և *Aljazeera*-ն (տե՛ս *Հավելվածը*):

Ադրբեջանական կողմը «բռնվեց» այն բանից հետո, երբ *Vesti.az* կայքը զետեղեց իբր սպանված հայ զինվորների լուսանկարները հետևյալ մակագրությամբ. «Զոհված հայ զինվորները»: Դրան անմիջապես հետևում է Հայաստանի պաշտպանության նախարարության պատասխանը, որում ասվում էր, որ այդ տեղեկատվությունը բացահայտ սուտ է, և լուսանկարում պատկերվածը վրացի զինվոր է, որը զոհվել է 2008թ. օգոստոսին վրաց-ռուսական պատերազմի ընթացքում, իսկ լուսանկարը վերցված է ՌԴ Կոմկուսի կայքից[1]: Բացի այդ, խառնաշփոթ էր տիրում նաև հարձակման ենթարկված ադրբեջանական գյուղերի, ինչպես նաև հայկական կողմի կորուստների թվի հարցում:

Հետագայում ցանց մտցվեցին հայ զինվորների լուսանկարներ՝ գարեջրի շշերը ձեռքներին, նախագահի լուսանկարով և այլն, ինչը նպատակ ուներ ցույց տալու բանակի բարոյական անկման մակարդակը:

Սա բավական անհաջող քայլ էր, քանի որ, դատելով ադրբեջանական ֆորումների քննարկումներից, շատերի մեջ լուսանկարները հակառակ էֆեկտ էին առաջացրել. հայ զինվորները, հակառակ ադրբեջանական քարոզչության, լավ հագնված ու խնամված են: Արդյունքում՝ գործողությունը, ինչպես երևում է, ընդհատվեց, և լուսանկարների տարածումը դադարեցվեց:

Իրավիճակի ընդհանուր վերլուծությունը ցույց է տալիս, որ ամենայն հավանականությամբ կարելի է կանխատեսել, որ տեղեկատվական հարձակումները հայկական բանակի դեմ կշարունակվեն: Դատելով առկա դինամիկայից՝ ադրբեջանական կողմը շոշափում է տեղեկատվական պաշտպանության թույլ տեղերը: Բացի այդ, օգտագործվում են տեղեկատվության տարածման բազմազան աղբյուրներ՝ պաշտոնական կառույցներ, ոչկառավարական կազմակերպություններ, անանուն աղբյուրներ և այլն:

[1] Азербайджанские СМИ выдали убитого грузина за армянского солдата, http://www.aysor.am/ru/news/2009/09/11/pnhhazdez/

Հավելված

BBC-ն, *Reuters*-ը և *Aljazeera*-ն կուլ տվեցին ադրբեջանական ապատեղեկատվության խայծը

Արդեն երկրորդ օրն է՝ ադրբեջանական քարոզչամեքենան ապատեղեկատվություն է տարածում: Դա նոր մեթոդ չէ նրա համար, սակայն անհանգստացնում է այն, որ անհայտ ծագմամբ ադրբեջանական տեղեկատվությունը տարածվում է հսկայական լսարան և բարի համբավ վայելող այնպիսի հեղինակավոր արտասահմանյան լրատվամիջոցների կողմից, ինչպիսիք են *BBC*-ն, *Reuters*-ը կամ *Aljazeera*-ն:

Ադրբեջանական սադրանքի տարածման բնույթն ու տեղեկատվական տեխնոլոգիան բացատրելու համար ընթերցողին առաջարկում ենք դիտարկել դրա տարածման ժամանակային պատկերը:

10.09.2009, 11:32. Ադրբեջանական *APA* գործակալությունը տեղեկատվություն է տարածում այն մասին, որ հայերը Աղդամի ուղղությամբ հարձակման են անցել հայ-ադրբեջանական զինված ուժերի շփման գծում: «Թշնամու հարձակումը հետ է մղվել, սպանվել են 5 հայ զինվոր, 3-ը վիրավոր են»,- գրում է *APA*-ն և տեղեկացնում, որ ադրբեջանական կողմից կա 1 վիրավոր՝ «19-ամյա զինվոր Փարվիզ Յուսուբովը, որը զորակոչվել է 2008թ. Գուբայի շրջանի զինկոմիսարիատի կողմից»: Այս դեպքում հատկանշականն այն է, որ ադրբեջանական գործակալությունը ոչ մի աղբյուր չի նշում (հետագայում Ադրբեջանի պաշտպանության նախարարությունն ընդհանրապես հրաժարվում է մեկնաբանել այս տեղեկությունը): Երկրորդ, *APA* գործակալությունը չի հաղորդում, թե կոնկրետ երբ է տեղի ունեցել միջադեպը, այնինչ նրա տեղեկատվությունն օգտագործող մյուս լրատվամիջոցները գործողությունն սկսվելու կոնկրետ ժամանակ են նշում, ընդ որում՝ ոմանք նշում են 9:23-ը, մյուսները՝ 9:00: Դրանից հետո տարածված տեղեկություններում հակասություններ կան ենթադրյալ զոհվածների և վիրավորների թվի հարցերում: Ուշագրավ մյուս փաստն այն է, որ առանց պաշտոնական աղբյուրներին հղում կատարելու՝ ադրբեջանական լրատվամիջոցները հաղորդում են բոլոր տվյալները վիրավորված ադրբեջանցի զինվորի մասին՝ ներառյալ զորակոչի հասցեն, մինչդեռ այդ տվյալները բաց և հրապարակային չեն: Նշենք, որ հակասություններն այսքանով չեն ավարտվում:

Նույն տեղեկատվությունն ակնթարթորեն վերցնում են մնացած ադրբեջանական էլեկտրոնային ԶԼՄ-ները: Ստորև ներկայացնում ենք հրապարակման ժամանակն ու հղումները.

11:47, *Vesti.az*, հղում է կատարում *APA* գործակալությանը՝ վերատպելով նույն բովանդակության տեքստը: Միջադեպի ժամանակը, այս աղբյուրի համաձայն, 9:23-ն է:

11:53, *Day.az*, հղում է կատարում *APA* գործակալությանը՝ վերատպելով նույն բովանդակության տեքստը: Միջադեպի ժամանակը, այս աղբյուրի համաձայն, նույնպես 9:23-ն է:

11:54. *ANS-press*-ը հաղորդում է սեփական թղթակցի անունից՝ վկայակոչելով

անանուն զինվորականների: Հաղորդում է հայկական կողմի 4 զոհվածների և բազմաթիվ վիրավորների մասին: Հաղորդում է, որ ադրբեջանական կողմից կորուստներ չկան: Ժամանակը չի հաղորդվում: Ենթադրյալ հարձակման ուղղությունը Ղարաղաջլի գյուղն է:

11:54. *1news.az*, նույնպես հաղորդում է սեփական թղթակցի անունից, չի վկայակոչում ոչ մի աղբյուր, հաղորդում է 5 զոհվածների մասին հայկական կողմից: Ոչինչ չի հաղորդվում ադրբեջանական կողմի վիրավորների և կորուստների մասին: Միջադեպի ժամանակը՝ 9:00: Ենթադրյալ հարձակման ուղղությունը Բաշգարվենդ գյուղն է:

12:00, *Bakililar.az*, հղում է կատարում *APA* գործակալությանը՝ վերատպելով նույն բովանդակության տեքստը: Միջադեպի ժամանակը, համաձայն այս աղբյուրի, նույնպես 9:23-ն է:

13:26 *Turan*, հղում է կատարում անանուն զինվորական աղբյուրին, հաղորդում է բախման մասին և նշում, որ հայկական կողմից կան 5 զոհ և 10 վիրավոր: Հաղորդում է այն մասին, որ Փարվիզ Յուսուբովը ծանր վիրավոր է, և որ Ադրբեջանի ՊՆ մամլո ծառայությունում ոչ մի մեկնաբանություն չեն արել այս առնչությամբ:

Տեղեկատվությունը վերջին անգամ թարմացվել է սեպտեմբերի 11-ին, ժամը 01:03-ին, *Trend* գործակալությունը նույնպես սեփական թղթակցի անունից, առանց աղբյուրը նշելու, հաղորդում է հայկական կողմի 5 զոհերի, 3 վիրավորների և ադրբեջանցի զինվոր Փարվիզ Յուսուբովի վիրավորվելու մասին: Ենթադրյալ հարձակման ուղղությունը Գյուլչուլուկ գյուղն է:

Սեպտեմբերի 10-ին, 13.16-ին *Panorama.am*-ը հրապարակեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության բանակի մամլո քարտուղար Սենոր Հասրաթյանի հերքումը, որում ասվում էր, որ հայ-ադրբեջանական շփման գծում ոչ մի միջադեպ տեղի չի ունեցել: Միևնույն ժամանակ, ԼՂՀ Պաշտպանության բանակի ներկայացուցիչը սույն տեղեկատվությունը բացատրել է որպես այն միջադեպը քողարկելու փորձ, որը տեղի էր ունեցել ադրբեջանական բանակում ոչկանոնադրական հարաբերությունների հետևանքով:

Անմիջապես այս հայտարարությունից հետո Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հանդես եկավ ռազմակայաններից մեկում ադրբեջանական զինվորների ընդհարման և ծառայակցի կողմից պատահաբար զինվորներից մեկի վիրավորվելու մասին հայտարարությամբ:

Ադրբեջանական բոլոր լրատվամիջոցներից միայն *Turan* գործակալությունը սեպտեմբերի 10-ին, ժամը 13.36-ին կիրապարակի ԼՂՀ Պաշտպանության բանակի պաշտոնական հերքումը:

Այդ պահից սկսած՝ ադրբեջանական ԶԼՄ-ները դադարեցնում են տեղեկատվության տարածումն այս թեմայով: Դրա փոխարեն, ակնհայտ ապատեղեկատվություն են սկսում տարածել արտասահմանյան լրատվամիջոցները: Երեկ երեկոյան նույն բովանդակության տեղեկատվություն են տարածել *BBC*-ն, *Reuters*-ը և *Aljazeera*-ն: Ընդ որում՝ *BBC*-ն և *Reuters*-ը հաղորդում են հինգ, իսկ *Aljazeera*-ն՝ չորս զոհված հայ զինվորների մասին: Միևնույն ժամանակ, *BBC*-ին և *Aljazeera*-ն տեղեկացնում են այն մասին, որ ԼՂՀ Պաշտպանության բանակը հերքել է այս տեղեկությունները, իսկ Ադրբեջանի ՊՆ-ն հրաժարվել է մեկնաբանել դրանք:

Նույն օրը երեկոյան, ժամը 19:35-ին, *Vesti.az* կայքը զետեղում է իբր զոհված հայ զինվորների լուսանկարները՝ հետևյալ մակագրությամբ. «Զոհված հայ զինվորները»: Սրան անմիջապես պատասխանում է Հայաստանի պաշտպանության նախարարությունը՝ հաղորդելով, որ սույն տեղեկատվությունը ակնհայտ սուտ է, լուսանկարում պատկերված զինվորն էլ վրացի զինվոր է, որը զոհվել է 2008թ. օգոստոսին ռուս-վրացական պատերազմի ժամանակ, իսկ լուսանկարը վերցված է ՌԴ Կոմկուսի կայքից՝ *www.kprf.ru* (լուսանկարի բնօրինակը կարելի է գտնել այստեղ):

Այս մերկացումից հետո *Vesti.az*-ը հանում է կայքից այս սադրիչ տեղեկատվությունը, սակայն հայկական ֆորումներից մեկը հասցնում է վերատպել այն (ադրբեջանական սադրանքին կարելի է ծանոթանալ այստեղ): Ադրբեջանական *Turan* գործակալությունը, մեկնաբանելով այս իրադարձությունները, մտահոգություն է հայտնում տեղի ունեցած թյուրիմացության առնչությամբ և բացատրություններ ստանալու նպատակով կրկին դիմում է Ադրբեջանի Պաշտպանության նախարարություն: Այստեղ նորից հրաժարվում են մեկնաբանություններ, նաև գնահատական տալ ադրբեջանական ԶԼՄ-ների կազմակերպված ապատեղեկատվությանը: Այս մասին տեղեկատվությունը *Turan*-ը տարածում է սեպտեմբերի 11-ին, ժամը 13:25-ին:

Ադրբեջանական և արտասահմանյան լրատվամիջոցները, որոնք տարածել են այս կեղծ տեղեկատվությունը հորինված միջադեպի մասին, առայժմ ոչ մի հերքում կամ բացատրություն չեն տվել:

Մենք չենք զարմանա, եթե ադրբեջանական բոլոր լրատվամիջոցները *Vesti.az*-ի օրինակով հանեն իրենց կայքերից այս սադրիչ ապատեղեկատվությունը, իսկ հաջորդ օրը կրկին տարածեն այն՝ հղում կատարելով այնպիսի հեղինակավոր աղբյուրների, ինչպիսիք են *BBC*-ն, *Reuters*-ը կամ *Aljazeera*-ն:

P.S. Խորհուրդ ենք տալիս ադրբեջանական ԶԼՄ-ներին չշտապել ոչնչացնել սեփական ապատեղեկատվության հետքերը, քանի որ Panorama.am գործակալությունը պահպանել է այդ հրապարակումների սքրինշոթերը *(screenshot)*:

P.S.-1. Ադրբեջանական ԶԼՄ-ների հարձակումն այսքանով չավարտվեց, այն լուրջ զարգացումներ ունեցավ, որոնց կանդրադառնանք հաջորդ հրապարակումներում:

http://www.panorama.am/ru/politics/2009/09/12/info/

ՀԵՅԴԱՐ ԱԼԻԵՎԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Արթուր Աթանեսյան

Ադրբեջանում հակահայկական տեղեկատվական գործողություններ իրականացնում են ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական կազմակերպությունները, որոնց մի մասն օգտվում է պետության հովանավորությունից: Դրանց շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Հեյդար Ալիևի հիմնադրամը, որը, լինելով ոչ պետական կազմակերպություն, ձևավորման օրից կառավարվում է անմիջականորեն Ալիևների ընտանիքի կողմից: Հիմնադրամի նախագահն է ակտիվ քաղաքական գործիչ Մեհրիբան Ալիևան՝ նախագահ Իլհամ Ալիևի կինը, իսկ Ռուսաստանի Դաշնությունում հիմնադրամի ներկայացուցչությունը գլխավորում է նրանց դուստր Լեյլա Ալիևան:

Հիմնադրամը, սերտորեն համագործակցելով պետական և այլ կառույցների հետ (նախագահի աշխատակազմ, Ազգային անվտանգության նախարարություն, Ադրբեջանի Գիտությունների ազգային ակադեմիա և արտերկրում դիվանագիտական ներկայացուցչություններ), սպասարկում է Ադրբեջանի քաղաքականության հիմնական ուղղությունները և առաջին հերթին՝ հակահայկական քարոզչությունը ԼՂՀ հակամարտության համատեքստում: Հիմնադրամը ֆինանսավորում է բազմալեզու գրականության՝ գրքերի, ամսագրերի ու բրոշյուրների հրատարակում, տարբեր երկրներում դրանց տարածումը, Ադրբեջանում և արտերկրում միջոցառումների անցկացումը, ֆոտոցուցահանդեսների կազմակերպումը, վավերագրական ֆիլմերի նկարահանումն ու ցուցադրումը, երիտասարդական քարոզարշավների համակարգումը, ինչպես նաև ինտերնետային էջերի գործարկումը:

Ալիևի հիմնադրամը ստեղծվել է 2004թ. մայիսի 10-ին Բաքվում, կազմված է հետևյալ բաժիններից, որոնք իրենց հերթին ունեն ենթաբաժիններ.

Հումանիտար ծրագրերի բաժին.

- Մշակույթ և զբոսաշրջություն
- Սոցիալական քաղաքականություն
- Կրթություն, երիտասարդության և սպորտի հարցեր:

Միջազգային հարաբերությունների բաժին.

- Հարաբերություններ միջազգային կազմակերպությունների հետ
- Հարաբերություններ ԱՊՀ պետությունների հետ
- Հարաբերություններ արտասահմանյան պետությունների հետ:

Հասարակական հարաբերությունների բաժին.

- Հարաբերություններ իրավական և ֆիզիկական անձանց հետ
- Հարաբերություններ զանգվածային լրատվամիջոցների հետ:

Գործառնական բաժին.

- Գլխավոր բաժանմունք
- Վերլուծական-տեղեկատվական բաժանմունք
- Քարոզչության և հետազոտության բաժանմունք
- Անվտանգության բաժանմունք
- Մարդկային ռեսուրսների բաժանմունք
- Տնտեսական բաժանմունք
- Արձանագրային բաժանմունք:

Ինչպես տեսնում ենք, հիմնադրամը ներկայացվում է որպես հիմնականում գիտամշակութային գործունեությամբ զբաղվող կազմակերպություն, որի նպատակներից են, օրինակ՝ *մուղամների* ադրբեջանական ծագման վերաբերյալ գովազդը, մշակութային, երիտասարդական և մարզական ծրագրերի իրականացումն ու ֆինանսավորումը:

Մինչդեռ Ալիևի հիմնադրամի գործունեությունում գերակայողը հակահայկական քարոզչությունն է տեղական, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում: Այդ քարոզչությունը համապարփակ է, այն գործում է գրեթե բոլոր հնարավոր ուղղություններով՝ ընդգրկելով քաղաքական, տնտեսական, պատմամշակութային, հոգևոր, կրթական, տեղեկատվական ոլորտները: Հիմնադրամն Ադրբեջանում և արտասահմանում տեղի ունեցող յուրաքանչյուր գործընթացին ձգտում է հաղորդել հակահայկական բնույթ: Կառույցն իրականացնում է Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականության տեսանկյունից կարևորագույն գործառույթ. այն կենտրոնացված սկզբունքով ուղղորդում, վերահսկում, ֆինանսավորում և գաղափարախոսական աջակցություն է ցուցաբերում երկրում և նրա սահմաններից դուրս գտնվող կազմակերպություններին ու անհատներին, որոնք իրականացնում են հակահայկական քարոզչություն:

Հիմնադրամի գործունեության կիզակետերից են ԼՂՀ հակամարտության ենթատեքստում Հայաստանի և հայերի ներկայացումն իբրև «ագրեսիվ, բռնի, նվաճողական քաղաքականություն իրականացնողներ», իբրև «Խոջալուի

ցեղասպանությունն» իրականացրածներ», «ահաբեկիչներ» և այլն: Կառույցի ջանքերը հատկապես ուղղված են, այսպես կոչված, «Խոջալուի ցեղասպանության» առասպելի գովազդմանը, այդ մասին տեղեկատվության հորինմանն ու տարածմանը լայն լսարանի շրջանում՝ օգտագործելով բոլոր հնարավոր զանգվածային տեղեկատվական ալիքներն ու միջանձնային շփումները: Հիմնադրամն այդ ուղղությամբ լայնածավալ աշխատանքներ է կատարում, որոնցից նշենք հետևյալները.

1. «Խոջալուի ցեղասպանության տարելիցը» պաշտոնապես նշվում է մոտ 50 երկրում գտնվող ադրբեջանական դեսպանատներում և հյուպատոսություններում:
2. Կազմակերպվում են «Խոջալուի ցեղասպանությանը» նվիրված միջոցառումներ տարբեր պետությունների մայրաքաղաքներում և խոշոր քաղաքներում, օրինակ՝ Վաշինգտոնում, Նյու Յորքում, Լոնդոնում, Դուբայում, Կիևում, Մոսկվայում, Վարշավայում, Ստրասբուրգում, Փարիզում, Անկարայում, Ստամբուլում, Թբիլիսիում և Բուխարեստում:
3. Ստեղծվել է «Խոջալուի ցեղասպանությունը» ֆիլմը, կառույցի կողմից կազմակերպվել է «Խոջալուն երեխաների աչքերով» ցուցահանդեսը, որի համար նկարները պատրաստել են ադրբեջանցի դպրոցականները՝ ազդված լինելով ադրբեջանական դպրոցական դասագրքերում իրենց ակտիվորեն մատուցվող և պարտադրվող պետական հայատյաց քարոզչությունից:
4. Հիմնադրամի կողմից ֆինանսավորվում է բազմաթիվ քարոզչական գրքերի հրատարակումը, այդ թվում՝ «Պատերազմն ընդդեմ Ադրբեջանի. կիզակետում է մշակութային ժառանգությունը» գիրքը՝ հրատարակված անգլերեն լեզվով և միտված օտարերկրյա լսարանին: Նման գրքերում Ադրբեջանը ներկայանում է որպես «հին ժողովուրդ՝ համաշխարհային կարևորություն ունեցող մշակութային ժառանգությամբ», որի դեմ Հայաստանը «պատերազմ է իրականացնում»:
5. Կառույցի կողմից հարյուր հազարավոր տպաքանակով հրատարակվում և լայնորեն տարածվում են հակահայկական ուղղվածության բուկլետներ: Դրանց հիմնական թեմաներն են՝ «Ղարաբաղի պատմությունը», «Խոջալուի ցեղասպանությունը», «Ղարաբաղյան հակամարտության պատճառները», «Հայկական ագրեսիայի հետևանքները», «Հայկական ահաբեկչական խմբերի գործունեությունն ընդդեմ Ադրբեջանի» և այլն: Դրանցում ԼՂՀ-ի հետ առնչվող բոլոր կարևոր հիմնախնդիրները ներկայացվում են հօգուտ Ադրբեջանի և ի վնաս ՀՀ-ի ու ԼՂՀ-ի, ինչը տեղեկատվական առումով շատ արդյունավետ է և հակազդման բացակայության պայմաններում կարող է մեծ վնաս պատճառել հայկական կողմի միջազգային կերպարին:

Նման հրատարակումները միտված են միջազգային լայն լսարանին. դրանք հրատարակվել են անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն և հունգարերեն լեզուներով և տարածվել տարբեր պետություններում: Ադրբեջանցիներից շատերն այս թերթիկներն իրենց հետ տանում են միջազգային գիտաժողովների և այլ միջոցառումների ու տարածում օտարերկրյա մասնակիցների շրջանում:

Ինչպես տեսնում ենք, Հեյդար Ալիևի հիմնադրամը ՀՀ-ի և ԼՂՀ-ի դեմ տեղեկատվական պատերազմում ուրույն և բավական պատկառելի տեղ է զբաղեցնում:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՈՐՈՇ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Դիանա Գալստյան, Արաքս Փաշայան

Ադրբեջանական հետազոտական կամ այսպես կոչված «ուղեղային կենտրոնները» (ՈւԿ) գործում են հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև ակադեմիական հաստատությունների ձևաչափով: Կենտրոնները կատարում են վերլուծություններ երկու հիմնական ուղղություններով՝ սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական: Հատկապես կարևորվում են Ադրբեջանի զարգացմանը միտված ուսումնասիրությունները, ինչպես նաև վերլուծությունները տարածաշրջանային հիմնախնդիրների վերաբերյալ: Մեծ ուշադրություն է հատկացվում ՀՀ-ին և ԼՂՀ-ին առնչվող խնդիրներին: ՈւԿ-ները պարբերաբար, հաճախ՝ միջազգային հայտնի կազմակերպությունների հետ համատեղ, կազմակերպում են ամենատարբեր թեմաներով կոնֆերանսներ, սեմինարներ:

Տիպաբանական առումով Ադրբեջանում գործող ՈւԿ-ները կարելի է ներառել երկու հիմնական խմբի մեջ.

- ՈւԿ-ներ, որոնք ստեղծվել և հովանավորվում են պետության կողմից:
- ՈւԿ-ներ, որոնք ֆինանսավորվում են միջազգային կառույցների և հիմնադրամների կողմից:

Ադրբեջանի վերլուծական կենտրոնները համագործակցում են բազմաթիվ օտարերկրյա կազմակերպությունների հետ (ՄԱԿ, Եվրախորհուրդ, ՆԱՏՕ, ԵԱՀԿ, Համաշխարհային բանկ, Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտ, Համաշխարհային առևտրային կազմակերպություն, *UNESCO,* Եվրասիա հիմնադրամ, Քարնեգիի հիմնադրամ (Նյու Յորք), Մարշալի հիմնադրամ (Գերմանիա), Ջորջ Սորոսի հիմնադրամ, *UNDP, USAID, Oxfam* և այլն:

Արևմտյան կառույցների ու հիմնադրամների կողմից ֆինանսավորվող կենտրոնների հիմնական նպատակն է աջակցել.

- Ադրբեջանում քաղաքացիական հասարակության ստեղծմանը:
- Ժողովրդավարացման գործընթացներին:

- Սոցիալ-քաղաքական ազատական բարեփոխումների իրականացմանը:
- Մարդու իրավունքների և գենդերային հավասարության պաշտպանությանը:

Պետության կողմից հովանավորվող կառույցները կարելի է դասակարգել երկու խմբի՝ ակադեմիական և ոչ ակադեմիական: Վերջինիս տիպիկ օրինակ է ԱՀ նախագահին կից ռազմավարական հետազոտությունների կենտրոնը, որը մեծ ֆինանսական ներդրումներ է ստանում պետության կողմից:

Հատկանշական է, որ Ադրբեջանում կան կովկասյան տարածաշրջանում գործող ցանցային կառույցներ, որոնք գրասենյակներ ունեն նաև Հայաստանում և Վրաստանում, ինչպես, օրինակ, Կովկասյան հետազոտությունների ռեսուրս կենտրոնը *(CRRC):* Նշենք, որ Արևմուտքի կողմից հովանավորվող հայաստանյան և ադրբեջանական վերլուծական կենտրոնների տրամաբանությունը, ֆինանսավորումը և թիրախային նպատակներն ընդհանուր առմամբ համընկնում են: Ադրբեջանում գործում են գրեթե նույն դրամաշնորհային ծրագրերը, ինչ Հայաստանում և հետխորհրդային այլ երկրներում:

Ստորև ներկայացնում ենք տեղեկատվություն ադրբեջանական մի քանի առաջատար վերլուծական կենտրոնների մասին:

ԱՀ նախագահին կից ռազմավարական հետազոտությունների կենտրոն

Կենտրոնը թեև ընդամենը 2 տարվա պատմություն ունի (հիմնադրվել է 2007թ. նոյեմբերին, Իլհամ Ալիևի հրամանով), սակայն արդեն աչքի է ընկել ակտիվ գործունեությամբ: Հիմնադիր փաստաթղթում նշվում է, որ կենտրոնի ստեղծումը պայմանավորված է Ադրբեջանի կառավարչական համակարգի կատարելագործմանը միտված վերլուծությունների, հասարակական-քաղաքական վերլուծությունների պատրաստման անհրաժեշտությամբ: Ըստ վերոնշյալ փաստաթղթի՝ կենտրոնի աշխատակիցների թիվը հասնում է 30-ի: Ղեկավարն է Էլիան Նուրիևը[1], որը երկար տարիներ աշխատել է Եվրոպայի և ԱՄՆ հետազոտական-վերլուծական կենտրոններում: Նուրիևը տիրապետում է դինամիկ հետազոտությունների իրագործման և այդ հետազոտությունների

[1] *Էլիան Նուրիև* - քաղաքագետ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Ավարտել է Ադրբեջանի մանկավարժական ինստիտուտի (այժմ, Լեզուների պետական համալսարան) անգլերեն և ֆրանսերեն լեզուների ֆակուլտետը: Այնուհետև սովորել է Պակիստանի Արտաքին գործերի դիվանագիտական ակադեմիայում և Գերմանիայի Գյոթեի անվան համալսարանում: Աշխատել է Ադրբեջանի ԱԳՆ-ում, ԱՄՆ Ջ.Վաշինգտոնի անվան համալսարանում, Գերմանիայի Խաղաղության և հակամարտությունների ինստիտուտում: 2001-2004թթ. եղել է Հարավային Կովկասում հակամարտությունների կարգավորման «Համագործակցություն հանուն խաղաղության» կոնսորցիումին կից գործող փորձագիտական խմբի համանախագահ:

արդյունքները գործնականում ներդնելու մեթոդաբանությանը: Կենտրոնն աշխատում է մի քանի հիմնական ուղղություններով: Դրանցից է, օրինակ, տեղական, տարածաշրջանային և միջազգային քաղաքական գործընթացների ուսումնասիրությունը: Այդ հետազոտությունների արդյունքում կազմվում են ներքին և արտաքին քաղաքականությանն առնչվող քաղաքական ծրագրեր: Կենտրոնի գործառույթների մեջ է մտնում նաև իշխանության մարմինների և այլ հետազոտական ինստիտուտների գործունեության համակարգումը:

Կենտրոնի գործունեության կարևոր մասն է կազմում միջազգային հանրությանը ԼՂՀ-ի վերաբերյալ «ճշմարիտ» տեղեկատվություն տրամադրելը: Այս համատեքստում կարևորվում է հայագիտության կենտրոնի ստեղծումը: Ինչպես հարցազրույցներից մեկում հայտարարել է Նուրիևը, կենտրոնում աշխատում են հայերենին տիրապետող, հայերի պատմությանը, հոգեբանությանը, մտածելակերպի նրբություններին քաջատեղյակ մասնագետներ: Կենտրոնն իրագործում է հայկական գրքերի, ԶԼՄ-ի, Հայաստանի և Սփյուռքի հասարակական-քաղաքական գործիչների ելույթների մոնիթորինգ: Նախատեսվում է նաև «Հայկական հարցի» տարբեր ասպեկտների վերաբերյալ մենագրությունների հրատարակում, ինչպես նաև «Հայկական հարցի», այդ թվում նաև «Ղարաբաղյան հակամարտության լուծման հայեցակարգի» մշակում:

Կարճատև գոյության ընթացքում կենտրոնը հասցրել է կազմակերպել մի քանի միջազգային կոնֆերանս Մոսկվայում, Բաքվում, Լոնդոնում, Բեռլինում և այլուր:

Կենտրոնի կարգախոսն է. «Մեր խնդիրը Ադրբեջանի ազգային անվտանգության ապահովումն է»:

«Տնտեսական և սոցիալական զարգացման կենտրոնը»

(Center for Economic & Social Development (CESD)

Հիմնադրվել է 2005թ. հունվարի 1-ին: Կենտրոնի ղեկավարն է Վուգար Բայրամովը[2]: Կենտրոնը ստեղծվել է ժամանակակից Ադրբեջանի տնտեսական, սոցիալական, էներգետիկ, հաղորդակցային, ֆինանսական ոլորտները հետազոտելու նպատակով, աջակցում է սոցիալ-տնտեսական ոլորտներում գործնական նախագծերի իրականացմանը: *CESD*-ն մշակել է Ադրբեջանում աղքատության վերացման, սոցիալ-տնտեսական ռեֆորմների, նավթային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և նշված ոլորտներում այլ խնդիրների վերաբերող ծրագրեր ու առաջարկներ: Այն խորհրդատվական տեղեկատվու-

[2] *Վուգար Բայրամով* - տնտեսական գիտությունների թեկնածու, ավարտել է Ադրբեջանի պետական տնտեսագիտական համալսարանը, ուսումը շարունակել ԱՄՆ-ում: Աշխատել է Տնտեսական հետազոտությունների կենտրոնում, Ադրբեջանի պետական տնտեսագիտական համալսարանում, *"Azadliq"* թերթում:

թյուն է տրամադրում Ադրբեջանի կառավարությանը:

Երկրի առաջատար ՈւԿ-ներից մեկը համարվող կենտրոնը համագործակցում է Ջերման Մարշալի հիմնադրամի, Եվրասիա հիմնադրամի, Համաշխարհային բանկի, Համաշխարհային առևտրային կազմակերպության, Տնտեսական զարգացման միջազգային ասոցիացիայի և այլ միջազգային կառույցների հետ: *CESD-ն* ընդգրկված է *NIRA*[3]-ի (*National Institute for Reserach Advancement* - Հետազոտությունների առաջխաղացման ազգային ինստիտուտ) ցուցակում և մեկ այլ կենտրոնի՝ Տնտեսական հետազոտությունների կենտրոնի (2006-ից՝ Գիտական հետազոտությունների և տնտեսական ռեֆորմների ինստիտուտ) հետ միասին ընդգրկված է *PASOS*[4]-ի (*The Policy Association for an Open Society* - Բաց հասարակության պաշտպանության հասարակական ասոցիացիա) կազմի մեջ:

2009թ. առաջին կիսամյակում *CESD*-ն կազմակերպել է 12 սեմինար Ադրբեջանի տարբեր շրջաններում և 2 միջազգային կոնֆերանս («Ասիայի և Եվրոպայի երկընտրանքի մեջ. Կենտրոնական Ասիայի հնարավորությունները», Համաշխարհային առևտրի կազմակերպության *(WTO)* հետ համատեղ կոնֆերանս՝ Հոնկոնգում), հրատարակում է զեկույցներ և գրքեր:

«Տնտեսական և սոցիալական զարգացման կենտրոնը» ադրբեջանական վերլուծական այլ կենտրոններից տարբերվում է հետևյալով.

- Հրատարակում է ռազմավարական զեկույցներ կառավարության քաղաքականության վրա ներազդելու նպատակով:
- Ունի ամենամեծ և բազմազան ցանցը տեղական (ներառված են Ադրբեջանի գրեթե բոլոր վերլուծական կենտրոնները և համալսարանները) և միջազգային մակարդակներում:

Կենտրոնը հավակնում է դառնալ դպրոց այն երիտասարդ մասնագետների համար, որոնք կարող են կարևոր դերակատարում ունենալ քաղաքական համակարգի զարգացման գործում:

[3] *NIRA*-ն ճապոնական անկախ հետազոտական ինստիտուտ՝ «ուղեղային կենտրոն» է: Հիմնադրվել է 1974թ. Տոկիոյում: Նպատակն է համակարգել անկախ հետազոտությունները՝ նպաստելով տարբեր հիմնախնդիրների լուծմանը: Այդ հիմնախնդիրները ներառում են հարցերի բավական լայն շրջանակ՝ սկսած ներքին և արտաքին քաղաքականությունից, տնտեսությունից, մինչև հասարակությանը և կառավարման համակարգին առնչվող զանազան խնդիրներ:

[4] *PASOS*-ի հիմնադիր ժողովը տեղի է ունեցել 2004թ. հունիսի 18-ին Մոլդովայում: Այս կառույցը պետք է նպաստի բաց հասարակության այնպիսի արժեքների պահպանմանը, ինչպիսիք են ժողովրդավարությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը: Այն նախատեսում է տնտեսական և հասարակական աջակցություն այնպիսի օբյեկտներին, որոնք ինչպես առանձին-առանձին, այնպես էլ համատեղ կնպաստեն հասարակական քաղաքականության մեջ հասարակության ներգրավվածությանը:

Այն նաև ակտիվ աշխատում է կամավորների հետ: Այժմ 8 կամավորներ ընդգրկված են կենտրոնի ընթացիկ աշխատանքներում, և նրանց թիվն աճելու միտում ունի:

Խաղաղության և դեմոկրատիայի ինստիտուտ

(Institute of Peace and Democracy - IPD)

Այս ՈւԿ-ի ստեղծման նախաձեռնողը Լեյլա Յունուսովան[5] է: *IPD*-ն հիմնադրվել է 1995թ.՝ որպես Ադրբեջանի կանանց միության՝ Հանուն Անդրկովկասում խաղաղության և դեմոկրատիայի հումանիտար նախագիծ: Այդ միությունը գործում է 1994-ից՝ որպես Անդրկովկասի կանանց երկխոսության Ադրբեջանի մասնաճյուղ:

Ինստիտուտի գործունեությունն ընդգրկում է հարցերի բավական լայն շրջանակ: Այն զբաղվում է Ադրբեջանի զարգացման ուղիների, տարածաշրջանում խաղաղության պահպանման մեխանիզմների որոնմամբ, մարդու իրավունքների պաշտպանությամբ, շուկայական տնտեսության բարելավման խնդիրներով, ինչպես նաև իրականացնում է կրթական գործունեություն:

IPD-ն ունի հետևյալ բաժինները.

- Մարդու իրավունքների պաշտպանություն
- Պետություն և հասարակություն
- Կոնֆլիկտոլոգիա և միգրացիա
- Կանանց հիմնախնդիրներ
- Երիտասարդների հիմնախնդիրներ

Ինստիտուտը կազմակերպում է կոնֆերանսներ («Կանայք առանց պատերազմի կյանքի կողմնակից», «Երիտասարդությունը և հակամարտությունների խաղաղ կարգավորումը», «Իսլամը ժամանակակից Ադրբեջանում», «Եվրախորհուրդը և էթնիկ փոքրամասնությունների իրավունքները»), դասընթացներ («Կին քաղաքական գործիչները և հասարակական-քաղաքական կյանքը», «Ղարաբաղյան հակամարտությունը և դրա ազդեցությունն Ադրբեջանում բնակվող ազգային փոքրամասնությունների կենսապայմանների վրա»):

Վերոնշյալ և այլ ՈւԿ-ների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը ներկայացված է *Աղյուսակ 1*-ում:

[5] *Լեյլա Յունուսովա* - պատմական գիտությունների դոկտոր, Խորհրդային Ադրբեջանում (1988թ.) մարդու իրավունքները պաշտպանող առաջին հասարակական կազմակերպության հիմնադիր, Անկախ դեմոկրատական կուսակցության ղեկավար (1991-1996թթ.):

Աղյուսակ 1

Ադրբեջանի վերլուծական կենտրոնները

Անվանումը (ստեղծման տարեթիվը) ինտերնետային կայքը	**Ղեկավարը (աշխատակազմը)**	**Նպատակներն ու խնդիրները**	**Հրատարակությունները**	**Գործընկերներն ու դոնորները**
1. Ադրբեջանի Հանրապետության նախագահին կից ռազմավարական հետազոտությունների կենտրոն (2007թ.)	Էլիան Նուրիև (30 աշխատակից)	• Կառավարման բարելավմանն ուղղված վերլուծությունների պատրաստում, • Հասարակական-քաղաքական գործընթացների վերլուծություն, • Հայագիտական կենտրոնի ստեղծում	1. «Azerbaijan Focus» ամսագիր 2. «Պառլամենտական ընտրություններն Ադրբեջանում. ազդեցության գործոններ» 3. «Ադրբեջանի արտաքին քաղաքականությունը. ազգային անվտանգության հիմնախնդիրներ»	1. Բրիտանական հասարակական LINKS կազմակերպություն 2. Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտ 3. «Հարավային Կովկասը ճամփաբաժանին. հակամարտություններ, կասպյան նավթ և մեծ տերությունների քաղաքականություն»
2. Տնտեսական և սոցիալական զարգացման կենտրոն (2005թ.) www.cesd.az (անգլ., ադրբ.)	Վուգար Բայրամով (22 աշխատակից)	• Ադրբեջանի տնտեսական, սոցիալական, էներգետիկ, կոմունիկացիոն, ֆինանսական ոլորտներ. ուսումնասիրություն և վերլուծություն • Ադրբեջանի կառավարությանը խորհրդատվական տեղեկատվություն է տրամադրում	1. «Ադրբեջանի Հանրապետության նավթի պետական ֆոնդի ռազմավարություն»	1. Ջերման Մարշալի հիմանդրամ 2. Եվրասիա հիմնադրամ 3. Համաշխարհային բանկ 4. Համաշխարհային առևտրային կազմակերպություն
3. Խաղաղության և դեմոկրատիայի ինստիտուտ (1995թ.) www.ipd-co.hypermart.net (անգլ., ադրբ.)	Լեյլա Յունուսովա	• Խաղաղության պահպանման ճանապարհների որոնում • Մարդու իրավունքների պաշտպանություն • Աջակցություն կանանց և երիտասարդներին • Շուկայական տնտեսության զարգացում	1. Հետպատերազմյան զարգացումների դադարեցում» 2. «Ադրբեջան. ապագայի կանխատեսումներ» 3. «Ինչպե՞ս կարող է կինը պաշտպանել իր իրավունքները»	1. Խաղաղության ազգային հիմնադրամ (ԱՄՆ) 2. Ադրբեջանի արդարադատության նախարարություն
4. Կովկասի ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ (1999թ.)	Էլդար Իսմայիլով (11 աշխատակից)	• Կովկասում, այդ թվում Ադրբեջանում տեղի ունեցող աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական, սոցիալ-մշակութային, էթնիկ ինտեգրման, և դրանց հարակից այն երևույթների ու գործընթացների ուսումնասիրություն:	Կառույցը Շվեդիայում հրատարկում է 1. «Կենտրոնական Ասիա և Կովկաս» 2. «Կենտրոնական Եվրասիա» 3. «Կովկասը և գլոբալիզացիան»	1. Կենտրոնական Ասիայի և Կովկասյան հետազոտությունների ինստիտուտ (Շվեդիա) 2. Ջոն Հոփքինսի համալսարան (ԱՄՆ) 3. Վրաստանի ռազմավարական և միջազգային հետազոտությունների հիմնադրամ 4. Ադրբեջանի ԳԱԱ

Անվանումը (ստեղծման տարեթիվը) ինտերնետային կայքը	Ղեկավարը (աշխատակազմը)	Նպատակներն ու խնդիրները	Հրատարակությունները	Գործընկերներն ու դոնորները
5. Տնտեսական հետազոտությունների կենտրոն (2006թ. –ից Գիտական հետազոտությունների և Տնտեսական ռեֆորմների ինստիտուտ) (1999թ) www.erc-az.org (անգլ., ադրբ.)	Ղուբադ Իբադոզլու Բայրամով (23 աշխատակից)	• Տնտեսական ռեֆորմների ծրագրերի նախապատրաստում • Աջակցություն շուկայական արժեքի բարձրացմանը • Տնտեսական իրադարձությունների, շուկայի մեխանիզմների, շուկայի ենթակառույցների գործունեության մասին տեղեկատվության տրամադրում • Քաղաքական խորհրդատվության տրամադրում Ադրբեջանի կառավարությանը • Երկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական իրադարձությունների վերլուծություն	1. «Expert» ամսագիր (www.ekspert.az)	1. CHF (ԱՄՆ) 2 .OSI Բաց հասարակության ինստիտուտ (Ադրբեջան) 3. Եվրասիական հիմնադրամ
6. Տնտեսական և քաղաքական հետազոտությունների կենտրոն (1994թ.) www.farcenter.az (անգլ., ադրբ.)	Սաբիթ Բագիրով (7 աշխատակից)	• Երկրի տնտեսական և քաղաքական իրավիճակի վերլուծություն	1. «Ադրբեջանի նավթը. եկամուտները, ծախսերը և ռիսկերը» 2. «Ադյունահանվող արդյունաբերություն. առաջատար երկրների փորձը» 3. «Հասարակական-քաղաքական ինստիտուտներ. համաշխարհային փորձը և զարգացման հեռանկարները Հարավային Կովկասում» 4. «Ադրբեջան. ազգային գաղափարախոսության որոնումներ»	Կենտրոնն ազատ տնտեսական համացանցի անդամ է
7. Կովկասյան հետազոտությունների ռեսուրս կենտրոն (2003թ.) www.crrc.az (անգլ., ադրբ.)	Անար Ահմադով	• Կենտրոնը ռեսուրսային և թրեյնինգ կենտրոնների ցանց է, նպատակ ունի Հարավային Կովկասում, այդ թվում՝ Ադրբեջանում, զարկ տալ քաղաքագիտական և սոցիալական հետազոտությունների իրականացմանը: • Հետազոտողներին գիտական և տեղեկատվական ռեսուրսների տրամադրում, սոցիալական ոլորտի հետազոտողների և գործող քաղաքական գործիչների հետ համագործակցության հաստատում	Հրատարակում է E-bulletin-ը, բրոշյուրներ, հետազոտական նախագծեր:	1. Քարնեգիի կորպորացիա 2. Համաշխարհային բանկ 3. ՄԱԿ 4. Բաց հասարակության ինստիտուտ 5. Irex –Ադրբեջան 6. Ադրբեջանի երիտասարդ տնտեսագետների ասոցիացիա 7. Խազարի համալսարան 8. Բաքվի պետական համալսարան

Անվանումը (ստեղծման տարեթիվը) ինտերնետային կայքը	Ղեկավարը (աշխատակազմը)	Նպատակներն ու խնդիրները	Հրատարակությունները	Գործընկերներն ու դոնորները
8. Հանրային ֆինանսների մոնիթորինգի կենտրոն (2003թ.) www.pfmc.az (անգլ.)		• Հանրային ֆինանսների արդյունավետ կառավարման և դրա ռացիոնալացման հնարավորությունների ձեռքբերում, • Հասարակության առավել ակտիվ մասնակցություն հանրային ֆինանսների արդյունավետ ծախսման գործում, • Հանրային ֆինանսների առավել թափանցիկ և արդյունավետ օգտագործման ձեռքբերում՝ ի բարօրություն ժողովրդի	1. «Ֆինանսական տերմինների բառարան» 2. Թերթ «Money» 3. «Ադրբեջանի նավթային պայմանագրերը»	1. PWYP (Publish What You Pay) 2. IBP- Միջազգային բյուջետային նախագիծ 3. LGI- Տեղի կառավարության և ռեֆորմների նախաձեռնության հասարակական ծառայություն 4. PPRC-Հասարակական քաղաքականության հետազոտական կենտրոն
9. Ադրբեջանի հեռանկարային հետազոտությունների միություն (2006թ.) www.futurestudies.az (անգլ., ադրբ.)	Ռեյհան Հուսեյնովա (9 աշխատակից)	• Ներկա ուղղությունների վերլուծություն, նորերի կանխատեսում • Ադրբեջանի, ինչպես նաև Կովկասյան տարածաշրջանի զարգացման ուղղությունների մշակում հեռանկարային ուսումնասիրությունների միջազգային մոդելների կիրառման ճանապարհով	Կենտրոնի փորձագետները հրատարակում են հետազոտություններ, գրքեր	1. Հեռանկարային հետազոտությունների համաշխարհային կազմակերպություն 2. Ադրբեջանի կապի և ինֆորմացիոն տեխնոլոգիաների նախարարություն
10. Հումանիտար հետազոտությունների միություն (1997թ.) www.humanrights-az.org (անգլ., ադրբ.)	Ավազ Հասանով	• Սոցիալական գործունեություն ծավալել ցանկացողներին համապատասխան ինֆորմացիայի տրամադրում • Անհատների մասնակցության ապահովում քաղաքացիական հասարակության ձևավորման, ինչպես նաև մարդու իրավունքների, միգրացիայի հետ կապված գործընթացներին	1. «Ռուսաստանի նոր միգրացիոն քաղաքականությունը» 2. «Ադրբեջանի հասարակական կազմակերպությունների տեղեկագիր» 3. Մարդու իրավունքներն Ադրբեջանում» 4. «Ինչպես պետք է տեղական ինքնակառավարման մարմինների թեկնածուները կազմակերպեն իրենց նախընտրական քարոզարշավը» 5. «Նախընտրական քարոզարշավի հարցաթերթ»	1. ԵԱՀԿ 2. Եվրախորհուրդ 3. Երիտասարդ փաստաբանների միություն (Ադրբեջան)

Ադրբեջանի ակադեմիական հաստատությունները

Այս հաստատությունները հիմնականում զբաղվում են հետազոտական հետևյալ ուղղություններով՝ քաղաքագիտություն, պատմություն, արևելագիտություն, սոցիոլոգիա, փիլիսոփայություն, ազգագրություն, հնագիտություն, իրավունք, կրոնագիտություն և տնտեսագիտություն:

Պետք է նշել, որ ակադեմիական ինստիտուտներն անհամեմատ ավելի պակաս հնարավորություններ ունեն, քան ոչ ակադեմիական կազմակերպությունները: Առկա պետական միջոցները բավարար չեն բարձր աշխատավարձերի, կոնֆերանսների և գիտական զորձուղումների կազմակերպման, ինտերնետային կայքէջերի գործառման, գրքերի հրատարակման և գիտական մենեջմենթին առնչվող այլ հարցերի իրականացման համար: Այդ տեսանկյունից ակադեմիական գիտությունը ներկայացնող Ադրբեջանի Գիտությունների ազգային ակադեմիան բարեփոխումների լուրջ խնդիր ունեցող հաստատություն է[6]: Հատկանշական է, որ Ադրբեջանում ակադեմիական գիտության զարգացմանն օժանդակում են արևմտյան կառույցները: Որպես կանոն, Ադրբեջանի ակադեմիական կառույցները համագործակցում են ՆԱՏՕ-ի, *CORDIS*-ի *(Community Research and Development Information Service), IAEA*-ի *(International Atomic Energy Agency), NASA-ի (National Aeronautics and Space Administration)*, *UNESCO*-ի *(United Nations Educational, Scientific and Cultural Organization), INTAS*-ի *(International Association for the promotion of cooperation with scientists from the New Independent States of the former Soviet Union), ANSF*-ի *(Azerbaijan National Science Foundation), ISTC –ի (International Science and Technology Center), CRDF*-ի *(Civilian Research & Development Foundation)* հետ[7]:

Աղյուսակ 2-ը ներկայացնում է համառոտ տեղեկություններ ադրբեջանական ակադեմիական հաստատությունների մասին:

[6] Հատկանշական է, որ գիտության ոլորտն Ադրբեջանում հռչակված է որպես երկրի զարգացման առաջնահերթ ուղղություն: 2008թ. ապրիլին նախագահ Ի.Ալիևի հրամանագրով ստեղծվել է պետական հանձնաժողով գիտության ոլորտում բարեփոխումներ իրականացնելու նպատակով, ինչն առաջին հերթին ենթադրում է գիտության ոլորտի սերնդափոխություն: Իսկ 2007թ. ապրիլին նախագահի մեկ այլ հրամանագրով ստեղծվել է ադրբեջանցի երիտասարդների՝ 2007-2015թթ. արտասահմանյան երկրներում կրթություն ստանալու պետական ծրագիր:

[7] Միայն 2007-ին ԱՄՆ Քաղաքացիական հետազոտությունների և զարգացման հիմնադրամը Ադրբեջանի Գիտության ազգային հիմնադրամին տրամադրել է 2,5 միլիոն դոլար երկրում գիտության զարգացման համար, որի շրջանակներում իրականացվել է շուրջ 57 դրամաշնորհային ծրագիր, որոնցում ներգրավվել է մոտ 214 գիտնական:

Աղյուսակ 2

Ադրբեջանի ակադեմիական հումանիտար ինստիտուտները

Անվանումը (ստեղծման տարեթիվը)	Ինտերնետային կայք	Հրատարակու-թյունները	Ղեկավարը	Հետազոտվող ոլորտները
1. Զ.Բունյաթովի անվան Արևելագիտության ինստիտուտ (1958թ.)	Եռալեզու http://www.elm.az/ru/oriental/index.htm	50 մենագր., 400 հոդված	Ջոուհար Բախշալի Բախշալիևա, Բանասիրական գիտությունների դոկտոր	Թուրքագիտ. Իրանագիտ. Արաբագիտ. Իսլամագիտ.
2. Ա.Բաքիխանովի անվան Պատմության ինստիտուտ (1940թ.)	Եռալեզու http://www.science.az/ru/history/index.htm	/1997-2003թթ./ Ընթացքում 50 մենագր.	Յակուբ Միխայիլ Մահմուդով, Պատմական գիտությունների դոկտոր	Ադրբեջանի պատմություն
3. Հնագիտության և ազգագրության ինստիտուտ	Եռալեզու http://www.elm.az/ru/archaeology/index.htm	300	Մահսա Նուրբալա Ռահիմովա. Պատմական գիտությունների թեկնածու	Հնագիտ. Ազգագրութ. Նումիզմատիկա Անթրոպոլոգիա Էթնոսոցիոլոգիա Էթնոքաղաքագիտ.
4. Փիլիսոփայության և քաղաքական իրավունքի հետազոտությունների ինստիտուտ	Եռալեզու կայքէջը վերանորոգման փուլում է			
5. Մարդու իրավունքների զծով գիտահետազոտական ինստիտուտ	Եռալեզու կայքէջը վերանորոգման փուլում է			
6. Ադրբեջանի պատմության թանգարան (1920թ.)	Եռալեզու http://www.elm.az/ru/azhistorymuseum/index.htm	116	Նաիլա Մամեդալի Վելիխանլի Պատմական գիտությունների դոկտոր	Ադրբեջանի հոգևոր և նյութական մշակույթի նմուշների պահպանում, հավաքում և ցուցադրում

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՅԱԼԵԶՈՒ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ

Վահրամ Միրաքյան

Հոկտեմբերի 5-ից գործելու է Ադրբեջանի առաջին միջազգային հեռուստաալիքը՝ *«ATV International» («ATV Int»),* որն ունի նաև հայերեն հեռարձակման բաժին. տեղեկացրել է *ATV-ի* լրատվական բաժնի ղեկավար Վագիֆ Այդինօղլին[1]:

«ATV Int»-ը հաղորդումները կհեռարձակի 4 լեզվով՝ հայերեն, պարսկերեն, անգլերեն և ռուսերեն: Սկզբում հայտարարվում էր, թե հեռուստաընկերության ստեղծման նպատակը Ադրբեջանի ազգային փոքրամասնություններին իրենց լեզուներով ծրագրեր ապահովելն է[2]: Հետագայում Ադրբեջանի հեռուստատեսության ազգային հանձնաժողովը *«ATV Int»-ի* ստեղծումն արդարացրեց այն փաստով, որ Ադրբեջանի տարածքում միջազգային հեռուստաընկերությունների հեռարձակումն արգելելուց հետո անհրաժեշտ էր լրացնել բացը[3]՝ մոռանալով նշել, որ Ադրբեջանում միջազգային հեռուստաընկերությունների հեռարձակումները հայերեն կամ պարսկերեն չէին:

Հետագայում վերջնականապես խոստովանեցին, որ *«ATV Int»-ի* նպատակը քարոզչությունն է: Վագիֆ Այդինօղլին[4] նշել է, որ նոր հեռուստաալիքի գլխավոր նպատակը քարոզչությունն է, ինչի համար արդեն պատրաստվում են փաստագրական ֆիլմեր: Որ հեռուստաընկերությունը միայն քարոզչական նպատակներ ունի՝ հայտարարել է նաև *«ATV Int»-ի* փոխտնօրեն Նաթիգ Իբրահիմովը, որը նշել է, թե հայերեն լուրերը կապված են լինելու միայն Ադրբեջանի քարոզչության հետ[5]: Նա նշել է նաև, որ միջազգային հեռարձակումը կատարվելու է *Hot Bird* և *Turksat* արբանյակների միջոցով:

Հիշեցնենք, որ 2009թ. սկզբին հայտնի դարձավ, որ Թուրքիան պատրաստվում է ՀՀ Հանրային հեռուստաընկերության աջակցությամբ հեռարձակել հայալեզու հեռուստահաղորդումներ[6]:

Պետք է ենթադրել, որ *«ATV Int»* հեռուստաալիքի հիմնադրումը ադրբե-

---

[1] www.ru.apa.az

[2] /www.nv.am/, Бакинское телевидение заговорит по-армянски.

[3] "В Азербайджане появится телеканал, вещающий и на армянском языке", 05.03.2009, www.regnum.ru/news/1133789.html

[4] www.ru.apa.az

[5] www.nv.am/, Бакинское телевидение заговорит по-армянски.

[6] "В Турции вплотную взялись за армянскую культуру", http://www.regnum.ru/news/1107273.html

ջանա-թուրքական հակահայկական տեղեկատվա-հոգեբանական քաղաքականության մասն է կազմում:

Հեռուստատեսության տեղեկատվա-հոգեբանական ազդեցության առանձնահատկությունները

Հեռուստատեսությունը տեղեկատվական-հոգեբանական ազդեցության հզոր գործոններից է: Այն թույլ է տալիս ընտրել, թե ինչպես իրականացնել ազդեցությունը՝ տեքստային/վերբա՞լ, թե՞ պատկերային ձևով: Տեքստային ձևն ուղղված է ինտելեկտուալ լսարանին, որը պահանջում է փաստեր, թվեր, վիճակագրություն և այլն: Պատկերային ազդեցությունն ուղղված է ոչ մասնագիտական լսարանին, որին ավելի շատ անհրաժեշտ են հուզիչ տեսարաններ, դրամատիկ պատմություններ ու սենսացիաներ: Երկրորդ տարբերակն ավելի ազդեցիկ է, որովհետև փորձ է արվում ազդեցություն գործել զգացմունքների վրա, ենթագիտակցական մակարդակում:

Հեռուստատեսության միջոցով հոգեբանական ազդեցությունն ունի մի շարք առավելություններ և թերություններ[7]:

Առավելությունները

1. Տեսողական և վերբալ ազդեցության համատեղելիությունը:
2. Հեռուստադիտողին իրադարձությանն իրական ժամանակով ներկա լինելու հնարավորություն տալը, ինչն այն տպավորությունն է ստեղծում, թե լսարանը վկա է իրադարձությունների զարգացմանը և կարող է ինքնուրույն եզրահանգումների գալ:
3. Փաստագրական կադրերի, ֆիլմերի միջոցով ինչ-որ խնդրի քարոզմանն աջակցելը:
4. Հեռուստատեսության հաճախականությամբ հնարավոր է գրավոր տեքստեր փոխանցել, և եթե աշխարհի մյուս ծայրում հեռուստադիտողը հեռուստացույցին հատուկ սարքավորում միացնի, կարող է ստանալ քարոզչաթերթիկներ և տպագիր նյութեր (համակարգիչներն ու ֆաքսը թուլացրել են այս առավելությունը, բայց այն դեռևս կարևորությունը չի կորցրել):
5. Հեռարձակման անհնարինության պարագայում՝ նյութերի տարածում տեսամագնիտոֆոնների կամ *DVD*-ների միջոցով: Հեռուստատեսության այս առավելությունը լավագույնս օգտագործվեց 2008թ. ՀՀ նախագահի

[7] *В.Б. Вепринцев, А.В. Манойло, А.И. Петренко, Д.Б. Фролов,* “Операции информационно-психологической войны”, Краткий энциклопедический словарь-справочник. Москва, 2005, с. 62.

ընտրությունների ժամանակ, երբ ընդդիմությունը հեռուստաեթերում իր ներկայության պակասը լրացրեց *DVD*-ների միջոցով նյութեր տարածելով:

6. Զգայական հսկայական ազդեցության հնարավորություն, որը չունի որևէ այլ լրատվամիջոց:

Թերությունները

1. Հեռուստատեսային արտադրանք պատրաստելը և լսարանին ներկայացնելն ավելի թանկ է, քան ռադիոյինը կամ թերթինը:
2. Հեռուստատեսությունը ռադիոէլեկտրոնային խափանումների նկատմամբ ավելի զգայուն է, քան ռադիոն:
3. Հեռուստահաղորդում պատրաստելն ավելի բարդ, ժամանակատար և ծախսատար է, քան ռադիոհաղորդումը:

Անցյալ դարի 70-ականներից սկսված մի շարք ուսումնասիրություններ ապացուցում են, որ հեռուստացույց դիտելիս մարդը գտնվում է ֆիզիոլոգիական գրեթե նույն վիճակում, ինչ հիպնոսի ազդեցության ժամանակ[8]: Այդ պատճառով հեռուստանյութերը պատրաստվում են այնպես, որպեսզի լարված պահեն լսարանի ուշադրությունը և չթողնեն, որ հեռուստադիտողը ննջի: Մարդն աստիճանաբար կախվածության մեջ է ընկնում նման իրավիճակից:

Այսպիսով, կարելի է ենթադրել, որ ադրբեջանական հակահայկական տեղեկատվական համակարգը համալրվեց «ծանր հրետանիով»: Հնարավոր է՝ ադրբեջանցիները չկարողանան օգտագործել նորաստեղծ հեռուստաալիքը նախանշված նպատակներին համապատասխան, ինչպես որ չեն կարողանում օգտագործել ՀՀ և ԼՂՀ բնակչության համար պատրաստվող վատորակ հայալեզու ռադիոհաղորդումները: Սակայն հաջողության հասնելու հավանականություն կա, քանի որ համացանցում տեղեկատվական պայքարի կազմակերպման մեջ առաջադիմություն ունեցել են:

Ադրբեջանա-թուրքական հայալեզու հեռուստաալիքների հնարավոր վտանգները կարելի է բաժանել երկու մասի.

1. Հակահայկական տեղեկատվական գործողություններում ադրբեջանա-թուրքական տեղեկատվական դաշտի հզորացում: Նրանք ձեռք են բերում ևս մի տեղեկատվամիջոց, որն ազդեցություն կունենա հայկական տեղեկատվական դաշտում և ադրբեջանա-թուրքական համացանցային լրատվամիջոցների նման կարող է օգտագործվել հակահայկական տեղեկատվական գործողությունների ժամանակ:
2. Ազդեցություն արժեքային համակարգի վրա (երաժշտության, մշակույթի

[8] *Райнер Пацлаф,* “Застывший взгляд”, Физиологическое воздействие телевидения на развитие детей, перевод с немецкого В. Бакусева, Москва, 2003, с. 12.

միջոցով), որն ավելի խորքային վտանգներ է պարունակում: Շատ մասնագետներ (Մ.Վեբեր, Ա.Մարշալ, Վ.Պարեթո, Վ.Թոմաս) արժեքային համակարգը դիտարկում են որպես սոցիալական ձևի ամբողջության պահպանմանն անհրաժեշտ գործոն, որն արտահայտվում է սոցիալական հարաբերություններով[9]: Այս է պատճառը, որ ԽՍՀՄ մասնատման հարցում կարևոր գործոններից էր արժեքային համակարգի ճգնաժամը:

Այս պայմաններում անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել ադրբեջանական նոր քարոզչամիջոցի հնարավորություններն ուսումնասիրելու, հնարավոր ազդեցությունը թուլացնելու ուղղությամբ, որպեսզի չկրկնվի ադրբեջանական համացանցային լրատվամիջոցների օրինակը, որոնք դարձել են հայկական տեղեկատվական դաշտի անբաժան մասը:

[9] *Е. П. Белинская, О. А. Тихомандрицкая,* “Социальная психология личности”, “Академия”, Москва, 2009г., с. 94.

ՀԱՅԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Ռուբեն Մելքոնյան

Թուրքիայում մնացած Հայության բեկորների (թե՛ իսլամացված և թե՛ քրիստոնյա) թեման մեզանում տարբեր պատճառներով քիչ ուսումնասիրված և լուսաբանված հարցերից է: Հատկապես նրանց ներկայիս դրության մասին ուսումնասիրություններ սակավ են հանդիպում: Թուրքիայի տարբեր գավառներում ապրող ուծացած կամ ծպտյալ հայերի խնդիրը փակ էր և անհայտ ոչ միայն գիտական շրջանակների, այլև, օրինակ, պոլսահայերի համար, և ներկայումս տեղի ունեցող տարբեր գործընթացների արդյունքում՝ հենց պոլսահայերն են իրենց համար բացահայտումներ անում: Դրան տանող ճանապարհներից է, օրինակ, այն, որ Ստամբուլի հայկական դպրոցներ ուսանելու են գալիս գավառներում մնացած և ուծացման տարբեր աստիճաններում գտնվող հայ երեխաներ: Ինչպես տեղեկացնում են խնդրին լավատեղյակ մարդիկ, գավառահայերը նախանձախնդիր են իրենց երեխաներին հատկապես հայկական դպրոցներ ուղարկելու հարցում: Նրանք բախվում են տարբեր խոչընդոտների, որոնք, սակայն, էական ազդեցություն չեն ունենում նրանց կամարտահայտության վրա: Մայրենիի և այդ միջոցով ակունքների հանդեպ հետաքրքրությունն ուշադրության արժանի երևույթ է հատկապես այսօրվա պոլսահայ համայնքի կրթական վիճակի համատեքստում, երբ օրեցօր պակասում է հայկական դպրոցների աշակերտների թիվը:

Վերջերս Դերսիմում տեղի է ունեցել «Մնձուրյան 9-րդ փառատոնը», որին մասնակցել են երգի, պարի խմբեր: Այս փառատոնի մասին իր տպավորությունները գրի առած պոլսահայ Բագրատ Էսդուգյանը («Ակոս» թերթի աշխատակից), խոսելով Դերսիմում հայերի ներկայության մասին, ուշագրավ փաստեր է փոխանցում, որոնք հաստատում են, որ կրոնափոխ և ծպտյալ հայերի խնդրի տարբեր շերտեր դեռևս անհայտ են և, բացի այդ, Թուրքիայի հայությունը ինքնաճանաչման խնդիր ունի. *«Արդէն իսկ հարազատութիւն կը զգայի քաղաքի ժողովուրդին նկատմամբ: Նախապէս կարդացածներէս գիտէի, որ բաւական շատ էին իր նախնիներուն մէջ հայկական ծագում ունեցողները: Բայց այդ համեմատութիւնը երբեք չէի կարծեր, որ այսքան բարձր կըլլայ: ...Այլ զարմանալի երեւոյթ մըն ալ այն է, որ ոչ ոք կը փորձէ ինքնութիւնը թաքցնել:*

Ժողովուրդը համակերպած է Ալեւի կրօնքին, Քիւրտ քաղաքական շարժումներուն եւ Հայ ինքնութեան ամբողջականութեամբ ներկայանալու: Մեզ՝ պոլսահայերուս համար, անհասկնալի այս համադրութիւնը իբրեւ բնական երեւոյթ տեղ գտած է Տերսիմի ժողովուրդին մօտ: ...Անատոլուի տարածքին կարելի է հանդիպիլ հայու բէկորներու: Իսկ Դերսիմի մէջ կարելի է հանդիպիլ հայերու: Ոչ՛ թաքուն, ոչ՛ ծպտուած, ոչ՛ ալ ազգուրաց, այլ՝ պարզապէս ուրոյն, իւրահատուկ»[1]:

Սկիզբ առած և շարունակվող գործընթացը նորանոր փակ էջեր է բացում Հայոց մնացորդաց պատմության մեջ, որոնց հավաքումը և համակարգումը թույլ կտա փոքր-ինչ ամբողջական պատկերացում կազմել խնդրի վերաբերյալ: Սակայն այդ ամենը պահանջում է նաև ժամանակ, հմտություններ և ապացուցում այն անձանց տեսակետների սնանկությունը, որոնք շտապում են ժամանակից շուտ և անհիմն կամ, լավագույն դեպքում, մեկ-երկու հնացած փաստարկների վրա վերլուծություններ ու եզրակացություններ անել:

Այդպիսի փակ կամ չլուսաբանված էջերից է արդեն հանրապետական Թուրքիայում հայերի բռնի իսլամացմանն ուղղված պետական քաղաքականությունը, որի մասին առանձին դրվագներ երբեմն սպրդել են մամուլի էջերում, սակայն մենք կցանկանայինք առավելապես կոնկրետացնելով աշխարհագրությունը՝ ներկայացնել Սասունում անցյալ դարի կեսերին հայերի բեկորների հանդեպ կիրառված իսլամացման քաղաքականության որոշ տարրեր: Ավելորդ չենք համարում նշել, որ այդ մասին փաստերն անձամբ ենք գրի առել հենց տեղում իրականացրած դաշտային-հետազոտական աշխատանքների և մարդկանց հետ զրույցների արդյունքում: Սակայն, մինչև կոնկրետ խնդրին անդրադառնալը, հարկ է գոնե ընդհանուր գծերով ներկայացնել Թուրքիայի Հանրապետությունում հայերի հանդեպ կիրառված հալածանքի, բռնության քաղաքականության առանձին դրսևորումներ:

Հայտնի է, որ Թուրքիայի Հանրապետության գոյության առաջին տասնամյակներին որոշ թվով հայեր մնացել էին այդ երկրի արևելյան շրջաններում և Ստամբուլում (ըստ տարբեր աղբյուրների՝ 250-300 հազար): Փաստերը ցույց են տալիս, որ հատկապես արևելյան շրջաններում, այն է՝ պատմական Հայաստանի տարածքում մնացած հայերի նկատմամբ արդեն հանրապետական Թուրքիայի ղեկավարությունն իրականացնում էր պետական քաղաքականություն, որը շատ հաճախ չէր տարբերվում Օսմանյան կայսրության տարիներին իրականացրածից և պարունակում էր տեղահանության, աքսորի, բռնի իսլամացման դրսևորումներ: Օրինակ, 1929թ. ամռանը և դրան

[1] *Էսդուգեան Բ.,* Մնձուրի լեռները պար բռնեցին, Ակօս, 07.08.09, թիվ 697:

հաջորդող ամիսներին մոտ 30 հազ. հայ է աքսորվել Խարբերդի, Դիարբեքիրի և Մարդինի նահանգներից[2]: Թուրքիայում ԱՄՆ դեսպան Ռոբերտ Սքիների՝ 1934թ. մարտի 2-ին ԱՄՆ արտգործնախարարին ուղարկված զեկուցագրում, որը պահվել է հույժ գաղտնի դասիչի տակ, ներկայացվում են տվյալներ այդ թվականներին Թուրքիայի արևելյան շրջաններից հայերի տեղահանության մասին: Այսպես, նշվում է, որ 1934թ. սկզբներին թուրքական իշխանություն-ները սկսել են «Անատոլիայից» հայերին տեղահանել և ուղարկել Ստամբուլ: Այդ հայերը ստիպված են եղել շատ էժան գներով վաճառել իրենց ունեցվածքը, որը դեսպանը համարում է ունեցվածքը լքելուն նույնական մի բան, և գնալ Ստամբուլ, որտեղ Հայոց պատրիարքարանը, բարեգործական տարբեր ընկե-րություններ աշխատել են օգնել նրանց: Հայերի տեղահանության իրական պատճառներից է համարվում այն, որ նրանք հաջողակ գործարարներ են, ունեն լավ աշխատանք և կարողանում են գումար վաստակել, ինչն առաջաց-նում է թուրքերի խանդը: Սակայն ավելի կարևոր և հիմնական պատճառ է դիտվում այն, որ այդ ամենն իրականում «Անատոլիան» լրիվ թուրքացնելու քաղաքականության մի մասն է[3]: Այս ամենի վրա լույս է սփռում արդեն 1940-ականների սկզբին իշխող Ժողովրդա-հանրապետական կուսակցության 9-րդ բյուրոյի (որը պատասխանատու էր փոքրամասնությունների հարցերով) պատրաստած զեկույցը, որտեղ պարզորոշ երևում է պետական ապարատի վերաբերմունքը ոչ մուսուլմանների նկատմամբ[4]: Զեկույցում մասնավորապես հայերի մասին տեղ են գտել հետևյալ տեսակետները. «Հայեր. Անատոլիայում վերածվել են կամաց-կամաց սակավացող փոքր համայնքի և քաղաքական ինչ-որ եղանակով ձգտում են ավելացնել իրենց թվաքանակը: Հայերին նախ և առաջ Անատոլիայից «մաքրելով» պետք է տեղափոխել Ստամբուլ, այսպիսով հնարա-վոր կլինի վերահսկողության տակ վերցնել նաև բնակչության աճը»: Զեկույ-ցում, հենվելով պատմական փորձի վրա, նշվում է հայերին Ստամբուլ տեղա-փոխելու համար մի հիմնավորում ևս. «Այս եղանակով և՛ նրանց թվաքանակի աճը կկանխվի, և՛ վաղը, անհրաժեշտության դեպքում, նրանք ավելի հավաքա-կան ձևով կլինեն պետության աչքի առաջ և ձեռքի տակ»:

Այսպիսով, տեսնում ենք, որ պետական քաղաքականությունը միտված է եղել պատմական Հայաստանի տարածքում մնացած հայերին այդ վայրերից

[2] *Walker Christophor*, Armenia: The survival of a nation, London, 1980, p.348, նույնը տե՛ս նաև Hofmann Tessa, Armenians in Turkey today, (second edition) Uppsala, 2003, p. 15.

[3] Records of the Department of state Relating to the Internal Affairs of Turkey, 1930-1944. ամերիկյան դեսպան Ռոբերտ Սքիներից ԱՄՆ արտգործնախարարին, 867.4016 հայերը/11, Aktar A., Varlık vergisi ve "Türkleştirme" politikaları, İstanbul, 2000, s. 93.

[4] *Akar R.,* Aşkale yolcuları (Varlık vergisi ve çalışma kampları), İstanbul, 2006, s. 190.

հեռացնելուն, քանի որ իր բնօրրանում ապրող հայը պոտենցիալ վտանգ է ներկայացրել թուրքական պետությանը, իսկ նրանց հեռացնելով կամ Ստամբուլ տեղափոխելով՝ նրանք չեզոքացրել են վտանգը: Այս քաղաքականությունը գործել է համալիր, և դրա բաղկացուցիչ մասերից է եղել նաև պատմական Հայաստանի տարածքում մնացած հայերի բռնի իսլամացումը, սակայն այս ուղղությամբ գործադրվել են տարաբնույթ միջոցներ:

Խոսելով Սասունի վերապրած հայերի մասին՝ նշենք, որ տարբեր աղբյուրներում հանդիպում են կցկտուր տվյալներ, որոնք վկայում են, որ Սասունում կան Հայոց ցեղասպանության ժամանակ բռնի իսլամացված հայեր, որոնց մի մասը ծպտյալ քրիստոնյաներ են: Սակայն կան նաև փաստեր, որոնք վկայում են, որ Սասունում պահպանվել են բացահայտ քրիստոնեադավան հայեր ևս, և տարբեր են եղել նրանց փրկության ուղիները: Հայտնի է, որ Հայոց ցեղասպանությանը զուգորդել է նաև հայկական մշակութային հուշարձանների ոչնչացումը (մշակութային ցեղասպանություն), և 1915-ից հետո պատմական Հայաստանի տարածքի կիսավեր կամ ամբողջովին ոչնչացված եկեղեցիներում ու վանքերում անհնար է եղել հայ հոգևորականների ներկայությունը: Այս պայմաններում Սասունի վերապրած քրիստոնյա հայերը կրոնական ծեսերի կատարման հարցում բախվել են լուրջ խոչընդոտների: Սակայն հայ հոգևորականի բացակայության պարագայում անգամ սասունցիների շրջանում մինչև մեր օրերն են հասել քրիստոնեության մի շարք տարրեր, որոնք տարատեսակ դժվարություններով նրանք կարողացել են փոխանցել սերունդներին: Դրա ամենացայտուն վկայությունն են ամեն տարի հուլիսին դեպի Մարութա սարի Սուրբ Աստվածածին վանքի ավերակները կազմակերպվող ուխտագնացությունը, մոմավառությունը, մատաղի արարողությունը և այլն: Իհարկե, միամտություն կլինի կարծել, թե ցեղասպանությանը հաջորդած տարիներին քրիստոնեությունը պահպանած սասունցիներին հայ հոգևորականով չապահովելը միայն Հայոց պատրիարքության «անտարբերություն»-ից է բխում: Հստակ է, որ պետական լուրջ հսկողությունը թույլ չի տվել հայ հոգևորականների այցը պատմական Հայաստանի տարածքներ, իսկ երբեմն կատարված գաղտնի այցերին միշտ հաջորդել են ճնշումներ, բռնարարքներ:

Ահա այսպիսի պայմաններում գոյատևած քրիստոնեադավան սասունցիների հանդեպ արդեն 1950-ականներին սկսվում է իսլամացման մի ալիք: 1950-ականների վերջին պետական տարբեր գերատեսչությունների կողմից հայերին իսլամ ընդունելու կոչ-պահանջ է ներկայացվել, որը, սակայն, հակազդեցություն է առաջացրել սասունցիների մի մասի շրջանում, որոնք մերժել են պարտադրված կրոնափոխությունը: Սակայն ճնշումները շարունակվել են, ընդ որում՝ դրանցում ընդգրկվել են նաև ուժային կառույցները: Այս ամենի հետևանքով քրիստոնյա հայերի մի մասը, գոնե արտաքուստ, տեղի է տվել և

ընդունել իսլամ: Բռնի մեթոդներին զուգահեռ՝ թուրքական պետությունը գործի է դրել նաև այլ մեթոդներ, և առանց հոգևորականի մնացած հայկական գյուղեր են սկսել այցելել մուսուլման հոգևորականներ, շեյխեր, որոնք փորձել են համոզել տեղի բնակչությանը կամովին ընդունել իսլամ, որպեսզի հնարավոր լինի կատարել իրենց արարողությունները՝ հարսանիք, կնունք, թաղում և այլն: Այս մեթոդը նույնպես արդյունքներ է տվել, քանի որ հովվապետից զրկված հայերը ստիպված են եղել դիմել այդ քայլին: Ուշագրավ է, որ, ըստ մեր զրուցակիցների, իրենց ազգակիցների կրոնափոխությունը միանշանակ չի ընդունվել շրջապատի հայերի կողմից, որոնք անթաքույց քննադատել են կրոնափոխներին, և երբեմն դա օգնել է իսլամացման դադարեցմանը կամ դրա ծավալների նվազմանը: Ըստ տարբեր աղբյուրների՝ այդ վայրերում հայերի իսլամացման դեպքեր գրանցվել են նաև հետագայում, օրինակ՝ 1980-ականներին: Շարունակվող հալածանքները ստիպել են Սասունի վերապրած հայերի մի մասին տեղափոխվել Ստամբուլ, մի մասն ընդունել է թուրքական պետության և ստեղծված վիճակի պարտադրած կրոնը, մի մասն էլ վերածվել է ծպտյալ քրիստոնյաների:

Այս ամենը փաստում է, որ Թուրքիայի Հանրապետությունը շարունակել է Օսմանյան կայսրության որդեգրած բռնի իսլամացման քաղաքականությունը, որը, ի վերջո, տվել է իր արդյունքները, և այսօր պատմական Հայաստանի տարածքում՝ չհաշված առանձին կղզյակներ, բացահայտ քրիստոնյա հայեր գրեթե չկան:

ՀԱՅԱՑՔ ԴԻԱՐԲԵՔԻՐԻՑ՝ ՈՒՂՂՎԱԾ ԿՐՈՆԱՓՈԽ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԻՆ

*Օհան Սասունյան**

Նախապատմություն. Դիարբեքիրը (Ամեդ կամ Ամիդա) գտնվում է Թուրքիայի հարավարևելյան մասում: Բնակչությունը, որի մեծ մասը քուրդ է, կազմում է 1.5 միլիոն մարդ:

Մինչև 1915թ. քաղաքում կար մեծ հայկական թաղամաս՝ ակտիվ շուկայով, որն այրվեց Հայոց եղեռնի նախօրեին: Քաղաքը հայտնի էր Սբ. Կիրակոս եկեղեցու բարձր զանգակատնով, որը երևում էր քաղաքի ցանկացած կետից: Այսօր այդ զանգակատունն այլևս գոյություն չունի, իսկ եկեղեցին փլատակված է:

Դիարբեքիրի հայերն իրենց անվանել են տիգրանակերտցի՝ կապված Տիգրանակերտ քաղաքի հետ, որը կառուցվել է Տիգրան Մեծ թագավորի կողմից և ժամանակին եղել է Հայաստանի մայրաքաղաքը[1]:

1915թ. Դիարբեքիրի հայերի մեծ մասը տեղահանվել և կոտորվել է Դեր-Զորի ճանապարհին: Քչերին է հաջողվել փրկվել և հասնել Սիրիա կամ Լիբանան և նոր կյանք սկսել: Շատ հայ որբերի որպես ստրուկ կամ վաճառեցին արաբներին և քրդերին, կամ նրանց փրկեցին քուրդ ընտանիքներ: Նրանց անուններն ու ինքնագիտակցությունը փոխվեցին, և նրանք դարձան սուննի մուսուլմաններ: Որոշ դեպքերում ամբողջ ընտանիքներ կրոնափոխ էին լինում և ծածուկ ապրում, որպեսզի խուսափեն կոտորածից և հալածանքներից:

Մարիամի ընտանիքը. Այս ուսումնասիրության մեջ մեր ուշադրությունը կենտրոնացնում ենք դիարբեքիրցի մուսուլման հայ ընտանիքի արմատների վրա:

Այս ընտանիքը Դիարբեքիրի մոտ գտնվող Սաթի գյուղից է: Սաթին հայկական գյուղ էր, որը ուներ դպրոց և եկեղեցի: Սբ. Մարիամ եկեղեցին վերա-

---

* Ինչպես նշվել է բազմիցս, կրոնափոխ հայերի խնդիրը արդի հայագիտության ամենաքիչ ուսումնասիրված թեմաներից է, ուստի և այս ուղղությամբ արվող ցանկացած քայլ արժանի է ուշադրության: Առաջնորդվելով այս տրամաբանությամբ «Նորավանք» հիմնադրամը տպագրում է սփյուռքահայ Օհան Սասունյանի հոդվածը Դիարբեքիրի կրոնափոխ հայերի մի ընտանիքի վերաբերյալ: Հարկ ենք համարում հատուկ շեշտել, որ հոդվածը բացառապես հենված է հենց տեղում կատարված հետազոտական աշխատանքի և անձնական տպավորությունների վրա, որով էլ ավելի ուշագրավ է դառնում *(խմբ.)*:

[1] Հին Տիգրանակերտը գտնվում է Սիլվան քաղաքի մոտակայքում՝ Դիարբեքիրից 15 րոպե հեռավորության վրա: Այստեղ առ այսօր կարող ենք տեսնել հին քաղաքի պարիսպները:

փոխվել է Սաթի Ջամը մզկիթի (1940-ական թթ.)։ Ընտանիքի մեծ մոր անունը Մարիամ էր՝ ծնվ. 1901թ. Սաթիում։

Մարիամը Եղեռնի ժամանակ կորցրել էր ընտանիքը և նույն գյուղում ապաստան գտել բարեկամ քուրդ ընտանիքում։ Նա փոխեց անունը՝ դառնալով Սեկինե և իսլամ ընդունեց։ 13 տարեկանում նրան ստիպեցին ամուսնանալ այդ ընտանիքի միակ որդի Շեյխմուսի հետ։ Տարիների ընթացքում նրանք 7 երեխա ունեցան, և քանի որ վաղ հասակում ամուսնություններն ավանդույթ էին, իսկ երբեմն նաև՝ պարտադրված, այս 7 երեխան 90 տարվա ընթացքում (5 սերունդ) 250 հոգանոց ընտանիք կազմեցին։

Հետաքրքիր է, որ Շեյխմուսի ընտանիքը նույնպես հայկական արմատներ ուներ։ Նրա պապը 1860-ական թթ. Սասունից տեղափոխվել էր Դիարբեքիր և ընդունել իսլամ օսմանների հալածանքներից խուսափելու համար։

Ի տարբերություն Թուրքիայի շատ կրոնափոխ ընտանիքների՝ Շեյխմուսի նոր ընտանիքը (2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ սերունդները) տեղյակ էին իրենց հայկական արմատների մասին։ Նրանք իրենց Մարիամ տատիկից լսել էին նրա գյուղի և ընտանիքի մասին պատմություններ։ Մարիամը շատ լավ էր հիշում իր ընտանիքը և դպրոցը, կրտսեր եղբորը՝ Հարությունին, որը կորել էր 1915թ. ապրիլին։

1940-50-ական թթ. գյուղի տնտեսական վատ վիճակի պատճառով ընտանիքն աստիճանաբար տեղափոխվում է Դիարբեքիր, բայց պահպանում կապը գյուղի հետ։ Շատ տարիներ են անցնում, և չնայած ընտանիքն ապրում էր քրդերի մեջ, միևնույն է, օտար էր համարվում։

Հետաքրքրական է, որ քուրդ հարևանները նրանց անցյալի (և հայերի) մասին գիտեին ավելին, քան իրենք, բայց մեղքի զգացումը թույլ չէր տալիս նրանց ազատ խոսել։ Տարեց քրդերը գիտեին, որ իրենց ծնողներն էլ են մասնակցել Հայոց ցեղասպանությանը և որոշ չափով էլ իրենք են պատասխանատու այն ամենի համար, ինչ պատահեց նրանց հետ, ովքեր կրոնափոխ եղան։

Ընտանիքի կառուցվածքը. Ընտանիքի տարեց անդամները կրոնասեր մարդիկ էին։ Օրական 5 անգամ աղոթելը և Ռամադանին պաս պահելը սուրբ պարտավորություններ էին, որոնք պահպանվում և հարգվում էին[2]։ Մարիամի դուստրերից մեկն ամուսնու հետ նույնիսկ հաջ էր[3] կատարել Մեքքա։ Նա հաջիի (մարդ, որը հաջ է կատարել) համբավ էր վայելում իր ընտանիքի և ընկերների կողմից։

[2] Ռամադանը բոլոր մուսուլմանների սրբազան ամիսն է։ 30 օր տևող պասի և աղոթքների շրջան է, որից հետո 3 օր տոն է *(Eid el Fit)*։ Պաս պահելը և աղոթելը բոլոր մուսուլմանների կրոնական պարտավորությունն է։

[3] Մեքքան գտնվում է Սաուդյան Արաբիայում և համարվում է բոլոր մուսուլմանների սուրբ քաղաքը։ Ցանկացած մուսուլմանների համար մեծ պատիվ է կյանքում գոնե մեկ անգամ հաջ կատարելը։

Կանանց դերը հետաքրքիր էր ընտանիքում: Ընտանիքի գլուխը սովորաբար ամենատարեց տղամարդն է, բայց Մեհմեդի (Շեյխմուսի զավակի) մահվանից հետո նրա կինը՝ Բադրիեն (68 տարեկան) դարձավ ընտանիքի ղեկավարը: Չնայած Բարդրիեն այս ընտանիքի անդամ չէր, բայց հարգված կին էր[4]:

Մուսուլման ընտանիքներում (հատկապես Մերձավոր Արևելքում և Թուրքիայում) կանայք են պատասխանատու երեխաների դաստիարակության, ընտանիքի և տան հոգսերը հոգալու համար, բայց նրանք երբևիցե որոշումներ ընդունելու իրավունք չեն ունեցել: Տղամարդն է ընտանիքի գլուխը, և նրա մահվանից հետո որդին կամ եղբայրն է ստանձնում կնոջ, աղջկա կամ նույնիսկ մոր խնամքը:

Բադրիեն ծագում էր մի ընտանիքից, որի արմատներն անհայտ են: Երբ նրան հարցնում էին իր անցյալի մասին, նա ասում էր, որ հոր անունը Հայկ էր՝ իր շրջապատի համար բավական անսովոր, բայց, ամեն դեպքում, մաքուր հայկական անուն:

Շեյխմուսի դուստրերից մեկը՝ Մելիքեն, ամուսնացավ մի որբի հետ, որի անունը Ահմեդ էր, որն այժմ 67 տարեկան է և մասամբ կորցրել է հիշողությունը: Միայն հիշում է, որ իր ընտանիքն ապրում էր Վանի մոտ գտնվող գյուղերից մեկում, իսկ հոր մականունը Ջանֆիդա էր, որը զոհվել է պատերազմի ժամանակ: Այդ տարեց մարդը չէր հիշում իրենց գյուղի անունը, և թե ինչ էր նշանակում այդ մականունը: Ջանֆիդան նույնպես շատ անսովոր անուն է այս շրջապատի համար: Այսպես էին հայերն անվանում այն ազատամարտիկ-ներին (ֆիդայիներին), որոնք պաշտպանում էին իրենց գյուղերն օսմանյան բանակից և քուրդ զինյալներից (մինչև 1915թ.):

Ընտանիքում խրախուսվում էր երիտասարդ ամուսնությունն ու բազմազավակությունը: Ամեն զույգ ուներ 4-7 երեխա, իսկ 65 տարեկան Հաֆիզեն նույնիսկ ընտանեկան ռեկորդ էր սահմանել՝ ունենալով 9 երեխա: Արևելքում մեծ պատիվ է, երբ տատիկը խնամում է թոռան թոռանը՝ պատիվ, որին արժանացել էր Մարիամը մինչև իր մահը 1985թ., և պատիվ, որին հույս ունի արժանանալու Բադրիեն:

Ընտանիքում հիմնականում ամուսնանում են կամ իրենց զարմիկների, կամ էլ իրենց պես կրոնափոխների հետ: Երբ նրանց հարցնում էին պատճառների մասին, նրանք պատասխանում էին. «որպեսզի արյունը մաքուր պահենք»: Դիարբեքիրը լքած և Ստամբուլ կամ Գերմանիա տեղափոխվածների մեջ խառնամուսնությունները քրդերի, թուրքերի կամ գերմանացիների հետ ավելի շատ են: Քանի որ կտրվել են իրենց շրջապատից, ազգային պատկանելության գիտակցությունը թուլացել է, բայց, միևնույն է, նրանք կապված են իրենց ընտանիքի, գյուղի և ավանդույթների հետ:

[4] Հարսը (թուրքերեն՝ *gelin)* ընտանիքում օտար է համարվում, քանի որ եկել է ուրիշ ընտանիքից:

Երիտասարդ սերունդ. Ընտանիքի երիտասարդ անդամների մեծ մասն իրեն քուրդ է համարում, բայց երբ նրանց հարցնում են, թե որ աշիրեթին[5] են պատկանում, դժվարանում են պատասխանել:

Ընտանիքի երիտասարդ անդամներից մեկը՝ Ալին, քրդական շարժման մասնակիցներից էր և Աբդուլա Օջալանի երկրպագուներից: Սա Ենիշեհիրի՝ Դիարբեքիրի շրջաններից մեկի (որը հայտնի է քրդական շարժմանը նվիրվածությամբ) դպրոցական միջավայրի ազդեցությունն էր: Նրա ընկերները գիտեին, որ Ալին տարբերվում է իրենցից:

Երիտասարդ սերունդը նաև լավ կրթություն է ստացել: Մահմուդն (29 տարեկան) ավարտել է Դիջլեի համալսարանի ճարտարագիտական ֆակուլտետը, իսկ նրա զարմիկը՝ Ֆեյալը (25 տարեկան), իրավաբան էր և ձախ խմբի անդամ: Մյուս զարմիկը՝ Ֆեյզոն (36 տարեկան), հայտնի բժիշկ էր Դիջլեի հիվանդանոցում:

Նրանք մեծ մասամբ ազատամիտ են: Ոգելից խմիչքները տանն արգելված էին, բայց նրանք սովորաբար իրենց ընկերների հետ ժամանակ էին անցկացնում սրճարաններում և ռեստորաններում: Ոմանք խմում են հասարակական վայրերում, ոմանք էլ նախընտրում են խմել փակ դռների հետևում, իրենց մտերիմ ընկերների հետ:

Ընտանիքի երիտասարդ անդամներն զգում են, որ տարբերվում են իրենց քուրդ հարևաններից, բայց քաղաքական և տնտեսական դժվարությունները միավորում են նրանց անարդարության դեմ: Նրանք բոլորը չեն, որ սատարում են Քանդիլի լեռներում[6] գտնվող քուրդ զինյալներին, բայց այլ լուծում չեն տեսնում, քանի դեռ կառավարությունը շարունակում է հակաքրդական քաղաքականություն իրականացնել:

Ընտանիքի երիտասարդ անդամներից մեկը՝ Մահմուդը (27 տարեկան), մի քանի ընկերների հրավիրել էր բացօթյա սրճարան քաղաքի դարպասներից մեկի մոտ: Առօրյա կյանքի և քաղաքական հարցերի քննարկման ժամանակ խոսք գնաց աշիրեթների մասին: Չնայած նրանք բոլորն էլ իրենց քուրդ էին համարում, բայց ոչ ոք չկարողացավ նշել իր աշիրեթը: Միայն Ադնանը կարողացավ հստակ ասել, որ իր ընտանիքը մի ժամանակ հայկական էր, և իրենք կրոնափոխ էին եղել պատերազմի ժամանակ: Մահմուդը զարմացավ, որ իր

[5] Աշիրեթը արաբերեն բառ է և նշանակում է ցեղ: Մինչև 1915թ. քրդերն իրենց ծագման մասին խոսելիս նշում էին իրենց աշիրեթները (ցեղերը), մինչդեռ հայերը նշում էին քաղաքը, որտեղից ծագել են: Մինչ օրս քրդերն իրենց ինքնության մասին խոսելիս նշում են իրենց աշիրեթները, որոնք սփռված են Թուրքիայով, Սիրիայով, Իրաքով և Իրանով մեկ, իսկ Սփյուռքի հայերը՝ իրենց քաղաքները (մշեցի, վանեցի, տիգրանակերտցի, սասունցի, ադանացի...):

[6] Քանդիլի լեռները գտնվում են Իրաքի և Թուրքիայի սահմանին և Քուրդիստանի բանվորական կուսակցության (ՔԲԿ) զինյալների (որոնք 80-ական թթ. մարտնչում են թուրքական բանակի դեմ) կենտրոնատեղիներից է:

վաղեմի ընկեր Ադնանը հայկական ծագում ուներ: Մեկ ժամ տևած քննարկումից հետո տասը տարվա ընկերները պարզեցին, որ բոլորն էլ «բացեր» ունեն անցյալում:

Ակնհայտ է, որ նրանք բոլորն էլ անհայտ ծագում ունեին: Տարօրինակ է, բայց նրանք իրենց ավելի ազատ էին զգում միմյանց հետ ժամանակ անցկացնելուց:

Շրջապատը. Դիարբեքիրի երիտասարդությունը գրեթե նույն վերաբերմունքն ուներ կենտրոնական իշխանությունների հանդեպ: Կառավարությունը, քաղաքական պատճառներից ելնելով, տասնամյակներ շարունակ թույլ չէր տալիս, որ այդ շրջանների քաղաքների և գյուղերի մեծ մասը զարգանա: Կրթության մակարդակը շատ ավելի ցածր էր, քան Ստամբուլում կամ Անկարայում, աշխատատեղերը քիչ էին: Մինչդեռ երիտասարդների համար միակ ելքը Ստամբուլ տեղափոխվելն էր, որը գերբնակեցված քաղաք է՝ 15 միլիոն բնակչությամբ, որի 5 միլիոնը քրդեր են:

Այս ամենի հետևանքն այն է, որ երիտասարդների շրջանում իշխում են հակակառավարական տրամադրությունները: Ժամանակ առ ժամանակ Դիարբեքիրը դառնում է քրդամետ կուսակցությունների և ոստիկանության կամ բանակի հետ բախումների թատերաբեմ: Քաղաքում բազմաթիվ զորանոցներ և ոստիկանակետեր կան: Այս ամենը խոր հետք է թողնում քաղաքի երիտասարդության վրա:

Երբ տեղացիներին հարցնում են հայերի մասին, կցկտուր պատասխաններ են հնչում: Դպրոցներում դասավանդում են «այսպես կոչված Հայոց ցեղասպանության» վերաբերյալ պաշտոնական տարբերակը, որը հերքում է զանգվածային սպանությունները և մեղադրում հայերին ռուսների հետ Օսմանյան կայսրության դեմ ուղղված համագործակցության և միլիոնավոր անմեղ մուսուլմանների սպանությունների մեջ: Բայց ոչինչ չի ասվում այն մասին, թե որտեղ են այժմ այդ հայերը:

Մզկիթներում բոլոր իմամները նշանակվում են իշխանությունների կողմից: Իրենց ուրբաթօրյա քարոզներում նրանք երբեմն հայերին, հույներին և հրեաներին անվանում են անհավատ և Աստծո թշնամիներ: Իմամները անհավատներին ներկայացնում են որպես մարդիկ, որոնք հեռու են Մուհամեդից[7], սրբապիղծ են[8] և մեղքեր են գործում ռաքի վաճառելով և խմելով[9]:

[7] Մուհամեդ մարգարեն իսլամի հիմնադիրն է:

[8] Իսլամում երեխաները պետք է թլպատվեն փոքր հասակում: Սա առողջություն և մաքրություն է խորհրդանշում: Այնպես որ, մահմեդականի համար չթլպատված մարդն անմաքուր և անառողջ է:

[9] Ոգելից խմիչքներ օգտագործելն իսլամում արգելված է, դա համարվում է մեծ մեղք:

Շատերը Դիարբեքիրում Հայաստանը համարում են անհավատների երկիր, որտեղ մարդիկ փողոցներում խմում են, իսկ աղջիկները բաց շորեր են հագնում՝ միտք, որ շատ հրապուրիչ է երիտասարդների համար, բայց խիստ բացասական է ընկալվում տարեց սերնդի կողմից:

Նման շրջապատում կրոնափոխ հայերի ծածուկ կյանքը հասկանալի է դառնում: Նրանք նախընտրում են համեստ կյանք վարել և չհիշել վատ հիշողություններով լի անցյալը: Շատ դեպքերում նրանք ավելի կրոնապաշտ են, քան իսկական մուսուլմանները՝ ապացուցելու համար իրենց հավատարմությունն այս շրջապատին:

Հետևություն. Մարիամի ընտանիքն այսօր էլ ապրում է Դիարբեքիրում: Նրանք իրենց ոչ թե հայ են համարում, այլ հայկական ծագում ունեցող մուսուլման քրդեր: Նրանք շատ մոտ են քրդերին, բայց ավելի քան 90 տարվա համատեղ կյանքը չի կարողացել ուծացնել նրանց: Նրանք Թուրքիայի Հանրապետության քաղաքացի են, բայց չեն կարող իրենց դասել Թուրքիայում բնակվող 40 էթնիկ խմբերից որևէ մեկին: Ամենահեշտ տարբերակն է ասել՝ «Ես քուրդ եմ» կամ «Ես մուսուլման եմ»:

Այսպիսի ընտանիքներն ու համայնքները, որոնք ապրում են Թուրքիայում, խավարի մեջ, նման են մեծ հին մառանի, որի պարունակությունն անհայտ է, «մառանի», որն, անկասկած, պահանջում է ավելի խոր ուսումնասիրություն և բացատրություն: Մինչդեռ շատ հետազոտողներ այս ամենին «նեղ պատուհաններից» են նայել, այնինչ ոմանց եզակի հնարավորություն էր ընձեռվել հենց ներսից հետազոտելու այս ամենը, ինչն էլ հնարավոր դարձրեց սույն աշխատանքը:

Մարիամի ընտանիքը, կրոնափոխ շատ այլ ընտանիքների հետ միասին, չի կարելի հայկական անվանել, բայց չի կարելի նաև անտեսել, քանի որ այդ իրենց ընտրությունը չէր՝ դառնալ այն, ինչ կան այսօր:

«ԳԼՈԲՈՒՍ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221, տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 19.10.2009թ.
Թիվ 5 (9), 2009թ.
Տպաքանակը՝ 200։

Ֆորմատը՝ 70x100 1/16: Պայմանական 5 մամուլ։
Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում